Ի-87
Իչ
3132

# ԱԳԱԹԱՆԳԵՂԱՅ

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

ԱՇԽԱՏՈՒԹԵԱՄԲ

Գ. ՏԷՐ-ՄԿՐՏՉԵԱՆ ԵՒ ՍՏ. ԿԱՆԱՅԵԱՆՑ

ԾԱԽԻՒՔ ՏԵԱՌՆ ՍՈՒՔԻԱՍԱՑ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՊԱՐԶԵԱՆՑ

ՏՓՂԻՍ
ԱՐԱԳԱՏԻՊ ՄՆԱՑԱԿԱՆ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ
ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ՓՈՂՈՑ, 3
1909

9(47.925)
3132

# ԱԳԱԹԱՆԳԵՂԱՅ

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

---

ԱՇԽԱՏՈՒԹԵԱՄԲ

Գ. ՏԷՐ-ՄԿՐՏՉԵԱՆ ԵՒ ՍՏ. ԿԱՆԱՅԵԱՆՑ

---

ԾԱԽԻՒՔ ՏԵԱՌՆ ՍՈՒՔԻԱՍԱՑ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՊԱՐԶԵԱՆՑ

ՏՓՂԻՍ
ԱՐԱԳԱՏԻՊ ՄՆԱՑԱԿԱՆ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ
ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ՓՈՂՈՑ, 3
1909

ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

## I

## ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ ՏՊԱԳՐԵՐՆ ՈՒ ՁԵՌԱԳՐԵՐԸ

**1.** Առաջին տպագիր Կ. Պոլսի 1709—1710 թ.=*k*: Աղեքսանդր կաթողիկոսի ինքնաձեռագիրը: **2.** Երկրորդ տպագիր, Օրթագիւղ 1822-ին (1824)=*o*: Ամիրի Ձ—իրը: **3.** Երրորդ տպագիր, Վենետիկ 1835: Վենետիկի «օրինակները»: **4.** Չորրորդ տպագիր, Վենետիկ, 1862-ին: Հինգերորդ տպագիր, Թիֆլիս 1883-ին=*t*: **5.** Նոր Հայկազեան բառգիրք. Վիեննայի Մխիթարեանների կրկնագիրը. Նորայր Բիւզանդացու «Կորիւն վարդապետ»: **6.** Առաջին խմբի Ձ—րեր, կամ «կարճ» յառաջաբանով Ձ—րեր: **7.** Ա Ձեռագիր: **8.** Բ Ձ—իր: **9.** Գ Ձ—իր: **10.** Դ Ձ—իր: **11.** Ե Ձ—իր: **12.** Զ Ձ—իր: **13.** Է Ձ—իր: **14.** Ը Ձ—իր: **15.** Ամփոփումն. Առաջին խմբի Ձ—րերի ծննդաբանական պատկերը: **16.** Դրսում եղած Առաջին խմբի Ձ—րեր: Թ Ձ—իր: **17.** Ժ, Ի, Լ Ձ—րեր: Ամփոփումն: **18.** Երուսաղէմի Ձ—րեր՝ Խ, Ծ, Կ: **19.** Եգեանցի Ձ—իրը՝ Հ: **20.** Առաջին խմբի բոլոր Ձ—րերի ծննդաբանական պատկերը: **21.** Անորոշ խմբի Ձ—րեր՝ Ձ, Ղ, Ճ, Մ, Յ, Ն, Շ: **22.** Երկրորդ խմբի Ձ—րեր. *b* Ձ—իր: **23.** Եզրակացութիւններ *b*-ի մասին: **24.** Երկրորդ խմբի ուրիշ Ձ—րեր. $v^5$ *R*, $v^1$, $v^6$, *p*, *E*, *x*, $v^7$ կամ Յոյնը. Ամփոփումն եւ պատկեր Երկրորդ խմբի: **25.** Երրորդ խմբի Ձ—րեր. *a* Ձ—իր: **26.** *c* եւ $c^2$ Ձ—իր: **27.** *d* Ձ—իր. **28.** $d^2$ Ձ—իր: Ամփոփումն. Պատկեր Երրորդ խմբի եւ Ագաթանգեղոսի բոլոր Ձ—րերի: **29.** Հնագոյն ճառընտիրներ. α ճառընտիր: **30.** β ճառընտիր: **31.** Միւս ճառընտիրները. *g* եւ $g^2$ ճառընտիրներ: **32.** *h* ճառընտիր: **33.** *l* եւ *n* ճառընտիրներ: **34.** *s* ճառընտիր: **35.** *w* ճառընտիր: **36.** $w^2$ ճառընտիր: **37.** $w^3$ ճառընտիր: **38.** $w^1$ եւ *z* ճառընտիրներ: **39.** Ամփոփումն ճառընտիրների: **40.** Մեր համեմատութեան եղանակը եւ այլ հանգամանքները:

1. *Ագաթանգեղոսի Առաջին տպագրութիւնը սկսուել է Կոստանդնուպոլսում Հայոց ՌՃԾԸ (=1158) և Փրկչական 1709 թուականի մարտի 11-ին և աւարտուել է Հայոց ՌՃԾԹ (=Փրկչ. 1710) թուի ապրիլի մէկին: Ուրեմն լոյս տեսնելու բուն տարին է 1710-ը, մեզնից գրեթէ ուղիղ երկու դար առաջ: Այդ հրատարակութիւնն ունի հետևեալ ճակատը. «Գիրք վիպասանութեան՝ որ կոչի հոմանունակի Ագաթանգեղոս. Շարադրեալ զսա Ագաթանգեղոսի մեծի իմաստասիրի. Ատենադպրի Տրդատայ արքայի Հայոց: Յաղագս ծննդեան և սննդեան, և վարուց. Եւ յաճախապատում քարոզութեան սրբոյն Գրիգորի մեծի Լուսաւորչին մերոյ. Եւ Տրդատայ թագաւորին Հայոց: Յամի մարդեղութեան բանին*

կենաց. ՌՉԹ. իսկ ըստ Հայոց. ՌՃԾԸ. Եւ յամսեանն մարտի ԺԱ-երորդի։ (Տպագրութեան սկսուելու թուականն է։)

Ի յերրորդ ամի Հովուապետութեան եկեղեցւոյն Քրիստոսի, տեառն Աղեքսանդրի սրբազան կաթողիկոսին ամենայն Հայոց Սրբոյ Էջմիածնի։ Սորին հրամանաւ գաղափարեալ Տպագրեցաւ ի քաղաքիս Կոստանդինուպոլսոյ. ի տպարանի և ձեռամբ Գրիգորի դպրի որդւոյ Մկրտչի Մարզուանեցւոյ»։

Գրքի յառաջաբանում, որ կոչւում է «Ծանուցումն առ պայծառ ընթերցողսն», յիշւում են հրատարակութեան հանգամանքները։ Գլխաւոր կէտերը քաղուածաբար դնում ենք.

«Ըստ այսմ տարազու՝ շարժեալ և ազդեալ եղև գերերջանիկ և սրբազան հայրն հասարակաց (զ)Աղէքսանդր ամենայն Հայոց Հայրապետն ի վերուստ... սակս տպագրութեան գրոյս, որ կոչի Ագաթանգեղոս Պատմագիր... Յորժամ նորին հրամանաւ՝ ես նուաստ Աստուածատուր վարդապետ, ձեռնասուն աշակերտ ի մանկութենէ սոյն հայրապետին, գայի ի Նուիրակութիւն ի մայրաքաղաքս Բիւզանդիոն՝ եւ ինձ զգիրքս, զի բերեալ տացից մահտեսի Գրիգոր դպրին, որպէսզի տպեսցէ. և ՌՃԾԶ թուոջ և յամսեան ապրիլի եօթներորդի ժամանեալ հասի ի Կոստանդինուպօլիս. և տեսի զի խառվութիւնք յոլովք յուզեալ ի քաղաքիս, որպէս ամենեցունց յայտ է, յաղագս որոյ եղև խափանումն իրողութեանս մինչև ի թիւն ՌՃԾԸ. և ըստ կենարարի մերոյ ՌՉԹ ամին և յամսեանն ապրիլի։ Վասնորոյ կամ եղև, զի անդրէն յետս յղեցից զգիրքս առ վեհն ի սուրբ Էջմիածին։ Եւ ապա ոմն երկիւղած յաստուծոյ՝ Պարոն Գալուստ, որդի Խոճայ Մուրատի Ագուլեցւոյ Գողթնեաց և յաշխարհէն Հայոց. Սա յանդուլ խաղացմանէ շնորհաց հոգւոյն, տեսեալ նովիմբ զմայլեալ շարժեցաւ ի սէր աստուածային գանձին յանձն առնելով արդեամբք տալ օգնութիւն վերոյգրեալ տպագրապետ Գրիգոր դպրին զի տպեսցէ...»

Այս «յառաջաբան—ծանուցմանը» հետեւում են Գալուստի երկու ոտանաւորները, առաջինը նուիրուած Լուսաւորչին, երկրորդը՝ Աղեքսանդր կաթողիկոսին։ Երկու ոտանաւորների էլ սկզբնատառերը կազմում են «Բան Գալուստի է» ասացուածքը։ Այս հրատարակութիւնն ունի երեք պատկեր. առաջինը ներկայացնում է Աղեքսանդր կաթողիկոսին գահի վրայ բազմած, «Աղեքսանդր կաթողիկոսն բռն հարեալ գաւազանի Լուսաւորչին» ներքնագրութեամբ. երկրորդը՝ Տրդատ թագաւորին և Լուսաւորչինն է, «Տրդատէս արքայն Հայոց խոկլըն առաջ չարչարանաց Լուսաւորչին»՝ գրութեամբ. իսկ երրորդը՝ վարդապետութեան սկզբում, «Յաճախապատում վարդապետութիւն առն Աստուծոյ» ներքնագրութեամբ։ Ունի նաև խորան և զարդ բոլոր էջերում։ Սկզբին լուսանցքում ամեն էջ ունի իր բովանդակութիւնը մի երկու բառով նման այս խմբի Ձեռագրերին, որ մեր տպագրութեան մէջ զանց են առնուած։ Օրինակ՝ այսպէս. «Պատմագիր. Ժողովեն Խոսրովու զօրս բազումս. ելն Խոսրովու ի խնդիր արեանն Արտաւանայ. Յաղթահարեն Թագաւորին Պարսից ի Խոսրովու. գետահեղձ լինելն Անակայ (անյարմար ինչում դրուած). Խորհուրդ նենգութեան Անակայ. գալն Անակայ առ Խոսրով» եւայլն։ Ագաթանգեղոսի երկրորդ տպագրութեան



ժամանակ այս համառօտ լուսանցքագրութիւնները, կոկուելով և ընդարձակուելով՝ դարձել են գլխակարգութիւն և մանրամասն բովանդակութիւն ամբողջ գրքի, որն և թեթև փոփոխութեամբ տալիս ենք մեր յառաջաբանի վերջում։ Այս առաջին հրատարակութեան մէջ առանձին խմամքով, թաթերով և աստղանիշերով, ցոյց են տրուած աստուածաբանական-դաւանաբանական կարևոր ասացուածներն ու բառերը։ Ագաթանգեղոսից յետոյ Դաշանց Թուղթն է։ Հրատարակութեան վերջում կայ ընդարձակ յիշատակարան, որից քաղում ենք. «Փառք... որ ետ ինձ կարողութիւն՝ իւրոյ անպիտան ծառայիս Գրիգոր դպրի՝ ձեռնարկել ի գործ տպագրութեան այսմ... յորդախաղաց վտակիս, որ կոչի Ագաթանգեղոս... Որ այս սուրբ մատեանս թէպէտ անուանակոչութիւնն գոյր ի մէջ Հայոցս թէ Ագաթանգեղոս պատմագիրք. այլ ի յոլով երկիրս և յաշխարհս և ի բազում տեղիս և առ գրոց աշակերտս ոչ գտանիւր, զի ընթերցեալ օգտեսցին ի սմանէ... վասն որոյ վեհն հոգևոր Տէր Աղեքսանդր սրբազան կաթողիկոսն մեր իւրոյ սրքանուէր ձեռամբ գրեալ զօրինակն յղեալ առ նուաստութիւնս մեր և հրաման արարեալ զի տպագրեսցի այս սուրբ մատեանս... ի թուաբերութեան Փրկչին ՌՉԺ (=1710) և ի հայկազունեաց ՌՃԾԹ. ընդ հովանեաւ սրբուհւոյ Աստուածածնին, որ յարքայանիստ քաղաքին Բիւզանդիոյ և ի հայրապետութեան նորին տեառն Աղեքսանդրի... և ի յառաջնորդութեանս երկուց սրբոց աթոռոցն յերուսաղէմի և կոստանդինուպոլսի Իսահակ արհի եպիսկոպոսին, յերկրէն Էդուշեխու, ի տպարանի մեղապարտ Գրիգոր դպրի... եհաս աւարտումն սուրբ մատենիս. ՌՃԾԹ. ապրիլ Ա»։ Այս է հրատարակութեան բուն թուականը, այն է 1710, ապրիլ 1։ Յիշատակարանում մանրամասն յիշւում են գործին օժանդակողները—«Մուրադեան որդի» պարոն Գալուստն ու Յարութիւնը, որոնք նուիրեցին թղթի մի մասը. Էջմիածնի գանձապետ մահտեսի Պաղտասարը, որ Էջմիածնի գանձանակից օգնութիւն է արել. տպագրողի երեքտասանամեայ մանուկ Ներսէսը, որ «զյոլով աշխատանս կրեաց ի շարաբարդելն գրոց, (և) թէ ի սրբագրութիւնս ամենայն առաջափորձ թղթիցն տպմանց». տէր Ոհան յԱկնայ, գրքի սրբագրողը. աշխատաւոր մշակներ՝ Թանաք եփող Սահակը, ադուաշ Եսային, Մակարը։ Յիշւում է նաև «իշխան Խաչուկ Սահապետար աղան, որ հանդեաւ յԵրուսաղէմ ճանապարհին»... «որ շնորհեաց ինձ ութթևեան տպագրի մամուլս երկաթեան, յոյժ գեղեցիկ, միջնորդութեամբ յոհաննէս վարդապետի ամասիացոյ»։ Զանազան դասակարգի, աստիճանի, հասակի մարդկանց մի գեղեցիկ գործակցութիւն։ Տպագրում արաբական թուանշաններ չեն գործածուած. կան գաղափարագրեր, «երկինք, երկիր, աշխարհ, որպէս» եւայլն, որոնց ցանկը դրուած է էջ ԴՃԻԲ։

Այս բոլոր տեղեկութիւններից մեզ համար կարևորագոյնն է՝ տպագրին իբրև գաղափար ծառայող Ձեռագրի մասինը։ Այդ միակ Զ-ը, ինչպէս տեսանք, ընդօրինակուած է եղել նոյն ինքն Աղեքսանդր կաթողիկոսի ձեռքով Հայոց ՌՃԾԶ թուի ապրիլի 7-ից առաջ, (1707)։ Մանրամասն համեմատութիւնը, ինչպէս և առաջին ակնարկից նկատելի գրքի սկսուածքը «Ի ժամանակաց Թագաւորութեան Պարթևաց...» ցոյց

կենաց. ՌԷՃԹ. իսկ ըստ Հայոց. ՌՃԾԸ. Եւ յամսեանն մարտի ԺԱ. երորդի։ (Տպագրութեան սկսուելու թուականն է։)

Ի յերրորդ ամի Հովուապետութեան նկնդեցւոյն Տէրտեառ, տեառն Աղեքսանդրի սրբազան կաթողիկոսին ամենայն Հայոց Սրբոյ Էջմիածնի։ Սորին հրամանաւ գաղափարեալ Տպագրեցաւ ի քաղաքիս Կոստանդինուպօլսոյ. ի տպարանի և ձեռամբ Գրիգորի դպրի որդւոյ Մկրտչի Մարզուանեցւոյ»։

Գրքի յառաջաբանում, որ կոչւում է «Ծանուցումն առ պայծառ ընթերցօղսն», յիշւում են հրատարակութեան հանգամանքները։ Գլխաւոր կէտերը քաղուածաբար դնում ենք.

«Ըստ այսմ տարազու՝ շարժեալ և ազդեալ եղև գերերջանիկ և սրբազան հայրն հասարակաց (զ)Աղէքսանդր ամենայն Հայոց Հայրապետն ի վերուստ... սակս տպագրութեան գրոյս, որ կոչի Ագաթանգեղոս Պատմագիր... Յորժամ նորին հրամանաւ՝ ես նուաստ Աստուածատուր վարդապետ, ձեռնասուն աշակերտ ի մանկութենէ սորին հայրապետին, գայի ի նուիրակութիւն ի մայրաքաղաքս Բիւզանդիոյ՝ եւ ինձ գտեալ զգիրքս, զի բերեալ տացից մահտեսի Գրիգոր դպրին, որպէսզի տպեսցէ. և ՌՃԾԶ թուոյ և յամսեան ապրիլի եօթներորդի ժամանեալ հասի ի Կոստանդնուպօլիս. և տեսի զի խառվութիւնք յոլովք յուզիւր ի քաղաքիս, որպէս ամենեցունց յայտ է, յաղագս որոյ եղև խափանումն իրողութեանս մինչև ի թիւն ՌՃԾԸ. և ըստ կենարարի մերոյ ՌԷՃԹ ամին և յամսեանն ապրիլի։ Վասնորոյ կամ եղև, զի անդրէն յետս յղեցից զգիրքս առ վեհն ի սուրբ Էջմիածին։ Եւ ապա ումն երկիւղած յաստուծոյ՝ Պարոն Գալուստ, որդի Խոճայ Մուրատի Ագուլեցւոյ Գողթնեաց և յաշխարհէն Հայոց. Սա յանդուլ խաղացմանէ շնորհաց հոգւոյն, ունիմ նովիմ զմայլեալ շարժեցաւ ի սէր աստուածային գանձին յանձն առնելով արդեամբք տալ օգնութիւն վերոյգրեալ տպագրապետ Գրիգոր դպրին զի տպեսցէ...»

Այս «յառաջաբան—ծանուցմանը» հետևում են Գալուստի երկու ոտանաւորները, առաջինը նուիրուած Լուսաւորչին, երկրորդը՝ Աղեքսանդր կաթողիկոսին։ Երկու ոտանաւորների էլ սկզբնատառերը կազմում են «Բան Գալուստի է» ասացուածը։ Այս հրատարակութիւնն ունի երեք պատկեր. առաջինը ներկայացնում է Աղեքսանդր կաթողիկոսին գահի վրայ բազմած, «Աղեքսանդր կաթողիկոսն բուռն հարեալ զաւազանի Լուսաւորչին» ներքնագրութեամբ. երկրորդը՝ Տրդատ թագաւորին և Լուսաւորչինն է, «Տրդատէս արքայն Հայոց խնկիզըն առաջ չարչարանաց Լուսաւորչին»՝ գրութեամբ. իսկ երրորդը՝ վարդապետութեան սկզբում, «Յաճախապատում վարդապետութիւն առն Աստուծոյ» ներքնագրութեամբ։ Ունի նաև խորան և զարդ բոլոր էջերում։ Սորին լուսանցքում ամէն էջ ունի իր բովանդակութիւնը մի երկու բառով նման այս խմբի Ձեռագրերին, որ մեր տպագրութեան մէջ զանց են առնուած։ Օրինակ՝ այսպէս. «Պատմագիր. ժողովեն Խոսրովու զօրս բազումս. ելն Խոսրովու ի խնդիր արեանն Արտաւանայ. Յաղթահարեն թագաւորին Պարսից ի Խոսրովու. գետահեղձ լինելն Անակայ (անյարմար իջնում դրուած). Խորհուրդ նենգութեան Անակայ. գալն Անակայ առ Խոսրով» եւայլն։ Ագաթանգեղոսի երկրորդ տպագրութեան



ժամանակ այս համառօտ լուսանցքագրութիւնները, կոկուելով և ընդարձակուելով՝ դարձել են գլխակարգութիւն և մանրամասն բովանդակութիւն ամբողջ գրքի, որն և թեթև փոփոխութեամբ տալիս ենք մեր յառաջաբանի վերջում։ Այս առաջին հրատարակութեան մէջ առանձին խմաքով, թաթերով և աստղանիշերով, ցոյց են տրուած աստուածաբանական-դաւանաբանական կարևոր ասացուածներն ու բառերը։ Ագաթանգեղոսից յետոյ Դաշանց թուղթն է։ Հրատարակութեան վերջում կայ ընդարձակ յիշատակարան, որից քաղում ենք. «Փառք... որ ետ ինձ կարողութիւն՝ իբրոյ անպիտան ծառայիս Գրիգոր դպրի՝ ձեռնարկել ի գործ տպագրութեան այսմ... յորդախաղաց վտակիս, որ կոչի Ագաթանգեղոս... Որ այս սուրբ մատեանս թէպէտ անուանակոչութիւնն գոյր ի մէջ Հայոցս թէ Ագաթանգեղոս պատմագիրք. այլ ի յոլով երկիրս և յաշխարհս և ի բազում տեղիս և առ գրոց աշակերտս ոչ գտանիւր, զի ընթերցեալ օգտեսցին ի սմանէ... վասն որոյ վեհն հոգևոր Տէր Աղեքսանդր սրբազան կաթողիկոսն մեր իւրոյ սրբանուէր ձեռամբ գրեալ զօրինակն յղեալ առ նուաստութիւնս մեր և հրաման արարեալ զի տպագրեսցի այս սուրբ մատեանս... ի թուաբերութեան Փրկչին ՌԷՃԺ (=1710) և ի հայկազունեաց ՌՃԾԹ. ընդ հովանեաւ սրբուհւոյ Աստուածածնին, որ յարքայանիստ քաղաքին Բիւզանդիոյ և ի հայրապետութեան նոյն տեառն Աղեքսանդրի... և ի յառաջնորդութեանս երկուց սրբոց աթոռոցն յերուսաղէմի և կոստանդնուպօլսի Իսահակ արհեպիսկոպոսին, յերկրէն Եդուչեխու, ի տպարանի մեղապարտ Գրիգոր դպրի... եհաս աւարտումն սուրբ մատենիս. ՌՃԾԹ. ապրիլ Ա»։ Այս է հրատարակութեան բուն թուականը, այն է 1710, ապրիլ 1։ Յիշատակարանում մանրամասն յիշւում են գործին օժանդակողները—«Մուրադեան որդի» պարոն Գալուստն ու Յարութիւնը, որոնք նուիրեցին թղթի մի մասը. Էջմիածնի գանձապետ մահտեսի Պաղտասարը, որ Էջմիածնի գանձանակից օգնութիւն է արել. տպագրողի երեքտասանամեայ մանուկ Ներսէսը, որ «զյոլով աշխատանս կրեաց ի շարաբարդելն գրոց, (և) թէ ի սրբագրութիւնս ամենայն առաջափորձ թղթիցն տպմանց». տէր Ոհան յԱկնայ, գրքի սրբագրողը. աշխատաւոր մշակներ՝ Թանաք եփող Սահակը, ադուաշ Եսային, Մակարը։ Յիշւում է նաև «իշխան Խաչուկ Սահապիեար ագան, որ հանդերձ յերուսաղէմ ճանապարհին»... «որ շնորհեաց ինձ ութեւեան տպագրի մամուլս երկաթեան, յոյժ գեղեցիկ, միջնորդութեամբ յոհաննէս վարդապետի ամասիացւոյ»։ Զանազան դասակարգի, աստիճանի, հասակի մարդկանց մի գեղեցիկ գործակցութիւն։ Տպագրում արաբական թուանշաններ չեն գործածուած. կան զաղափարագրեր, «երկինք, երկիր, աշխարհ, որպէս» եւայլն, որոնց ցանկը դրուած է էջ ԴՃԻԲ։

Այս բոլոր տեղեկութիւններից մեզ համար կարևորագոյնն է՝ տպագրին իբրև գաղափար ծառայող Ձեռագրի մասին։ Այդ միակ Ձ-ը, ինչպէս տեսանք, ընդօրինակուած է եղել նոյն ինքն Աղեքսանդր կաթողիկոսի ձեռքով Հայոց ՌՃԾԶ թուի ապրիլի 7-ից առաջ, (1707)։ Մանրամասն համեմատութիւնը, ինչպէս և առաջին ակնարկից նկատելի գրքի սկսուածքը «Ի ժամանակաց թագաւորութեան Պարթևաց...» ցոյց

են տալիս, որ այս ձեռագիրը, ուստի և Առաջին տպագիրը, որ մեր հրատարակության մեջ նշանակված է k տառով՝ պատկանում են Գ-ԵԷ ձեռագրախմբին։ Այս editio princeps-ը ամենայն իրավամբ կարելի է կոչել Էջմիածնի հրատարակություն, ինչպես և մի տեղ յիշատակարանում ասված է «(Հոգին սուրբ) շնորհեաց մեզ կարողութիւն տպագրել ի տպարանիս մերում յանուն սուրբ Էջմիածնի»։

2. *Երկրորդ տպագրությունն* ունի հետևյալ ճակատը. «Ագաթանգեղոս Յորում պարունակի պատմութիւն Տրդատայ արքայի և սրբոյն Գրիգորի։ Եւ ևս աստուածախօս վարդապետութիւն նորին սրբոյն Գ-ի Լուսաւորչին մերոյ։ Վեհափառ հրամանաւ տեառն տեառն Կարապետի սրբազան և աստուածարեալ արքեպիսկոպոսի, և արժանաժառանգ պատրիարգի Թագաւորեալ մայրաքաղաքիս Կ—ոյ։ Ի տիպ արձանացեալ յամի Տեառն 1822 յՕրթագիւղ, ի տպարանի Պօղոսի Արապեան»։ Այս տպագիրն առաջին տպագրի նման ունի Հաւատամքը և Դաշանց թուղթը։ Կարճ յառաջաբանում հրատարակիչ Ճանիկ մահտեսի Սիմէոնեան տալիս է հետևյալ կարևոր տեղեկությունները։ «...Այս մատեան սքանչելի՝ թէպէտ և տպագրեալ էր ի Կոստանդնուպօլիս, յամի Տեառն 1709 (ինչպէս տեսանք աւելի ճիշտ կլինի ասել 1710), բայց քանզի անցմամբ ժամանակաց մաշեալ և պակասեալ՝ դժուարագիւտ էր ընթերցասիրաց, սմին իրի հոգացաք այժմ նորոգ տպագրութեամբ սեղանաւորել ամենեցուն, ըստ ուղղագիր օրինակին՝ զոր բարեացապարտ պատուելի Գէորգ դպիրն Պալատական՝ բաղդատութեամբ ընդ հնագիր բնաբնկագրոյն զաղափարի՝ մաքրեալ էր ի վրիպակաց և յայլայլութեանց մուծելոց յանհմտութենէ գրչաց և յանհոգութենէ տպագրողաց. ուր նա ինքեան իւրով գրչաւ գրեալ էր յիշատակարան այսու օրինակաւ. «Գիրքս որ կոչի Ագաթանգեղոս, ի բազում պղտորեալ և մթարեալ իմացուածոցն իւրոց՝ պայծառացաւ. և ի շատ պակասութեանց և թերութեանցն զերծեալ՝ լրացաւ... մեղուաջան աշխատութեամբ որումն Գէորգայ դպրի Կոստանդնուպօլսեցւոյ, (վերը կոչուեց «պալատական» այսինքն Կ. պոլսի «Պալատ» թաղից), հայելով ի ձեռագիր օրինակ ինչ վաղեմի, որ թէպէտ չունէր յայտնի ցոյց ամի գրչութեան իւրոյ թուականաւ նշանակեալ, սակայն որպէս ցուցանէր՝ արդեամբ յոյժ ընտիր էր։ Յորոյ վերայ զուն գործեալ ջան եդ, և փոխադրեաց զնոյն անպակաս առ ի տպելոյ և չակերտիւք և այլ զինչ և իցէ նշանախեցիւք զրոշմեաց ի յէջսն և ի լուսանցսն. ի քաղաքի արքայականի Բիւզանդիոնի, յամի Տեառն 1770, ի գարնան եղանակի։ Իսկ գրչեալ օրինակն գծեալ էր փոքր գրիչն յԱմիթ քաղաքի»։

Ուրեմն այս Բ. տպագիրը, բացի Ա տպագրից օգտվել է նաև Պալատցի Գէորգ դպրի կազմած բաղդատությունից, որին հիմք ծառայել է Ամիթում գրված մի անթվական ձեռագիր։ Ճանիկ մահտեսի Սիմէոնեանը Բ տպագրի լոկ հրատարակիչն է։ Այս հրատարակության գրական աշխատավորն է Գրիգոր դպիր Փեշտմալճեան, որ խնամքով օգտվել է Գէորգ դպրի բաղդատությունից, զանց առնելով նշանակել Ա տպագրի և այդ բաղդատության տարբերությունը։ Ամբողջ Ագաթան-



գեղոսը բաժանել է գլուխների և կազմել մանրամասն գլխակարգություն, դնելով նույնը և վերջում իբրև բովանդակություն գրքի։ Չհաշվելով Ագաթանգեղոսի յառաջաբանը, որ ինչպես Ա և Բ տպագրերում, նաև ԱԲԳԴՆԶԷԸ ձեռագրերում պակասում «համառօտ» յառաջաբանն է՝ Փեշտմալճեանի գլխակարգությամբ Ագաթանգեղոսի առաջին մասը (վարք և պատմություն Գրիգորի) ԼԴ գլուխ է, երկրորդ մասը (Վարդապետություն)՝ ՀԹ գլուխ, երրորդ մասը՝ ԼԸ գլուխ. ընդ ամենը ուրեմն 151 գլուխ, որ Վենետիկեան հրատարակությունը վերածել է 120 գլխի, առանց գլխակարգության և բովանդակության։ Մեր նոր հրատարակության մեջ պահեցինք վենետիկեան բաժանմունքը, կցելով դրան մեր նախաբանի վերջում և Փեշտմալճեանի բովանդակությունը (որ լոկ գլխակարգութեանց ի մի հաւաքումն է), ավելացնելով գործածողների դյուրության համար և մեր հատուածաթուերը։

Երկրորդ տպագիրը մեր նոր հրատարակության մեջ նշանակված է O տառով (=Օրթագիւղ)։ Այս Բ տպագրի հիմք կազմող Ամիթի ձեռագիրը, ինչպես երևում է մեր բաղդատություններից՝ բոլորովին մոտ է Դ ձեռագրին։ Բնագրի տեսակէտով Բ տպագիրը լավ է առաջին տպագրից և ունի շատ յաջող ընթերցվածներ։

3. *Երրորդ տպագրությունն* եղել է Վենետիկում 1835-ին։ Այս հրատարակության հիմք են ծառայել (տես հրատարակության յառաջաբանը) հետևյալ օրինակները.

Ա. Պարիզի ձեռագիրը, որի յիշատակարանն է. «Գրեալ ի Վարդանայ քահանայէ ի թուականիս Հայոց ՉԳ. (703=Փրկչական 1254) ի քաղաքին Ռիմ, ընդ հովանեաւ սուրբ տաճարին, որ յանուն սուրբ աւետարանչացն Յովհաննու և Մատթէոսի, որ էր նա հոգեւորն Հայոց»։ Այս ձեռագրի գլխավոր նորությունը՝ ամբողջական «յառաջաբան» ունենալն է, որով լրացուեց նախկին տպագրերի պակասը՝ «առ ընկերս և անուն—ժամանակաց գալոցն իցեն». (մեր հրատարակության § 2, տ. 8—§ 15, տ. 19)։ Ունի և այլ բազմաթիվ կարևոր և անկարևոր տարբերություններ։ Այս միակ հայ ձեռագիրն է, որ ունի Տիրիկէս և Կիւրակոս եպիսկոպոսների անունները, որով եպիսկոպոսների 12 թիվը լրանում է (§ 845). Նույնն ունինք այժմ նաև Մառի հրատ. Արաբ Ագաթանգեղոսից։ Միւս յատուկ յիշուած ընթերցվածներն են «մահու նուիրեցան», փխ. հին տպագրության «մահու նման երևեցան». ունին և ԱԲ (§ 482, ծ. 8) Պարիզեանի նման։ § 482, տ. 5 «ոչ ծանուցեալ», ՆԱԲ չիք ոչ. ուրեմն ունի միայն պարիզեանը. § 355, «Աստուած... անփոփոխ է». ad «անփոփոխ են», Ա «անանփոփ», Բ «անանփոխ», միւսները անփոփ։ Ուրեմն Պարիզեանը և ad-ն «անփոփոխ» ունին, մինչդեռ ԱԲ-ի խումբը նախնաբար՝ (չհաշուելով աղճատումները) «անանփոփ», որ թւում է լավագոյնը։ § 477 «Գոչեաց [Յիսուս] ի ձայն մեծ». abdԱԲ «կոչեաց իսկ Եսայի», զանազան մանր տարբերություններով (տ. ծ. 11)։ Այստեղ անշուշտ նախնաբար եղել է Յիսուս անուան տառական ձև, յետոյ դուրս ձգուած կամ շփոթմամբ Եսայի կարդացուած։ § 424 «և յետոյ անհետ՝ չէ ի միջի». ԱԲ «...անհետ չմիջի», Ն «...ոչ ի միջի», ա «...ոչինչ ի միջի»։

Որովհետև մեր հրատարակութեան մէջ t-ն է հիմք առնուած (միջնորդաբար բղխած Պարիզեանից), ուստի և այս ընթերցուածները առանց յատուկ յիշատակութեան մտել են բնագրի մէջ։ Իսկ տեղ-տեղ, երբ հարկ է համարուել յատկապէս յիշել Պարիզեանը՝ մեր տպագրի մէջ այդ նշանակուած է $v^1$ (այսինքն Վենետիկեան հրատարակութեան Ա. օրինակ)։

Բ. օրինակն է «բնաւր, գրչագիր հին, գրեալ ի Դերջան, ի թուականիս Հայոց ՉՂԹ» (799=Փրկչ. 1350)։ Այս ձեռագիրն ունի արդէն Սեղբեստրոս ընթերցուածը փոխանակ Եւսեբիոսի. (տ. մանրամասն § 875, ծ. 4)։ Ուրեմն մեզ յայտնի հնագոյն օրինակն է «Սեղբեստրոս» ընթերցածով։ Թէ Ա. թէ Բ օրինակներում չկայ «Դաշանց թուղթը»։ Մի երկու տեղ, երբ մեզ յայտնի է եղել այս Բ օրինակից ընթերցուած՝ նշանակել ենք $v^2$։

Գ. օրինակը՝ «Գրեալ յԱմիթ քաղաքի, անթուական։ Յօրինակէ առեալ է վերջին տպագիր Կոստանդնուպոլսոյ յամի Տեառն 1824»։ Պոլսի կամ Օրթագիւղի տպագիրն եղել է 1822-ին. ուրեմն 1824-ը վրիպակ է։ Բայց հետաքրքրական է, որ նոյն 1824 թուականն ունի և Զարբհանալեանը, (Մատենագրութիւն, 1883, էջ 5). նոյնը և Տաշեանը Վիեննայի Մխիթարեան ձեռագրերի Ցուցակի յանկում։ Նոյնը և «Ագաթանգեղոս առ Գէորգայ ատորի եպիսկոպոսի», էջ ա.։ Թերևս Պոլսում 1824-ին եղել է արտատպութիւն 1822-ի հրատարակութիւնից։ Յամենայն դէպս՝ մեր ձեռքին եղած Օրթագիւղի հրատարակութեան օրինակը կրում է «յամի Տեառն 1822.» (տ. վերը՝ երկրորդ տպագրութիւն)։ Վենետիկի այս օրինակը, ուրեմն Ամիթի ձեռագիրը՝ մեր հրատարակութեան մէջ նշանակուած է $v^3$։

Դ. «օրինակն է առաջին տպ. Կոստ. յամի Տեառն 1709» (=1710)։ Վենետիկի այս օրինակը մի քանի տեղ նշանակել ենք $v^4$. բուն տպագրից առնուած համեմատութիւնները, ընդարձակ չափով, մանաւանդ Ագաթանգեղոսի առաջին մասում՝ նշանակուած են k (տ. վերը առաջին տպագրութիւն)։ Ուրեմն k և $v^4$ նոյնն են։ Երկուսն էլ բղխում են Աղեքսանդր կաթողիկոսի ինքնաձեռագիր օրինակից։

Ե. «օրինակն է գրչագիր նոր՝ գրեալ ի Թուիս Հայոց ՌՃԽԶ (1146 =Փրկչ. 1697)». մեր հրատարակութեան մէջ նշանակուած է $v^5$։

Զ. «օրինակն է նոտրագիր, անկատար, գրեալ ի Լեհաստան։ Բազում մասամբք սա զհետ ընթանայ Ա. օրինակին Փարիզեան»։ Մեր հրատարակութեան մէջ նշանակուած է $v^6$։ Ուշադրութեան արժանի է այս օրինակը՝ Պարիզեանի հետ ունեցած նմանութեամբը։

Է. «Յունարէն օր. Ագաթանգեղոսի։ Ի սմա պակասի վարդապետութիւն Լուսաւորչին. և ի կարգի եւ պատմութեան ուրեք ուրեք համառօտեալ է» ևայլն. մեր այս հրատարակութեան մէջ նշանակուած է $v^7$, բայց աւելի յաճախ՝ Յոյնը։



Ուրեմն Վենետիկեան եօթն օրինակներից $v^7$, $v^4$ ձեռագիր չեն։ $v^3$ երկրորդ տպագրում (մեր հրատարակութեան մէջ նշանակուած o տառով) գործածուած ձեռագիրն է։ $v^1$ և $v^6$ Պարիզեանն է և նրան մերձաւոր ազգակից Լեհաստանում գրուած թերատ ձեռագիրը։ Սրանք Թիֆլիսի հրատարակութեամբ (=t) առնուած են մեր համեմատութեան մէջ ընդարձակ չափով։

Մնում են աւելի անծանօթ $v^5$ և $v^2$։ Բայց բարեբախտաբար $v^5$-ից մեզ ծանօթ է մի կարևոր ընթերցուած—«Տաճար փեսայ Արտաւանայ» ևայլն (տես § 121, ծ. 3), որով ապահովապէս որոշւում է, որ $v^5$ պատկանում է մեր Ն-ի խմբին։ $v^2$-ից երկու ընթերցուած է միայն մեզ յայտնի. «փառական շնմակաց» (տ. § 211, ծ. 5) և «Սեղբեստրոս» (տ. § 875, ծ. 4), որ շատ քիչ է՝ ապահովաբար խումբը որոշելու համար։

Վենետիկեան այս հրատարակութիւնը մինչև այժմ եղածներից լաւագոյնն է, թէև բաւական ուղիղ ընթերցուածներ երկրորդ տպագրից անուշադիր է թողել և իր տրամադրութեան տակ եղած ձեռագրերից շատ վայր ի վերոյ է օգտուել, առնելով նրանցից գրեթէ ոչինչ, և հետևելով միմիայն Պարիզեանին, և այս որչափ հաւատարմութեամբ՝ մեզ անյայտ է։ Հրատարակութեան վերջում (էջ 661—671) տալիս է «կարևոր» ընթերցուածների ցուցակ, մեծ մասամբ առանց նշանակելու թէ ինչ ընթերցուած ինչ Ձ—ից է։ Այս բոլոր ընթերցուածներն առնուած են մեր հրատարակութեան մէջ՝ երբ յայտնի է ձեռագիրը՝ $v^1$—$v^7$ տառերով, երբ անյայտ է ձեռագիրը՝ v տառով, առանց թուանշանի։ Ուրեմն v-ն ոչ թէ մի, այլ տարբեր ձեռագրեր է նշանակում, ուստի և միաժամանակ տեղ-տեղ ունինք մի քանի հատ v, միևնոյն բառի տարբեր ընթերցուածներ նշանակող։

4. Չորրորդ տպագրութիւն Ագաթանգեղոսի՝ Վենետիկում 1862-ին, լոկ արտատպութիւն է երրորդ տպագրից, «զուրկ նաև, Տաշեանի խօսքերով ասած, դոյզն յառաջաբանէն և վարկպարագի ձեռագրաց համեմատութենէն»։ Մի երկու տեղ, ինչպէս երևաց մեր համեմատութիւնից՝ երրորդ տպագրի վերջում եղած ընթերցուածներից մտել են սրա բնագրի մէջ։

Հինգերորդ տպագրութիւնը՝ Թիֆլիսում, 1883-ին, Հրատարակչական Ընկերութեան ձեռքով, լոկ արտատպութիւն է չորրորդ տպագրից, մի տեղ տող բաց թողած, և մի երկու վրիպակներով։ Այս տպագիրն ընտրեցինք մենք մեր համեմատութեան համար, նշանակելով t տառով, որովհետև մատչելի և համեմատաբար շատ տարածուած է ուսանողների մէջ. t-ն ուրեմն ներկայացնում է Պարիզեան ձեռագիրը, հարկաւ այն չափով՝ որ չափով որ նա գործ է ածուած Վենետիկեան հրատարակութեանց մէջ։ Չորրորդ և Հինգերորդ տպագիրները այսպիսով ձեռագրական ոչ մի նորութիւն չունին։

5. Մեր անմիջապէս գործածած ձեռագրերին անցնելուց առաջ կարևոր է մի քանի խօսք ասել և հետևեալ երկերի մասին, որոնք ձե-

ռագրական նոր նիւթ են տալիս Ագաթանգեղոսի հայ բնագրի վերականգնման համար։—Նոր Բառգիրք Հայկազեան լեզուի, երկու հատոր, 1836 և 1837 թուին Վենետիկ, (մեր հրատարակութեան մէջ նշանակուած Հայկ. Բառ.), պարունակում է բազմաթիւ վկայութիւններ Ագաթանգեղոսից, ոչ միայն տպագրերից այլ և, ինչպէս երևում ուշագիր քաղուածութիւնից՝ զանազան վենետիկեան ձեռագրերից։ Բնագիրը կազմելու ժամանակ հարկ համարեցինք մեծ չափով օգտուել այդ վկայութիւններից։ Մեր ենթադրած ազգակցութիւնը Ն ձեռագրի և $v^5$-ի (տ. վերը) հաստատուեց և Հայկ. Բառ.-ից։ Այստեղ կան վկայութիւններ, որոնք կարող են առնուած լինել մի միայն Ն-ի նման մի ձեռագրից, և որովհետև գիտենք, որ այդպիսի մէկը կայ Վենետիկում—$v^5$, ուստի և դժուար չէ մակաբերել, որ այդ վկայութիւնները բղխում են $v^5$-ից։

Վիեննայի Մխիթարեանների կրկնագիր Ագաթանգեղոսի մասին եղած տեղեկութիւններ և հրատարակուած ընթերցուածներ։ Մենք շատ քիչ բան ենք ունեցել ձեռքի տակ. քաղել ենք այն բոլոր ընթերցուածները, որ յառաջ են բերուած Զարբհանալեան Հ. Գարեգինի Հին Դպրութեան (1897) էջ 232—233, նշանակելով ք տառով։ Դժբախտաբար ձեռքի տակ չենք ունեցել Ե. Վ. Զագրճեանի աւելի կարևոր աշխատութիւնը այդ մասին (Եւրոպա լրագիր 1848, թիւ 6, 8, 9) և այս պակասը լրացնելու համար դիմեցինք Հ. Գ. Վ. Գալէմքարեանին, խնդրելով, եթէ հնարաւոր է՝ տալ մեր հրատարակութեան համար իւր պատրաստած աշխատութիւնը, ուր «վերջնականապէս ընթերցած է (կրկնագրից) այժմ ընթեռնլի ամեն էջ և ուղղած (—ամբողջն իբր 120 էջ—)... որ և այս ամենն ոչ շատ ժամանակէն ի լոյս պիտի հանէ» (տ. Տաշեան Ցուցակ. էջ 265)։ Բայց տեղեկանալով, որ Հ. Գալէմքարեանը մտադիր է առանձին հատորով հրատարակել իւր աշխատութիւնը՝ որոշեցինք առ այժմ բաւականանալ այս քչով, սպասելով որ խոստացուածը լոյս տեսնի։ Մեր ունեցած ընթերցուածներից երևում է, որ ք-ն մօտ է աւելի ՆէԱԲ խմբակցութեան, քան acdβ-ին (որոնց մասին տես վարը)։ Յուսալու է, որ այս մեր հրատարակութիւնը, բաղդատութեան նոր նիւթ տալով, դիւրացնէ կրկնագրի աւելի լրիւ վերծանութիւնը։ Կրկնագրի մասին աւելի մանրամասնութիւններ տես Տաշեան Ցուցակ № 56, էջ 261։

Նորայր Բիւզանդացու «Կորիւն վարդապետ և նորին թարգմանութիւնք, Տփղիս 1900»։ Այս մանրակրկիտ և լուրջ աշխատութեան մէջ Ագաթանգեղոսի շատ ուղղութիւններ և ընթերցուածներ կան, վերջիններս առնուած են մեծ մասամբ Եղեանի ձեռագրից։ Այս ձեռագիրը, ինչպէս տեսնելու ենք ներքևում, պատկանելով մեր ԱԲ խմբին՝ մեզ առանձին նորութիւն չէ տալիս. իսկ այն տեղերը, ուր մէջ են բերուած Բիւզանդացու սրբագրութիւնները կամ կարծիքները՝ նշանակուած են Նոր. Բիւզ. Կոր. համառօտութեամբ։ Մի քանի կարևոր դիտողութիւններ չեն առնուած մեր հրատարակութեան մէջ, մանաւանդ սկզբի մասերում, ուր աշխատեցինք ըստ կարելւոյն չհեռանալ մեր ձեռագրերի տուածներից։ Այդպիսիներից յիշելու է Բիւզանդացու առաջարկած ուղ-



ղութիւնները—«գիրս մատենագրել», փխ. «գիրս մատենագրել» (§ 7) «ընդ կոյս կոյս հարկանելոյ», փխ. «ընդ կոյս հարկանելոյ» (§ 13) են, որոնք թէև չեն արդարանում մեր ձեռագրերով՝ բայց ընդունելի են թւում։ Նոյնը պիտի ասել Բիւզանդացու առաջարկած կէտադրութեան համար. «և սատացի նոցա, ընթերցեալ զԹորգոմայ ազգիս», փխ. «և սատացի նոցա։ Ընթերցեալ...» (§ 15 և 16)։

6. Այժմ անցնենք անմիջապէս մեր ձեռքի տակ եղած ձեռագրերին։ Առաջին իսկ հայեացքից Ագաթանգեղոսի ձեռագրերը արտաքին նշաններով կարելի է բաժանել երկու մեծ խմբակցութեան։ Դրանցից առաջին խումբը, ձեռագրերի մեծամասնութիւնը, ունին առաջին և երկրորդ հրատարակութեան կարճ յառաջաբանը, § 2-ի և § 15-ի միջև եղած մեծ պակասով։ Ներքևում առաջ բերուած ԱԲԳԴԵԶԷ ձեռագրերը, նաև Ը ձեռագիրը, որ «յառաջաբանը» չունի, սակայն դատարկ թուղթ է թողել՝ յետոյ լրացնելու համար, տպագրերից Է և օ-ն, ուրեմն և դրանց հիմք ծառայող ձեռագրերը՝ Աղեքսանդր կաթողիկոսի, այժմ անյայտ, ընդօրինակութիւնը, Վենետկի $v^3$, $v^4$, Մ. Թամամշեանի և Եղեանի օրինակները. ուրեմն առ այժմ ընդամենը տասներկու ձեռագիր և երկու տպագիր, չունին յառաջաբանի մեծ հատուածը՝ «առ ընկերս և անուն—ժամանակաց գալոցն իցեն» (§ 2, ծան. 7)։ Ակներև է, որ այս պակասը առաջ է եկել մեքենապէս, ձեռագրից ամբողջ տետր դուրս ընկնելով։ Գիտակցական փոփոխութեան կամ խմբագրութեան մասին այստեղ խօսք չէ կարող լինել, քանի որ միտքը մնում է թերի և պակասն զգացւում է նոյն-իսկ առաջին ակնարկից։

Եւ իսկապէս, մանրամասն համեմատութիւնը, ամբողջ այս խմբի տուած ընթերցուածները և բոլոր առանձնայատկութիւնները անհրաժեշտ կերպով ապացուցեցին, որ այդ արտաքին նշանին համապատասխանում է և ներքինը—բոլոր գլխաւոր ընթերցուածների նոյնութիւնը, հարկաւ չհաշուած՝ ժամանակի ընթացքում բազմաթիւ ընդօրինակութիւններից հետզհետէ առաջացած սխալներն ու այլափոխութիւնները։ Եթէ մեզ հնարաւոր լինէր գտնել այս խմբի մայր ձեռագիրը՝ կարելի կլինէր առանց որևէ կորուստի դուրս ձգել հրատարակութիւնից բոլոր ընդօրինակութեանց աւելորդ ընթերցուածները։ Բայց քանի որ այդ չկայ՝ մեզ մնում է անցնել աւելի մանրամասնութեանց, տալով նախ մի մայր ձեռագրից բղխած այդ ընդօրինակութեանց համառօտ նկարագիրը և ապա իւրաքանչիւրի գնահատութիւնը և խմբակցութեանց ստորաբաժանումը։

Անմիջապէս մեր ձեռքի տակ եղած ձեռագրերը դասաւորում ենք ժամանակի կարգով, նշանակելով հայ տառերով։

7. Ա. № 1617 (Կարենեան ցուցակ 1615), մեծ. 27×18 հրդմտ։ կաշեկազմ, թուղթ, բոլորգիր, երկսիւն։ Բովանդակութիւն—Ագաթանգեղոս, Թուղթ Դաշանց, Պատմութիւն զարմից Լուսաւորչին, Տեսիլ սրբոյն Սահակայ, Պատմութիւն Եղիշէի։ Գրուած Բաղէշ, Խնդրակատար մենաստանում. գրիչ՝ Յակոբ սարկաւագ. յիշատակարան տ. մեր հրատարա-

կութեան էջ 372. այլ յիշատակարան Ագաթանգեղոսի (Հաւատամքի) վերջում այսպէս. «Փառք... որ ետ կարողութիւն տկար անձին իմոյ և մեղսամած մատանցս ծրել զպատմութիւն երից երանեալ և երջանիկ հօրն մերոյ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին ի սուրբ ուխտս Անդրակատար ի Բաղէշ քաղաքի ի թվ. ՌԺԸ (1018=1569 Փրկչական): Եւ Յակոբոս գծագրեցի ձեռամբ իմով, որ յետինս եմ ի չարս բանաւորաց, անուամբ սարկաւագ...»: Յիշւում են Ներսէս բարոնապետ (Ամկեցի) եւ այլք. տ. էջ 372: Գիրքը եղել է և Վարագում: Ագաթանգեղոսի և Դաշանց թղթի սկզբին, սորբին լուսանցքում, կայ հետևեալը. «Գիրքս յիշատակ է Կարապետ վարդապետին ի դուռն Վարագա սուրբ Նշանին»: Գրքի վերջին յիշատակարանից առնում ենք հետևեալը, նոյն գրչից. «...ի հայրապետութեան տէր Միքայէլին, ի թագաւորութեան աշխարհակալ արքային Սուլթան Սէլիմ Խոնդքարին, ի յայսմ ամի գրեցաւ գիրքս, ի դառն և ի չար ժամանակի...»: Ձեռագիրս ունի զարդեր և մի քանի պատկեր. նկարողն է Վարդան վարդապետ Բաղիշեցի Մարդորդեցի: Այս Բաղիշեցի Վարդանը չպէտք է շփոթել Բ ձեռագրի Վարդան Բաղիշեցու հետ: Մարդորդեցին մի դարով առաջ է վերջին Վարդանից: Համառօտութեան համար զանց ենք առնում աւելի մանրամասն նկարագրութիւնը:

Այս ձեռագրի գլխաւոր յատկանիշն է օ գրութիւնը (զօակ=զաւակ) գրեթէ առանց բացառութեան, և Ագաթանգեղոսում Զենոբ Գլակից առնուած ընդմիջարկութիւնը. տես. մեր հրատ. § 34, ծան. 13:

8. Բ. № 611 Գէորգեան ցուցակ (նախկին համար 2463). Պատմագիրների ժողովածու, մանրամասն նկարագրուած Գալուստ Տէր-Մկրտչեանի «Խորենացու պատմութեան ուսումնասիրութեան» մէջ (Արարատ 1891, էջ 542—549. առանձին արտատպութիւն 1896, Վաղարշապատ) գլ. Դ: Աւելի համառօտ՝ «Ղազար Փարպեցու ձեռագիրը» յօդուածում B տառի տակ (Արարատ 1901, նոյեմբ.—դեկտեմբ.): Նորից նկարագրուած այս «Պատմագիրք Հայոց» հրատարակութեան մէջ, Ղազար Փարպեցի, յառաջաբան Ստեփան Մալխասեանցի, էջ Ե—Զ. ուստի դնում ենք միայն մեզ կարևորը:

Մեծութիւն 19×25, կաշեկազմ, թուղթ, բոլորգիր, երկսիւն, ընտիր գրչութիւն: Ստացող Վարդան վարդապետ Բաղիշեցի, գրիչ Պօղոս երէց Գաւըռցի. գրութեան տեղը Բաղէշ, սուրբ ուխտ Յովհաննու Մկրտչի—Ամրդօլու վանք. թուականը ՌՃԻԱ (=Փրկչ. 1672. տես ընդարձակ յիշատակարանը «Վարդապետութեան» վերջում, էջ 372): Ա ձեռագրից չէ կարող ընդօրինակուած լինել՝ բացի այլ մանր նշաններից յատկապէս այն պատճառով, որ չունի Զենոբ Գլակի ընդմիջարկուած հատուածը: Բնորոշ է այս ձեռագրի համար և բնագրի մէջ առնուած մի քանի գունաւոր պատկերներ ունենալը (Տրդատ խոզակերպ՝ շամբում և այլն):

9. Գ. № 1668 (Կար. 1626) մեծ. 19×12, թուղթ, նօտրագիր, անյիշատակարան: Բովանդակում է Խորենացու Պատմութիւնը, Ագաթանգեղոս, Դաշանց թուղթ, բայց ոչ Յաճախապատում, ինչպէս սխալմամբ



առւում է Կարենեան ցուցակում (էջ 180), երևի «Յաճախապատում» անունով հասկանալով Ագաթանգեղոսի «Վարդապետութեան» մասը: Ձեռագիրս ունի երկու թերթ մագաղաթեայ պահպանակ՝ միջին երկաթագրով («քառակուսի» երկաթագիր) մեկնութեան կամ ճառի մասն (նիւթը՝ Աւետարանի փարիսեցին և մաքսաւորը). էջ 178բ, 187ա, 235բ, 325բ, 426ա կնիքներ: էջ 187ա Ագաթանգեղոսի «յառաջաբանի» վերջում, կնքի փակագիրը կարդացւում է «Քի ծռ. Գրիգոր վարդապետ թվ. ՌՃԺԷ». նոյնը և 178բ, 235բ, 325բ. իսկ 426ա, գրքի վերջում, ուրիշ կնիք՝ հազիւ վերծանելի «գիրքս որ էջմիածնա է»: Պայմանաբար ձեռագրիս թուականը դնում ենք ՌՃԺԷ (1117=1668 Փրկչական) թուին: Հարկաւ կնիքը կարող էր ձեռագրից և առաջ և յետոյ փորագրուած լինել: Նոյն գրչութեամբ, էջ 1ա դատարկ թերթի վրայ, կայ և հետևեալը, անպայման ձեռագրի գրութիւնից յետոյ գրուած. «Թուին ՌՃԻԵ (1676) յունիսի մէկն՝ ը. ժամոյն արեգակն խաւարեցաւ»: (Շարժական տարուայ նաւասարդ 1=4 հոկտեմբերի): Գրութեան տեղը հաւանականաբար էջմիածինն է:

Այս ձեռագրում բնորոշ է Ագաթանգեղոսի սկզբնաւորութիւնը «ի ժամանակաց թագաւորութեան», փխ. «ընդ նուազել ժամանակաց թագաւորութեան» (տ. § 18, ծան. 3): Ձեռագրերի մի խմբակցութիւն, ԳԵԷԿ, այսպէս է սկսւում: Սրանցից հնագոյնն է Գ-ը: Սրանք բոլորը ծագել են մի մայր ձեռագրից, որի սկզբնաւորութեան առաջին երկու բառը «ընդ նուազել» գրուած չեն եղել, այլ դատարկ տեղ է եղել թողած, ըստ սովորութեան գրիչների, որպէս զի ծաղկողը յետոյ գեղով զարդարէ: Բայց ծաղկողն անուշադրութեամբ երկու պակաս բառերի տեղ գրել է Ի: Այս խմբակցութիւնից էր և Աղեքսանդր կաթողիկոսի ինքնաձեռագիրը, որից տպուեց Կ-ն:

10. Դ. № 1661 (Կարեն. 1619). մեծութիւն 31×23, կաշեկազմ, թուղթ, նոտր, երկսիւն, ընդ ամենը 554 թերթ: Ձեռագրիս ստացողն է Մինաս վարդապետ (էջ 517բ). գրիչներ՝ Թումա (էջ 441բ) և Գրիգոր քարտուղար: Յիշատակարաններ. «Գրեցաւ թվին ՌՃԻԵ ի գիւղն Ալի-փուղար ձեռամբ Գրիգոր քարտուղարի» (էջ 365ա): էջ 111ա «Ով հայր սուրբք, Նարին վարդապետն գքահանայքն որ մատնեաց ի ձեռն Ղափլան փաշային՝ ես փախստական և անճարակ տեղի նստեալ գրեցի զայս տետրս. թվն էր ՌՃԻԷ փետրվարի ամսոյն ԺԶ, օրն շաբաթ (տպ. ուրբաթ)»: Շատ տեղեր կայ կնիք, «Նահապետ վարդապետ» ընթերցուածով: Ուրիշ մանրամասնութիւններ թողնում ենք: Ուրեմն ձեռագիրս գրուած է ՌՃԻԵ—ՌՃԻԷ (=1676—1678) թ.: Այս ստուար և մեծագիր ձեռագիրը պատմիչների ժողովածու է և պարունակում է իր մէջ Խորենացի, Ասողիկ, Լաստիվերտցի, Եւսեբիոսի Եկեղեցական Պատմութիւն, Ագաթանգեղոս (էջ 184ա—243ա), Դաշանց թուղթ, Մեսրոպ Երէց, Զենոբ, Յովհան Մամիկոնեան, Փաւստոս, Եղիշէ, Օրբէլեան Ստեփան, Միխայէլ Ասորի, Վարդան, Կիրակոս, Սոկրատի Եկեղեցական պատմութիւն: Այս համառօտ նկարագրութիւնն առնում ենք «Հայագիտութեան Հանգիսից», Zeitschrift für armenische Philologie, 1904. էջ 269—270, Գալուստ

Տէր-Մկրտչեանի «Փաւստոսի Ձեռագրերը» յօդուածից: Վերատառադարձելով «ՌՃԻԷ փետրվար ամսոյն ԺԶ, օրն շաբաթ» խօսքը՝ նկատելու է, որ ձեռագրում նախապէս գրուած է եղել «ուրբաթ», բայց նոյն գրչից ջնջած և շինած է «շաբաթ»: Նախապատուութիւնը տալու է վերջին ընթերցուածին, որովհետև 1678 թուին փետրվարի 16-ը իսկապէս ընկնում է շաբաթ (եօթներեակ Բ):

Բնորոշ է այս ձեռագրի համար Ագաթանգեղոսի վերջաւորութիւնը, ուր պակասում են, առանց թերութեան արտաքին որևէ նշանի, § 891—§ 900 հատուածները, նաև «Հաւատամքը» (տես § 890, ծան. 9): Մինչդեռ ԱԲԳԴԵԶէko չունին միայն § 891—§ 897 հատուածները (տես § 890, ծան. 10): Սոյն Զ-բը նկարագրուած է և Սուքրատի յառաջաբանում (հրատ. Մեսրոպ վարդապետի, Վաղարշապատ 1897) էջ ԻԵ. (Կարենեանցի թուահամարը պիտի ուղղել 1619. տպուած է 1629), ուրիշ մանրամասն՝ էջ ԻԹ: Ալիփուղար գիւղի մասին հմմ. Տաշեան ցուցակ № 72 Աւետարան, գրուած «ի Համիթ քաղաքն» և նուիրուած Ալիփաղարու սուրբ Աստուածածնի (էջ 319):

11. Ե. № 613 Գէորգեան ցուցակ. մեծութիւն 20×14. կաշեկազմ, թուղթ, բոլորգիր, ոսկեզօծ եզրերով, մի քանի պատկերներով և զարդերով: Բովանդակութիւն—Ագաթանգեղոս և Դաշանց թուղթ, Ընդհանրական Ներսէսի, Թուղթք Շնորհալու և այլոց, հատուածներ և քաղուածներ կրօնական հարցերի մասին, մանրամասն ցանկ նիւթերի, էջ ՃԾԲ—ՃԾԳ. ընդ ամենը ԿԲ համար. (վերջինը՝ մի քանի փոքրիկ հատուած Ակակի և Պետրոսի նամակներից): Յետոյ նոյն գրչից՝ «Պատմութիւն տեառն Ներսէսի կաթողիկոսի հայոց Կլայեցւոյ» և «Թուղթ սրբոյն Դիոնէսի առ Տիմոթէոս յաղագս մահուան Պետրոսի և Պօղոսի և նահատակութեան նոցին»: Մի քանի յիշատակարաններից գլխաւորը էջ ՅԺԲ[2]. «Փառք... Արդ գրեցաւ գիծս այս և ի վճար բանիս կրկնակի սբ գրոցս, այսինքն Ագաթանգեղոսի և Ընթանրականի, և այլ մասնաւոր բանից, ի թուահաշուութեան տոհմիս արամեան ՌՃԽԱ (=1692) յամսեանն փետրվարի ԺԵ, ի թագաւորութեան ազգին կարմրագլխաց (=Ղզլբաշ) Շահսուլէհմանին, յամս աստուածապատիւ և հզօր տեառն մերոյ Նահապետ կաթողիկոսի ամենայն Հայոց, ի դուռն աքքայանիստ և ի քաղաքս Թագաւորական Իսպահան կոչեցելոյ. որոյ էր հովիւ և առաջնորդ յաւուրս յայս տէր Ստեփաննոս Արքեպիսկոպոս և բանիբուն վարդապետ... Արդ ստացաւ սուրբ գիրքս... պայազատ պարոն Գրիգորն ի յալալ ընչից իւրոց, և ետ վաղֆ առ Ամենափրկչի վանքին, ի վայելումն Դաւիթ վարդապետին, յիշատակ իւրն և ծնօղացն՝ Պարոն Յովանիսին և Մարիանէ, և եղբայրն իւր Պարոն Ոհանջանն, և որդին իւր նորաբողբոջ Պարոն Պետրոսջանն, և դստերքն իւր Անայի խանումն և Մարթայ խանումն. յիշեցէք... զպարոն Գրիգորն և զկողակիցն իւր մանուկ Նազլուխանն, և դուստրն իւր Ջիբիթա խանումն, որ հանգուցեալ են ի Քրիստոս... դարձեալ յիշեցէք զպարոն Գրիգորն և զվերջին կողակիցն իւր Շըմէլն, և դստերքն իւր Ագաթլու և Լէլիխանն... զանարժան գծօղ սորա զՍարգիս քահանայս...»: Կայ և «Ջուղայեցի մահ-



տեսի Դաւիթ վարդապետի» յիշատակարանը (էջ յժբ), «սպասաւոր և առաջնորդ սուրբ Ամենափրկչի վանիս, թւին ՌՃՀԴ (=1725 Փրկչական)... յօժար կամօքն վաղֆ և յիշատակ ետու սուրբ Ամենափրկչի աթոռիս...»: Ձանց ենք առնում միւս յիշատակարանները:

Ուրեմն 1725-ին գիրքը դեռ Ամենափրկչումն էր: Էջմիածին ստացուել է՝ հաւանօրէն Գէորգ կաթողիկոսի ժամանակ «Նուէր յԱստրախանայ», ինչպէս կարդում ենք գրքի կողքին փակցրած տոմսում:

12. Զ. № 1660 (Կարեն. 1618). մեծութիւն 19×14. կաշեկազմ, թուղթ, նոտր: Բովանդակութիւն՝ Ագաթանգեղոս, Դաշանց թուղթ, Պատմութիւն Զարմից Լուսաւորչին, Տեսիլ սուրբ հայրապետին Ներսէսի, Տեսիլ ս. Սահակայ, Պատմութիւն Եղիշէի: Բազմաթիւ մանր յիշատակարաններ, որոնցից մէկը տես § 715, ծան. 5:

Գրիչն և ստացողն է Ղուկաս քահանայի որդի Ղազվինցի Յոհաննէս վարդապետը (=եպիսկոպոս, էջ ձեռագրի 193ա). գրուած է Էջմիածնում ՌՃԾԴ թուին (=1705 Փրկչական): Համառօտում ենք և վերջին յիշատակարանը (ձեռագրի էջ 346ա) «Փառք... գրեցաւ ի սուրբ և ի հռչակաւոր վեհարան մեծի երկնահանգէտ Աթոռոյս Էջմիածնի և աւարտեցաւ ի թուին ՌՃԾԴ և սեպտեմբերի հինգ. Ձեռամբ հողնամեղ և եղկելի և ամենաթշուառ Յոհաննէս վարդապետի Ղազվինցւոյ... Յիշեսջիք... զտէր Թորոս Պարոնտէրն, որ է հոգևոր հայրն իմ, որ բազում նեղութիւնս և չարչարանս կրեաց վասն իմ, որ մինչ ի չափս իմ հասոյց... Եղև կատարումն սուրբ գրիս ի հայրապետութեան տեառն Տէր Նահապետ կաթողիկոսին, որ յայժմ ամի հանգեաւ ի Քրիստոս...»

Մանրամասն բաղդատութիւնը, իւր արժէքից աւելի, մեզ համոզեց, որ այս ձեռագիրը ընդօրինակուած է Ա ձեռագրից: Համեմատել մասնաւորապէս ԱԶ-ի ընթերցուածները մեր հրատարակութեան մէջ Ագաթանգեղոսի առաջին մասում:

13. Է. № 612, Գէորգեան ցուցակ. մեծութիւն 21×15. կաշեկազմ, թուղթ, բոլորգիր. բացի պատկերներից և ոսկեզօծից՝ ամեն բանով յար և նման է Ե ձեռագրին: Ագաթանգեղոսի յառաջաբանի վերջում՝ «Զանարժան յիշատակի յոգնամեղ տէր Սարգիս յիշեցէք ի Քրիստոս, որ մեղսամակարդ ձեռօք սկսայ զգիծս...»: Առաջին մասի վերջում՝ «Զամենայն բարեաց... տէր Սարգիս անհմուտ գծօղ սորին յիշել աղաչեմ... և զորդին իմ զնորաբողբոջ Յովհաննէսն...»: Ներսէսի Ընդհանրականից առաջ գրուած ցանկը փոխանակ ԿԲ համարի, ինչպէս որ է Ե ձեռագրում՝ ունի միայն ԾԷ համար: Յիշատակարանն այս էջում բերուած է: Պետրոսի և Ակակի նամակների պատառիկներից յետոյ՝ այս ձեռագիրն ունի ընդարձակ Վիճաբանութիւն ընդդէմ Յոանկաց. «Յաղագս թէ փափն իցէ ուղղափառ» են. Թուղթ Պիղատոսի. ի Մնացորդաց յաղագս Սողոմոնի. ի Մնացորդաց Թագաւորէն, զոր բազմաջան յուզմանէ հազիւ կարացի գտանել. Կարգաւորութիւն աւրհնութիւնաբեր ցուցակի, և այլ թուղթք և հատուածք, որ պակասում են Ե ձեռագրում: Գրիչը փոխւում է 296ա էջից յետոյ: Երկրորդ գրիչը, թէև շատ նման առաջինին՝ բայց

տարբեր անձն է։ Այս գրչի յիշատակարանից քաղում ենք (էջ 373ա) «Փառք... որ... ետուր կարողութիւն մեղապարտ և դատապարտեալ քո ծառայիս Յակոբ յանարժան քահանայի տեսանել յաւարտ գծիս և ի վճար բանիս կրկնակի սուրբ գրոցս, այսինքն Ագաթանգեղոսի և Ընթանրականի և այլ մասնաւոր բանից... ի վայելումն և զբօսանս տէր Սիմոն աստուածաբան վարդապետի, արհի և քաջ եռքեկատորի... յամի թուահաշուութեան տոհմիս ՌՃԿԳ (=1714 Փրկչական) յամսեանն յաւնիսի Ժ, ի գաւս արքայանիստ և ի քաղաքս Թագաւորական, ի գրոց Շօշ կոչեցեալ, որ այժմ Ասպահան արտաձայնի։ Ընդ ժամանակաւ Թագաւորութեան պարսից շահ սուլթան Յուսէնի, ի հայրապետութեան տեառն Աղէքսանդրի և առաջնորդութեան տէր Մովսէս վարդապետի, ընդ հովանեաւ Սուրբ Հոգւոյ եկեղեցւոյ։ ...Յիշեսջիք ի Քրիստոս զստացող սորին զտէր Սիմոնն մեծ բաբունին, և զհանգուցեալ ի Քս ծնօղսն իւր, զհայրն իւր Սարգիսն, և զմայրն իւր Յաղիտայն... Նաև զեղբայրն իւր Մովսէս վարդապետն...»։ Յիշատակարանին հետևում են տոմարական ցանկեր, բացատրութիւններով, նոյն Յակոբ գրչի ձեռքով գրուած։

Է ձեռագրի Ագաթանգեղոսի գրիչը, Սարգիս քահանայ, հաւանաբար նոյն Սարգիս քահանան է, որ գրել է Ե ձեռագիրը։ Գրչութեան մէջ բաւական տարբերութիւն կայ։ Է-ի գրչութիւնը աւելի կոպիտ, աւելի խոշոր է, կարծես թէ աւելի անվարժ, բայց այս կարող է ծագած լինել ժամանակի տարբերութիւնից։ Ե-ն գրուած է 1692-ին, մինչդեռ Է-ն՝ 1714-ին, 22 տարուայ տարբերութիւն, երբ տէր Սարգիսը ծերացած պիտի լինէր և չկարողացաւ նոյն-իսկ ամբողջ ձեռագիրը վերջացնել։ 1714-ը ըստ ինքեան ձեռագրի վերջին մասի թուականն է, մինչդեռ Ագաթանգեղոսը առաջին մասումն է, բայց հազիւ թէ շատ կանուխ ժամանակով։ Պայմանաբար այդ մօտաւոր թուականը, 1714-ը, առնում ենք Է Ագաթանգեղոսի վրայ։ Հարկաւ կարող է պատահել, որ այս գրիչ Սարգիսը ուրիշ Սարգիս է, և սորա գրութիւնն էլ՝ նոյն-իսկ 1714-ից տարիներ առաջ եղած, և յետոյ միայն շարունակուած Յակոբ գրչից։

Յամենայն դէպս Ե և Է գրուած են Սպահանում, մօտ ժամանակներում, Սարգիս քահանայ գրչից, նոյն գիրքով, ուստի շատ նման բովանդակութեամբ և ընթերցուածների (Ագաթանգեղոսում) չափազանց մօտ նմանութեամբ (համեմատիր ընթերցուածները), և անշուշտ բղխած մի նախագաղափարից։ Է-ն եղել է Հնդկաստանում. ձեռագրի սկզբի դատարկ թողած թերթերից (բնագրի թղթից, նոյն ջրային նշաններով) մէկի վրայ կարդում ենք. «Ավ (=Աստուծով) թւին Փրկչին մերոյ ՌՉՁԶ (1786) և փոքրն՝ Ազարիայ ԱՃՀԱ, արխամ գ, լուսի չորսին, ի Մուչլի բանդարումն լուսաւորեալ հոգի տէր Յակոբի որդի պարոն Ծատուրն երպայի տեսմանեայ, որ մէկ սեղանի նըման բոծրաւանդակ տեղայ լինում, և ի մէջոյ նորայ մին աղբիւր այ բըղխում, որ ի հարցանելն ասեն. «այս է նշան սրբոյ Սուքիազանց մարմինքն յայտնըվելոյ». զոր ես Նուաստ տէր Գրիգոր մեղապարտ յաբեղայս, թւին ԱՃՀԲ և շըթ ԺԱ, Բումբյուց եկի տեղս Սրէքանդրն [այսպէս] և վերայիշեալ պարոնն ինձ



պատմէց. տեղս գրեցի շըթ ԻԹ-ումն. տեսնենք վերջն ինչ լինելոց է և կատարումն (=կատարումն) ինչպէս կըլինի»։

Ազարիայի թուականն սկսւում է 1616 շամս ամսով (մարտի 21-ին), ուստի և ԱՃՀԱ (=171) թիւը ճիշտ համապատասխանում է (171+1615) 1786 Փրկչ. թուականին։ «Արխամ Գ. լուսի չորսին»=Արամ ամսուայ 3, որ է դեկտեմբեր 18, լոյս 4-ին, այն է՝ 3-ի և 4-ի միջև եղած գիշերը։ ԱՃՀԲ շըթ ԺԱ=172 թ. Ազարիայի (=1787 Փրկչ.) շըաթ ամսուայ 11, որ է 30 մայիսի։ Շըաթ 29-ը, յիշատակարանի գրութեան օրը՝ ընկնում է 17 յունիսի 1787 թուին։ Ուրեմն այս թուին է ձեռագիրը դեռ Հնդկական ովկիանոսի ափերումն էր։ Յիշուած բանդարներից (=նաւահանգիստ) Մուչլին թերևս Անգլիական քարտէզների Cutch կամ Bhuj-ն է, թէ այս և թէ Սրէքանդարը կարծեմ պիտի որոնել Bombay-ի և Ինդոսի գետաբերանի միջև (Համմ. Encyclopaedia Britannica[9], Vol. XII.)։ 1840 թուի մարտի 21-ին այս Զ—իրը ընծայւում է մի արքեպիսկոպոսից (անունը չկայ. տես ձեռագրի սկզբի դատարկ թերթերը) վաղարշապատցի Բզնունեան Գէորգ վարդապետին։ Գէորգ կաթողիկոսի օրով մտնում է Գէորգեան ցուցակը։ Է-ի զարդարուն կաշեկազմի վրայ գեղեցիկ խորագրոշմ երկաթագրով կարդացւում է «յի քի ծս Սիմոն վարդապետին, թվն ՌՃԿԴ-ումն». ուրեմն գրութիւնից մի տարի յետոյ է կազմուած, 1715-ին։ Տեղ-տեղ կան և կնիքներ, բայց գիտակցաբար ջնջուած, երևի վերջին ստացողներից։

14. Ը. № 614 Գէորգեան ցուցակ. մեծութիւն 20×14, թղթակազմ, թուղթ, մանր նօտր. գլխակարգութիւնները կարմրով, ստորին լուսանցքներում նշանակուած է բովանդակութիւնը (տ. Ա. տպագիր), շատ տեղ, մանաւանդ Վարդապետութեան մէջ՝ իբրև գլխակարգութիւն մտած բնագրի մէջ։ Չունի յառաջաբանը, թէև երկու թերթ դատարկ է թողած, ուր գտնուելու էր այս խմբի ձեռագրերին յատուկ կրճատ յառաջաբանը։ Պակասում է Ագաթանգեղոսի երրորդ մասը, ուրեմն վերջանում է Վարդապետութեամբ, որ համարելու է լոկ պատահական երևոյթ, գիրքը հաւանականաբար կազմուած լինելով գրչից թերակատար մնացած վիճակում։ էջ 10ա կնիք, որի փակագիրը կարդացւում է «քի. ծս. Պետրոս վարդապետ»։ Չունի որևէ յիշատակարան. կողքին կպցրած տոմսի վրայ նշանակուած է նորագոյն գրչութեամբ «Նուէր յԱստրախանայ»։

Ընթերցուածներից երևում է շատ մօտ Բ ձեռագրին, թէև սխալաշատ և յաճախ «թռիչքներով». (տես համեմատութեանց մէջ Ը-ի չիքերը)։ Բնագրում շատ տեղ էջի կէսը, մի երրորդը կամ պակաս՝ դատարկ թողած, երևի պատկերների համար։ Հաւանօրէն այդպիսի բացառներ է ունեցել իւր նախատիպը։ Այս ենթադրութիւնը հաստատւում է հետևեալ խօսքից, որ անշուշտ նշանակուած էր պատկերագրողի համար. «Հան ասա զսուրբն Գրիգոր գաւազանաւ, և զՏրդատ՝ խոզ անկեալ առաջի նորա։ Եւ զամենայն նախարարսն խառնիճաղանճ մարդկային կերպիւ, բայց այլադէմ, ի լսել զվարդապետութիւն նորա». (էջ 41բ, վարդապետութիւնն սկսուած էջի ստորին լուսանցք)։ Մի տեղ պահուած

է նաև պատկերահանին ուղղուած տառեւռը (էջ 35բ, մեր տպագրի § 212). «Նախաշ ճարտար ամենեցուն՝ կազմեա դու շամբ եղեգնային, զոլով տեղի Թագաւորին Տրդատ Հայոց մեծ արքային: Ընձեա խոզանս ի մէջ շամբին, զՏրդատ անեղ կենձթային (Զ. կնոջ թուչին), և այլ զաղանս ի մէջ շամբին՝ արջ և առիւծ ընկեր նորին»:

Ճիշտ նոյն տեղում, «Եւ այնուհետև մտեալ յեկեղն խոզաձևարակ լեալ» (§ 212), պատկեր ունի Բ ձեռագիրը (էջ 34ա) կէս երեսի վրայ, ուր նկարուած է վարազաձև Տրդատը, խոզեր, եղջերու, արմաւենու ձևով ծառեր, երեք եղէգ, թռչուններ, ծաղիկներ, ալեձև ջուր. միւս կենդանիներից թերևս մէկը գամէշ է, միւսը ցիռ: Տակը հազիւ ընթեռնելի նկարչի անունը. «զվանեցի Սահակ ծաղկողս յիշ.»: Նոյն ձեռագրում (Բ) էջ 40ա, վարդապետութեան սկիզբը, կայ պատկեր. նկարուած է Լուսաւորիչն ալեզարդ, գլխաբաց, աջը գաւազան, նրա առաջ խոզաձև Տրդատը ծնկաչոք և Տրդատի յետևը այլակերպ նախարարները: Սորին լուսանցքում գտնւում է նոյն խրատը բառացի—«Հեն առա զսուրբն Գրիգոր...», ինչ որ ունի Ը ձեռագիրը:

Ա. ձեռագիրը նկարագրելիս յիշեցինք, որ պատկերներ ունի. համառօտութեան համար մանրամասնութեանց մէջ չմտանք: Բայց այժմ Ը ձեռագրի առնչութեան հանգամանքները որոշելու համար պէտք է մէջ բերել Ա-ի, գոնէ Ագաթանգեղոսի մասում եղած՝ պատկերների նկարագիրը, առանց յիշելու խորանազարդերն և այլ մանր զարդանկարները լուսանցքներում:

Ագաթանգեղոսի սկզբին Ա. ձեռագիրն ունի ամբողջ երեսի մեծութեամբ Տրդատի, Լուսաւորչի և Ագաթանգեղոսի պատկերները: Տրդատը նստած է, յետևը մութ թաքոյ՝ կանաչ երեսով. Լուսաւորիչը կանգնած օրհնում է Ագաթանգեղոսին, իսկ Ագաթանգեղոսը կանգնած է գրակալի առաջ, որի վրայ գիրք կայ: Գլուխների վերևում գրուած է. «Տրդատ թագաւորն և սուրբն Գրիգոր Լուսաւորիչն խնդրեն յԱգաթանգեղոսէ զպատմութիւն Հայոց Հայրապետաց և թագաւորացն»: Պատկերի ներքևում, նոյն գծգոյն կարմիր թանաքով, ծաղկողի ձեռքով բարակ գրերով հետևեալը. «Եղուկ Վարդանս Բաղիշեցի, որ ի Մարգարէ գեղջէն էի, յոյժ մոլորեալ եմ յաշխարհի, եղեռնագործ և զազրալի, մատամբ իմով մեղսամածի զԱգաթանկեղս ծաղկեցի, դձեզ աղաչեմ եղբարք բարի, որ ինձ տաէք տէր ողորմի, զի տէր Աստուած ամենայնի, որ է առատ ի շնորհս բարի, մեզ և ձեզ ողորմեսցի և յիշողացն տայ ձրի զարքայութիւն իւր երկնային. ամէն»:

Լուսաւորչին վիրապը ձգելուց յետոյ (այս հրատ. § 122), կարմրով գրուած «Եղև նա յայնմ վիրապի ամս երեքտասան» բառերի վերևը, նկարուած է Լուսաւորիչ վիրապում կանգնած աղօթելիս, ոտքերի տակը և կողքին օձեր, ծաղկող Վարդանի վերնագրով. «Սուրբն Գրիգոր Լուսաւորիչն է ի խոր վիրապին»:

Ագաթանգեղոսի ԺԳ գլխի սկզբին (§ 137), լուսանցքում նկարուած է Հռիփսիմէն՝ երեսը բաց, գլուխը կապած, կապոյտ ներքնազգեստով, կարմիր սոլերով: § 212, ճիշտ այնտեղ, ուր գրուած է Ը ձեռագրում «Նախաշ ճարտար» տառեւռը, ուր և Բ ձեռագիրն ունի պատկեր (տես



վերևը), Ա-ն ամբողջ երեսի մեծութեամբ դնում է մի ֆանտաստիկ նկար, այժմեան զեկավճառների ոճով, ուր երևում են մի մեծ ժանիքաւոր վարազ, խոզեր, խոճկորներ, արջ, առիւծ, թռչնակտուց մի կենդանի, մի ուրիշը այծի ոտքերով և պոչով, բայց առանց մորուքի, ծառս եղած արջի թիկունքին, կապտագոյն (երեք գիւահարներին վարող դեն է), շամբ են: Ներքևում Վարդանի ձեռքով գրուած է. «Նղաչ ողէս մեզ սգոք ի լոն, կազմեայ դու շամբ եղեգնային, զոլով տեղի Թագաւորին Տրդատ Հայոց մեծ արքային, շինեայ խոզանս ի մէջ շամբին, զՏրդատ անեղ կընջըթային, վարազ եղև ի մէջ խոզին վասն կուսին սուրբ Հռիփսիմին, 'ւայլ ընկերաց սրբոց նորին էառ պատիժ պատուհասին. զոր Տէր Աստուած ամենայնի ազատեսցէ յախտէ դիւին, ամէն»: Համեմատել այս տողերը Ը ձեռագրի «Նախաշի» հետ: Հետաքրքրական է, որ Ը-ի «արջ և առիւծը» իսկապէս նկարուած են Ա-ի այս պատկերում:

Կան պատկերներ և Վարդապետութեան, Գրիգորի տեսլեան և Դաշանց թղթի սկզբներին:

Այսպիսով ուրեմն ոչ մի յիշատակարան չունեցող Ը-ի կապը Բաղէշի ձեռագրերի հետ հաստատւում է: Հաւանական է որ միջին օղակները մեզ պակասում են: Շատ ձեռագրեր պիտի եղած լինէին, պատկերազարդ և առանձնացրներով: Տրդատի վէպը՝ Մակեդոնացու վէպի նման շատ յարմար նիւթ էր գեղարուեստի համար:

15. Անմիջապէս մեր ձեռքի տակ եղած այս Առաջին խմբի ութ ձեռագրերի նկարագրութիւնն անելուց յետոյ մեզ մնում է հանել եզրակացութիւնը: Ամփոփելու համար՝ թւում ենք Ձ-երը, կցելով իւրաքանչիւրի գրութեան տեղն ու թուականը. Ա Բաղէշ 1569 թուին, Բ Բաղէշ 1672 թուին, Գ Էջմիածին 1668—1676-ի մէջերը, Դ Ալիփունար 1676—1678 թ., Ե Սպահան 1692 թ., Զ Էջմիածին 1705 թ., Է Սպահան 1714 թ. (1787-ին Հնդկաստանում), Ը անյիշատակարան, նոթագրին, ստացուած Ստամբոլից: Ուրեմն ԺԶ, ԺԷ և ԺԸ դարերի Ձ—երը: Գրութեան տեղի և ծագման համեմատ կարելի է բաժանել 3 ընտանիքի, այսպէս. ա) Բաղէշի ընտանիք (Ա, Բ, Զ, Ը), բ) Էջմիածնի կամ Արևելեան (Գ, Ե, Է), գ) Դիարբեքիրի (Ամիդ, «Տիգրանակերտ») ընտանիք (Դ): Միայն Զ-ն անմիջապէս ընդօրինակուած է Ա-ից: Միւսների ծագումը մէկը միւսից հարկաւ անմիջական չէ, այլ անշուշտ եղել են միջին օղակներ և թերևս մեր ունեցածներից հնագոյն օրինակներ, բայց բոլորն էլ առանց բացառութեան ծնունդ են մի հնագոյն մայր օրինակի, որի գրութիւնը կանուխ է 1569 թուից (Ա-ի թուականը) և որի մէջ «յառաջաբանում» թերթ էր ընկած, որով ստացուել է «կրճատ» յառաջաբանը: Եթէ գտնուի այդ մայր օրինակը՝ նրա թերթերի մէկի verso-ն պիտի ունենայ վերջին տողում հետևեալ բառերը «ազատացեալ զատաբերկացելն: Եւ յաւութիւն/», իսկ հետևեալ recto-ն պիտի սկսուի այս բառերով. «որք հարցեալ գհայրենական...» (տես մեր տպագրի էջ 3, տող 7, էջ 12, տ. 19): Նշանակելով այդ անծանօթ մայր օրինակն X-ով կունենանք հետևեալ ծննդաբանական պատկերը.

ԳԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ... ԳՐԱԴԱՐԱՆ БИБЛИОТЕ...







Մայր օրինակին ամենից մօտ կանգնած երկու օրինակները՝ Ա և Բ միմեանցից բոլորովին անկախ են։ Ա-ն ընդմիջարկուած է Զենոբ Գլակի հատուածով (տես մեր տպագրի էջ 23), մինչդեռ Բ-ն ազատ է այդ ընդմիջարկութիւնից։ Ուստի և ԱԲ-ը հնարաւոր ճշտութեամբ տալիս են մեզ կորած մայր օրինակի հարազատ ընթերցուածները։ Սրանց շատ մօտ է Գ-ն, որի մերձաւոր ազգակից մի օրինակ ծառայել է Օրթագիւղի տպագրութեանը (=O), իսկ աւելի աղճատ ԴԵԷ խմբակցութեան պատկանող մի օրինակ եղել է առաջին տպագրութեան (=k) գաղափարը։ Այս իսկ պատճառով մեր հրատարակութեան մէջ ծայրէ-ծայր հաւասարմութեամբ նշանակուած են ԱԲ-ի ընթերցուածները, իսկ միւսներինը միայն առաջին մասում, և այն աստիճանաբար դուրս ձգելով։ Աւելի երկար պահուած են որոշ ընդհատումներով Զ և Դ-ի ընթերցուածները՝ Զ-ի անմիջական ծագումը Ա-ից ապացուցանելու համար, և Դ-ի համեմատաբար աւելի կարևոր դիրքը շեշտելու նպատակով։ Ուշադիր ընթերցողը կտեսնէ, որ ԱԲ-ը տալիս են բոլոր կարևոր ընթերցուածները, իսկ միւս տառերը գրեթէ ոչինչ նոր կամ կարևոր, այլ մի միայն պատկերացնում են բնագրի հետզհետէ արտագրուելով աղճատուելու պրոցէսը։ Եթէ անհրաժեշտ համարուէր տալ Գ—Ը Զ-երի բոլոր ընթերցուածները մանրամասնութեամբ՝ մեր հրատարակութեան ծաւալը մի քանի անգամ աւելի կմեծանար, առանց որևէ բան շահելու պարզութեան և ճշտութեան համար։ ԳԵԷ-ի մերձաւոր պատկերը տեսնել ցանկացողը կարող է դիմել առաջին տպագրին (k), իսկ Դ-ի համար երկրորդ տպագրին (=o)։ Ը-ը շատ աղճատ և թերատ օրինակ է, ԱԲ-ի ազգակից, իսկ Զ-ն, ինչպէս ասացինք՝ անմիջական ընդօրինակութիւն է Ա-ի։ Ուրեմն և գիտական տեսակէտից՝ ընթերցողը կարող է լրիւ բաւականութիւն ստանալ ԱԲ-ով Ագաթանգեղոսի այս առաջին խմբի Զ-երի հետ ծանօթանալու համար, միանգամայն ազատուելով տգէտ գրիչների հազարաւոր աղճատ ընթերցուածներից։

16. Այս Առաջին խմբի Զ-րեր կան և դրսումը, որոնցից մեզ յայտնիները նշանակում ենք հետևեալ տառերով.



Թ. Մի Զ-իր, որ եղել է ուսուցչապետ Մառի ձեռքում՝ կրելով №4, այժմ գտնւում է Պետերբուրգի Ասիական Մուզէում. (Аз. Муз.). գրիչն է Աղեքսանդր վարդապետ, թուղթ, կաշեկազմ, նոտրագիր, ունի կնիքներ, յիշատակարաններ։ «Յիշատակ է Աղեքսանդր վարդապետին». կնիք «Բի ծռ. Գասպար ՌՄԿ.» Համառօտ յառաջաբանով. սկզբնաւորութիւնը «ի ժամանակաց», ուրեմն նման ԳԵԷk խմբակցութեանը։ Ունի «Հաւատամք»-ը, Դաշանց թուղթ, Ընդհանրական Ներսեսի են, բստ բովանդակութեան բոլորովին նման Ասպահանի Զ-երին։ Գտնում ենք գլխաւոր յիշատակարանը. Փառք... Տէր Աղէքսանդրի... տեսանել (նախապէս, անշուշտ, մայր օրինակում պիտի լինէր՝ հասանել) յաւարտ գծի... Ագաթանգեղոսի և Ընդհանրականի և այլ մանաւոր բանից, զոր գծեալ դրոշմեցի... յիշատակ հոգոյ և հօգևոր ծնողի... տեառն Դաւթի աստուածաբան վարդապետի և արհիական եպիսկոպոսի Շօշ քաղաքի... և ծնօղաց իմոց մահտասի Կոստանդեայ և Ջերեթեայ... ՌՃԼԹ (=1690 փրկչ.) յամսեանն յունվարի ա-ումն... շահ Սուլէմանին... Եղիազար կաթողիկոսի... ի քաղաքս ի Սպահան, որոյ էր հովիւ... տէր Ստեփաննոս արքեպիսկոպոս.....»։ Այս համառօտութիւնն առնում ենք Մեսրոպ վ. Տէր Մովսիսեանի հաւաքածոյից։ Նոյնն ունի և մի ուրիշ Զ-ի նկարագրութիւն՝ Ալեքսանդրապոլ քաղաքի Թադէոս Բաբայեանին պատկանող մի Ագաթանգեղոսի։ Մանրազնին բաղդատութիւնից համոզուեցանք, որ Բաբայեանի Զ-իրն է, որ տեղափոխուել է Պետերբուրգ, նախապէս անցնելով Մառի ձեռքով։ Զ-իրն ունի և այսպիսի մի յիշատակարան, մի քանի անգամ տպուած ուղղագրական տարբերութիւններով։ Գտնում ենք Մեսրոպ վարդապետի արտագրածը. «Թվին ՌՄԿԱ թանկութիւն սով եղև Ղարսայ քաղաքըն. շատ մարդ անօթութենէն մեռաւ... շատ մարդ իւր որդին ծախեց. մէկ մարդըմ էլ իւր կինը Ե կոտ դարու ավեց. կանայք փողոցը թափեցան, աղիք կամ կոպտոն կամ արիւն կերան։ Պըղընձի հօխէն Խ փարի ավին. Լ դշի (=դուրուշի) խալի կամ կարպետ, Ը դշ. անճաղ կէնէր. վերջը արևունի վըրէն կըռվան կամ ծեծկըռվան, վերջը Ա կինըմ էլ մեռուցին. պէսպէս փորցանք. ես անարժան գոլով տիրացու Խաչատուրըս սակամ (սակաւ?) դուք շատ իմացէք»։ Նոյն յիշատակարանը քիչ տարբեր տես «Արալ. Կարս քաղաք, էջ 107, Մոսկուա 1893. նաև «Յիշողութիւններ Քաջբերունւո», գլ. Ե. Լումայ 1903, էջ 63։

Առաջին տպագիրը նկարագրելիս մենք տեսանք, որ k-ի գաղափարն ընդօրինակուած է Աղեքսանդր Ա. Ջուղայեցի կաթողիկոսի ձեռքով 1707 թուի ապրիլի 7-ից առաջ։ Իսկ այս Զ-րից տեղեկանում ենք, որ Աղեքսանդր վարդապետը Սպահանում (Նոր Ջուղայ) 1690 թուի յունուարի 1-ին ընդօրինակել է այս Ագաթանգեղոսը։ Մեզ թւում է, որ ամենայն հաւանականութեամբ Աղեքսանդր վարդապետը և Աղ. կաթողիկոսը միևնոյն անձն են, և Ասիական Մուզէոնի օրինակը k-ի գաղափարն է։ Զ-րը Նոր Ջուղայից տեղափոխուել է Էջմիածին և Աղեքսանդրի կաթողիկոսութեան ժամանակ (1706—1714) ուղարկուել է Պոլիս տպագրուելու, և այնուհետև երկար թափառումներով և նորանոր յիշատակարաններ ընդունելով հասել է Պետերբուրգ։

17. Ժ. Լազարեան ճեմարանի № 1167 Ձ-իրը՝ ըստ նոր ցուցակի (Մոսկուա 1888, էջ 73), թուղթ, կաշեկազմ, նոտր։ Ըստ Մեսրոպ վարդապետի՝ չունի յառաջաբանը (որ լինելու էր անշուշտ համառօտը). սկսւում է «Ի ժամանակաց թագաւորութեանն Պարթեւաց», ուրեմն ԳԵԷԷ ընտանիքից։ Ունի «Հաւատամք»-ը, Դաշանց թուղթ. գրուած է թուին ՌՃԽԸ (=1699 փրկչ.)։ Ունի նաև Խորենացի, Սամուէլ Անեցի և ուրիշ գրութիւններ։ Մեսրոպ վարդապետն իւր նկարագրութեան մէջ նկատում է, որ բացի «յառաջաբանից» նախապէս «պակասում էր և առաջին թերթը և թղ. 3—6 մի-մի սիւնակ, որ կրկին կազմողը լրացրել է», ուստի կարևոր է նոր հետազօտութիւն՝ Ձ-րի արժէքը և խումբը ճշտելու համար։

Ի. Սանասարեան Ձ-իր № 126, Եզեանցի մօտ. ըստ Մեսրոպ վարդապետի ԺԷ դարու Ձ-իր. թուղթ, կաշեկազմ, նոտր։ Ունի «Հաւատամք»-ը, Դաշանց թուղթն և այլ գրութիւններ։ Սկզբնաւորութիւնն է «Ի ժամանակաց», ուրեմն ԳԵԷԷ ընտանիքից, անշուշտ «համառօտ» յառաջաբանով, որ թերի է։

Լ. Ձ-իր Միքայէլ Յովհ. Թամամշեանի մատենադարանի, Թիֆլիսում. թուղթ, նոտր, անյիշատակարան. «Համառօտ» յառաջաբան. սկզբնաւորութիւնն է «Ի ժամանակս թագաւորութեանն». ունի «Հաւատամք»-ը և Դաշանց թուղթը։ ԳԵԷԷ ընտանիքից։

Այսպիսով մեր «Արևելեան» ընտանիքին պատկանող հետևեալ Ձ-երն են մեզ յայտնի. Գ, Էջմիածին 1668—1676 թ., Թ, Աստրախան 1690 թ., որից Է տպագիրը, Ե, Աստրախան 1692 թ., Ժ, (այժմ Լազարեան ճեմարանում) 1699 թ., Է, Աստրախան 1714 թ., Ի և Լ անթուական, Եզեանցի և Թամամշեանցի գրադարաններից։ Սրանց պիտի աւելացնել նաև Եՙ (տես վերևը), որ հաւանականաբար Ձ-իր չէ, յամենայն դէպս չէ կարող լինել Է-ի գաղափարը, այլ տպագրի վրայ կատարուած ձեռագրական բաղդատութիւն, կամ թերևս Ժ-ից ընդօրինակութիւն։ Ուրեմն ընդ ամենը 7 կամ 8 ձեռագիր և մի տպագիր=ԳԹԷԵԺԷԻԼԵՙ։

18. Երուսաղէմում կան հետևեալ Ձ-երը ըստ Մեսրոպ վարդապետի տեղեկութեան.

Խ. Ագաթանգեղոս № 310 Հայոց վանքի մատենադարանի։ Ունի «համառօտ» յառաջաբան, «Հաւատամք»-ը, Դաշանց թուղթը։ Թուղթ, կաշեկազմ, բոլորգիր։ Գրիչ Գրիգոր, ստացող Մոկացի Կարապետ վարդապետ «ի թվին Հայոց Ռ և Ձ (=1631 փրկչ.) ի ժամանակս յորում էր հայրապետ սբ Երուսաղեմի Գանձակեցի տր Գրիգորն սրբազնեալ... ես նուաստ Մոկացի պիտակ անուն վարդապետ Ե պատուական գիրք առի յիշատակ սուրբ Երուսաղէմայ ի դուռն սբ Յակոբայ. նախ Աստուածաշունչ՝ հին և նոր կտակարանքն ի մի տուփ, երկրորդ գիրքն՝ Ե պատմագիրքն և մեծ հարանց վարքն ի մի տուփ. երրորդ գիրքն՝ է արտաքին Սահմանքն Դաւթի, բովանդակ բնաբանքն և մեկնիչքն և լուծմունքն է, ի մի տուփ. չորրորդ գիրքն՝ Տաթևացոյ շինած նոյն արտաքին է գրոց լուծ″. ի մի տուփ. հինգերորդ գիրքն՝ Կանոնագիրքն և Դատաստանագիրքն և տասն ատացուածքն ի մի տուփ...»։ Անշուշտ



Ա խմբի Ձ-իր է, «համառօտ» յառաջաբանով։ Թուականն ընծայաբերութեան թուականն է և ոչ Ձ-րի գրչութեանը, որ աւելի կանուխ է լինելու։

Ծ. Ագաթ. № 230, թուղթ, նոտր. գրիչ Սարգիս եպիսկոպոս Եւդոկացի, «յԵրուսաղէմ ի վանքն ս. Փրկչի» ՌՃԻԸ (=1679 Փրկչական) թուին. «ի հայրապետութեան Եղիազարու և ի վերակացութեան Մարտիրոսի»։ Բովանդակութիւնն է՝ Ագաթանգեղոս, «համառօտ» յառաջաբանով. ունի «Հաւատամք»-ը, Դաշանց թուղթ, «Պատմութիւն յաղագս գիւտի Նշխարաց ս. Գրիգորի Հայոց Լուսաւորչի ի մեծի քաղաքին Կ. Պոլսի, ի ժամանակին յորում Հայոց ՃԽԵ (=696 Փրկչական) էր», Պատմութիւն Մ. Խորենացւոյ, Բուզանդարան պատմութիւնք (Փաւստոս), Ներսէսի Եկեղեցական պատմութիւն. թերի է վերջին տասներորդ գլուխը։ Արտագրուած լինելով Երուսաղէմում՝ Ծ-ն հաւանական է որ նախընթացի ընդօրինակութիւնն է։ Պատկանում է մեր Առաջին խմբին իւր «համառօտ» յառաջաբանով»։

Կ. Ագաթ. № 314, թուղթ, նոտր, ԺԷ դարու Ձ-իր, «համառօտ» յառաջաբանով, ուրեմն մեր Առաջին խմբից. միւս մանրամասնութիւնները մեզ պակասում են։ Երուսաղէմի այս 3 Ձ-երը՝ ԽԾԿ, հաւանաբար պատկանում են Բաղէշի ընտանիքին։ Հնագոյնի ստացողը և ընծայաբերողը Մոկացի Կարապետ վարդապետը լինելով՝ կարելի է ենթադրել, որ Խ-ն ծագում է Հայաստանի հարաւից, ուր տարածուած էին լինելու Բաղէշեան ընտանիքի օրինակներ։ Եթէ մեր այս ենթադրութիւնը ճշգրտուի՝ այդ ընտանիքից կունենանք ժամանակի կարգով Ա 1569 թ., Խ 1631 թուից առաջ, Բ 1672 թ., Ծ 1679 թ., Ջ 1705 թ., Ը և Կ անթուական, ընդ ամենը 7 Ձ-իր=ԱԽԲԾՋԸԿ։

19. Հ. Կարապետ Եզեանցի Ձ-իրը, պատմագիրների մեծ ժողովածու. նկարագրուած է Ստ. Մալխասեանից (տես Ասողիկ, Պետերբուրգ 1885, յառաջաբան, էջ ԼԲ—ԼԹ, ուր և դիմել մանրամասնութեանց համար)։ Առնում ենք միայն մեզ համար կարևորը։ Թուղթ, կաշեկազմ, նոտր, գրիչ Ագաթանգեղոսի՝ Աբրահամ. Ձ-րի միւս մասերն ունին և ուրիշ գրիչներ։ Ագաթ—ի ստացողը՝ Ամթեցի խօճա Թարգի Սահակ։ Թուականով յիշատակարանը—«գրեցաւ ձեռամբ Աբրահամ անարժանի ի Տիգրան քաղաքի ի մատրանին սուրբ Սարգսի ՌՃԺԷ (=փրկչ. 1668) թվականին։ Աղաչեմ յիշել զիս և զծնօղքն իմ զտէր Յովհաննէսն և զԹամամն» են։ Ձ—րի մեծութիւնը 27½×20 հրմտր. (Մալխասեանը թղթի մեծութիւնն է չափել, կազմը փոքր ինչ աւելի կլինի. կազմելու ժամանակ շատ անգամ լուսանցքները կտրելով՝ գիրքը փոքրանում է). «տրոհեալ յէջս երկուս», այսինքն երկսիւն, ինչպէս որ է և մեր Դ-ն, որի գիրքը փոքր ինչ մեծ է (31×23)։ Տիփ կազմութիւնը բոլորովին նման մեր Դ-ին, թէև վերջում ուրիշ գրիչներից աւելի ճոխացած (ընդ ամենը 18 պատմագիր)։ Աբրահամ գրչից են առաջին 11 պատմագիրները, ճիշտ նոյն կարգով՝ ինչ որ Դ-ում, այսինքն է Խորենացի, Ասողիկ, Լաստիվերտցի, Ներսէսի Եկեղեցական Պատմութիւն, Ագաթանգեղոս, Դաշանց Թուղթ են։ Ձ—իրը խնդրեցինք Եզեանից, և ուղարկեց մեզ. (այժմ Մեսրոպ վարդապետի մօտ է), և համոզուեցանք, որ իւր ընթեր-

ցուածներով բոլորովին համընթաց է մեր Դ-ի հետ։ Ինչպէս վերևում տեսանք՝ Դ-ն գրուած է Ալիփունար գիւղում։ Մի քանի Ալիփունար կամ Ալիփունարներից (փունար, փունղար նշանակում է աղբիւր) Դ-ի գրութեան տեղը անշուշտ Դիարբէքիրի Ալիփունարն է, որ վերջերս տխուր հռչակ ստացաւ.*այդ գիւղից էր Արփիարեանին սպանողը։ «Ալիփունար գիւղը գտնւում է Դիարբէքիրից կէս ժամ հեռաւորութեան վրայ դէպի արևմուտք, և նրա բնակչութեան կէսը հայեր և կէսը քիւրդեր են» («Մշակ» լրագիր 1908, № 132, էջ 4, սիւնակ 2)։

Այսպիսով Դիարբէքիրի բնատիպից ունենք՝ Հ 1668 թ., Դ 1676—1678 թ., ս³ անթուական։ Վերջինս է, ինչպէս տեսանք, Օրթագիւղի հրատարակութիւնը (=օ), իսկ բուն Զ—իրը («գրեալ յԱմիթ քաղաքի անթուական», տես վերը Վենետիկեան հրատարակութեանց Զ—րերը) պիտի գտնուի Մխիթարեանների մօտ՝ եթէ միայն նրանց ունեցածը լոկ տպագրի վրայ կատարուած բաղդատութիւն չէ։ Ուրեմն այս բնատիպից մեզ յայտնի անդամներն են ՀԴս³օ։

20. Տանք այժմ մի պատկերով Առաջին խմբի բոլոր Զ—րերի ուսումնասիրութիւնից մեր ստացած հետևանքները։

Մայր Զ—իր




Այս պատկերը մօտաւոր գաղափար է միայն տալիս։ Հազիւ թէ Արևելեան բնատիպը անմիջապէս X-ից ծագած լինի։ Նոյնը պիտի ասել և Դիարբէքիրի բնատիպի մասին։ Գ և Հ չափազանց մօտ և համընթաց են Բ-ի հետ։ Ամենայն հաւանականութեամբ՝ սրանց ծագումը նոյնպէս Բաղէշեան բնատիպի մեզ չհասած մի օրինակից է, մօտաւորապէս այսպէս.




Այս բոլոր Զ—րերը, թւով 18, և երկու տպագիր, էօ՝ ծագած են մի մայր օրինակից, որի յառաջաբանից թուղթ էր ընկած և որն ունէր արդէն մեզ յայտնի բնորոշ պակասը։ Այդ մայր Զ—իրը, ինչպէս ասուեց՝



1569 թուից առաջ գոյութիւն ունէր։ Մեր տպագրի մէջ ԱԲ լիովին տալիս են Բաղէշեան բնատիպի կարևոր ընթերցուածները, ինչպէս որ է տպագիրը Արևելեան բնատիպի հարազատ ներկայացուցիչն է, իսկ օ տպագիրը՝ Դիարբէքիրինը։

## 21. ՁԵՌԱԳՐԵՐ, ՈՐՈՆՑ ԻՆՉ ԽՄԲԻ ՊԱՏԿԱՆԵԼԸ ՄՆՈՒՄ Է ԱՆՈՐՈՇ։

Դրսում եղած մի քանի Զ—րերի մասին մեր ունեցած տեղեկութիւններն այնչափ թերի են, որ հնարաւորութիւն չեն տալիս գոնէ մօտաւորապէս որոշելու այդ Զ—րերի ինչ խմբի պատկանելը։ Այստեղ յարմար ենք համարում տալ այդ Զ—րերի ցանկը։

Զ. Յիշուած է Ղ. Փիրղալէմեանից (Նօտարք Հայոց, Կ. Պոլիս 1888, թիւ 16, էջ 17)։ Յիշատակարանն է. «փառք... որ ետ կարողութիւն ակար անձին իմոյ գրել զպատմութիւն... սրբոյն Գ. Լուսաւորչին ի սուրբ ուխտս որ սուրբ խաչ յորջորջի, յերկիրս Հիզան քաղաքի, ի թուին ՊԾԱ (=Փրկչական 1402)։ Ես Յովհաննէս գծագրեցի ձեռամբ իմով... անուամբ հաւատոր կոչեցեալ... յիշել... և զծնողս իմ զԱլեքսան քահանայն... ես առաւել զերամերջանիկ հայրն մեր Յովհաննէս և զԿիրակոս վարդապետք, որ էին առաջնորդք սուրբ ուխտին... զՄկրտիչ հարպետ և ինձ արեանառու զհօրեղբարսն զՊետրոս և զՍտեփանոս կրօնաւորք... զԳրիգոր սարկաւագ, որ զթուղթ խաղէր...»։ Ունի Դաշանց թուղթը, որի վերջում յիշւում է Տարօնոյ եպիսկոպոս Տէր Աստուածատուրը, «որ օգնական եղև ի նիւթն տառիս, պատահողք մատենիս յիշեսջիք զնա»։ Փիրղալէմեանն այս ընդօրինակութիւնը կատարել է 1867 թ. յունուարի 16-ին «ի Վան ի գիւղն Բէլու»։ Մեր առաջին խմբի բոլոր Զ—րերն ունին Դաշանց թուղթը, ուստի և հաւանօրէն այս Զ—իրն էլ պիտի լինի առաջին խմբից։ Եթէ ճշտուի այս ենթադրութիւնը՝ այդ խմբի հնագոյն ներկայացուցիչը կլինի այս Զ—իրը և թերևս նոյն-իսկ մեր փնտրած Մայր Զ—իրը, որ ինչպէս տեսանք՝ պիտի լինէր յամենայն դէպս 1569 թուից առաջ գրուած։

Ղ. Յիշուած նոյնպէս Ղ. Փիրղալէմեանից (Նօտարք Հայոց, թիւ 220, էջ 186—187), որ օրինակել է հետևեալ յիշատակարանը 1867 թուի յունուարի 26-ին «ի Վան, ի Բէլու գիւղն»։ «Ի թ. Հայոց ՋԶ (=Փրկչական 1457) ես անպիտան ծառայ՝ սպասաւոր սրբոյն Թումայի առաքելոյ սքանչելագործի սուրբ գերեզմանին (ըստ Փիրղալէմեանի՝ այս ուխտը գտնւում է Վարագայ սարի ձորամիջում, «հանդէպ Կողպանից գեղջ» և այժմս տեղացիներից կոչւում է սուրբ Գրիգոր) Տէր Աբրահամ վարդապետ, որ ի յԱղթամար սուրբ խաչին, առնէի չորս գամիչ և չորս եղ և այլ համբուրից փարէն մեր վանիցն է, ով ոք յանդգնի սուրբ առաքելոյ անէծքն ի վերայ նորա եկեսցէ ամէն։ Վկայ Աւետիս եպիսկոպոսն և այլ միաբանք սուրբ վանիցս...»։ Հարց կարող է ծագել, թէ այս Ղ-ը արդեօք ուրիշ Զ—իր է, թէ նախընթացն (=Զ) է, որի մի որևէ բացատում կարող էր այս յիշատակարանը գրուած լինել։ 1867 թուի յունուարին Բէլու գիւղում Ագաթանգեղոսի արդեօք մի՞ ձեռագիր կար թէ երկու։

Ճ. Վենետիկեան Ձ—բերի մէջ տեսանք, որ Մ²-ը Դերջանում գրուած մի Ձ—իր է 1350 թուին, որի ինչ խմբի լինելը մեզ համար մնաց անորոշ (տես վերը)։ Մի ուրիշ աղբիւրից (Մեսրոպ վարդապետ) մեզ յայտնի է մի այլ Վենետիկեան Ձ—իր, որ ընդօրինակուած է Դերջանի Ձ—ից։ Այս ընդօրինակութիւնն անուանում ենք Ճ։ Ճ-ի մասին ունինք հետեւեալ տեղեկութիւնը. «Ի թուին ՌՄԸ նոյեմ. 20 (=Փրկչական 1759) Ագաթանգեղոս օրինակեալ ազգագրեցաւ ի Հայրապետ ի գրչագիր օրինակէ ինչ, որ էր գրեալ ի թուին Հայոց ՉՂԹ (=Փրկչական 1350) ի Դերջան գաւառի, որ հուպ է ի քաղաքն Կարնոյ»։ Ուրեմն Վենետիկում երկու Ձ—իր պիտի ունենան, Մ² և Ճ, վերջինս առաջինից ընդօրինակուած Հայրապետում։ Վերեւում տեսանք, որ Մ²-ը մեզ յայտնի հնագոյն օրինակն է «Սեղբեստրոս» ընթերցուածով։ Այս իսկ կէտը մեզ թւում է կասկածելի։ Թերեւս վենետիկցիք ունին միայն Ճ-ն, որի մէջ արտագրողից կարող էր ներմուծուել «Սեղբեստրոս» ընթերցուածը փոխանակ «Եւսեբիոս»-ի։ Եթէ մեր այս կասկածն արդարանայ՝ այն ժամանակ պէտք է որոնել, թէ ուր է գտնւում այժմ Դերջանի Ձ—իրը, որ 1759-ին եղել է Հայրապետում։ Մխիթարեաններին է մնում այս մասին կէտը պարզել։

Մ. Ագաթանգեղոսի մի ուրիշ Ձ—իր յայտնի է մեզ Տաշեանից (Ագաթանգեղոս առ Գէորգայ Ասորի եպիսկոպոսի, Վիեննա 1891, յառաջաբան էջ Ժ)։ Տաշեանի տեղեկութիւնը հետեւեալն է. «Ձեռագիր Բարձրահայեաց ս. Աստուածածնի վանաց Արղնայ, թիւ 212, ուրիշ 10 կտոր գրութեանց մէջ, բայց դժբաղդաբար թուականը չենք գիտեր։ (Հմմտ. Գ. Սրուանձտեանց, Թորոս Աղբար. Կ. Պոլիս 1885, Մասն Բ, էջ 392)»։

Յ և Ն. Երկու Ձ—իր յիշւում են Գալուստ Շերմազանեանի մատենադարանից, որ անցեալ դարու վաթսունական թուերին այրուեց և կողոպտուեց Թիֆլիզում խառնակութեանց ժամանակ։ Մեսրոպ վարդապետից ունինք հետեւեալ կարճառօտ տեղեկութիւնը. «Берже», էջ 12, հ. XXVI (առանց հրատարակութեան անուան)։ Շերմազանեան Ձ—իրք. 1. Ագաթանգեղոս և Դաշանց, 2. Ագաթանգեղոս թերթ մի ի սկզբան պակաս, նօտրգիր, 3. Նոր-Ջուղայ Ամենափրկիչ վանք, «Բանք սրբոյ Լուսաւորչին և Տրդատայ...»։ Սրանցից երրորդը երեւի մի քաղուածք է Ագաթանգեղոսից. մնում են առաջին երկուսը, որ նշանակում ենք Յ և Ն տառերով։ Յ-ն որովհետեւ ունի Դաշանցը՝ ամենայն հաւանականութեամբ պատկանում է մեր Առաջին խմբին, իսկ Ն թերեւս նոյնպէս Առաջին խմբին. երկուսն էլ երեւի Արեւելեան ընտանիքին։ Յ-ի և Ն-ի մասին պիտի լինեին տեղեկութիւններ Պարիզի ազգային մատենադարանում. տես Մակլէրի ցուցակը № 296, Inventaire des Mss. Armén. de M. Galust Vartanian, ancien maire de Tiflis, rédigé en 1863, envoyé par Bergé à Langlois. ուր նաեւ ցուցակ Տաթեւի վանքի Ձ—բերի, ուղարկուած Բերժէից Լանգլուային (Ancien Suppl. Armén. 82)։

Շ. Կայ Ագաթանգեղոսի մի օրինակ Տոքթ. Յ. Թիրեաքեանի մօտ,



ձեռք բերուած Պարսկաստանում։ Ուրիշ տեղեկութիւններ պակասում են։ Տեղից դատելով՝ թերեւս պատկանում է Առաջին խմբի Արեւելեան ընտանիքին։

Այսպիսով անորոշ խմբի Ձ—բեր ունինք 8 հատ—ԶՂՃՄՅՆՇ և Մ²։ Ղ-ը հաւանօրէն նոյնն է Զ-ի հետ. Ճ-ն ընդօրինակութիւն է Մ²-ից, եթէ վերջինը Դերջանի Ձ-րն է, ապա թէ ոչ՝ Ճ և Մ²-ը նոյնանում են, և մնում է գտնել, թէ ուր է գտնւում այժմ Դերջանի Ձ—իրը։ Բացի Մ²Ճ-ից, որ հաւանօրէն պատկանում են երկրորդ խմբի Ձ—երին՝ մնացածները պիտի լինեն ըստ մեր ենթադրութեան Առաջին խմբից։ Ապագայ հետազօտողներին է մնում այս բոլորը ճշտել։

## 22. ԵՐԿՐՈՐԴ ԽՈՒՄԲ ՁԵՌԱԳՐԵՐԻ.

Ե. Այս խմբի Ձ—երից մեր ձեռքի տակ ունեցած միակ Ձ—իրն է Ե-ն։ Նախապէս այս Ձ—իրը դասաւորուած էր Երրորդ խմբի մէջ՝ նշանակուած լատին տառերով. բայց հարկ եղաւ, մօտ ծանօթանալուց յետոյ՝ հանել նրան Երրորդ խմբից և տեղափոխել Երկրորդ խումբը՝ առանց նշանատառը փոխելու։ Ձ—րի կարեւորութիւնն ստիպում է մեզ՝ աւելի մանրամասն կանգ առնել նրա վերայ։

Ե-ն կաշեկազմ, հաստ աղօրէ թուղթ, խոշոր բոլորգիր մի մեծ Ձ—իր է։ Այժմ թերթերի մեծութիւնը մերձաւորապէս 29×21 սմտր. կազմը թէև հին, բայց ոչ նախնականը։ Ինչպէս երեւում է շատ նշաններից՝ կազմելու ժամանակ լուսանցքները կտրուած են, որով գիրքը բաւական փոքրացել է։ Գրութիւնը երկսիւն, իւրաքանչիւրը 22 տող։

Մեր մատենադարանում այս Ձ—րի համարն է 1656, Կարենեան ցուցակ 1614։ Նախապէս ունեցել է յառաջաբանը ամբողջութեամբ. այժմ թուղթ է ընկած սկզբից, ուստի թերի. սկսուածքը տես մեր տպագրի էջ 2, ծանօթութիւն 4. ունի ընկած թերթեր, պակասներ, և այդ բոլորը մանրամասն նշանակուած են մեր հրատարակութեան մէջ իրենց տեղերում։ Փոքր յիշատակարանների և լուսանցքագրութեանց մի մասը նշանակուած է մեր բնագրի տակ, այստեղ ամփոփում ենք բոլոր յիշատակարանները՝ Ձ—րին լաւ ծանօթանալու համար։ Այժմեան կազմում թերթերը խառնաշփոթ են և տեղափոխուած։ Խնամքով վերստուգելով տալիս ենք թերթերի նախնական շարքը, որով պիտի կարդալ բնագիրը, այսպէս էջ 4, 3, 5—94, 131—134, 99—130, 95—98, 135—143, 156—157, 146—149, *151—155, 144—145, 158—234, *236—261, 326—365։ (Աստղանիշերը ցոյց են տալիս՝ թերթ ընկած։ Կազմողը այս տեղերում դրել է մի-մի դատարկ թուղթ, էջ 150 և 235)։

Յիշատակարաններ. էջ 1ա. իբրև պահպանակ գրուած. դատարկ թղթի վրայ, հին նօտր գրութիւն. «Թվ. Ռ[ՃԻ] խաւարեցօ արեգակն ագոստոսի ը օրն դ շբթի»։ (Թուականի փակագծուածը ծակուած, բայց ընթեռնլի)։ ՌՃԻ=1671 փրկչական թուականին, (և ոչ 1670-ին, ինչպէս պիտի լինէր ըստ Թէօրիայի և Դիւլորիէի)։ 1671-ին հայ եօթներեակն Է՝ է, և իսկապէս օգոստոսի 2-ը ընկնում է չորեքշաբթի, մինչդեռ 1670-ին նոյնն ընկնում է երեքշաբթի։ Այս թուականից առաջ է այժմեան կազմը։

էջ 15բ, ստորին լուսանցքում, բուն գրչից անխլի մանր տառերով. «Ով եղբարք թվի թէ պակաս է յայս գծես. և ի յուրինակէս է որ գր֊գնես մեզ վասն Աստուծոյ»: (Տես մեր տպագրի էջ 25, ծան. 12)։

էջ 47ա, ստորին լուսանցք, բուն գրչից, մանր. «Որ յս ազգա֊մեացի Վարհամ միայնակեցի որ գիմ չուխայն կախել երես». խօսքն անշուշտ չուխան լինելու (=կախել) մասին է: (Տես մեր տպ. էջ 77, ծան. 2)։

էջ 48ա, նոյն գրչից. «Ով համագումար դասք... յիշեցէք ի Քս զորդորիչ գործոյս գհայրապետն և զՄխիթեան փակակալ...»: Տես ամբողջը մեր տպ. էջ 78, ծան. 6)։

էջ 83բ, նոյն գրչից, ստորին լուս. «Վայ մարմնն...»: (Մեր տպ. էջ 128, ծան. 9)։

էջ 87բ, Ագաթ—ի առաջին մասի վերջում, նոյն գրչից. «Յաննուազ բարեն և յանաղատ լուսոյն, յանծայրածաւալ մեծիմաստութեանցն, և յանխնայ ողորմութեանցն, անվայրափակ գթութեանցն և անխմանալի քաղցրութեանցն, ի հաւրէն մեծէ՝ և յորդւոյն միածնէ, և ի սուրբ հո֊գւոյն հայցեցէք ով հոգելից և հաւատարիմ եղբարք աղքատիս հոգւով բարի, խաւարելոյս մեղաւք՝ լոյս, տարակուսելոյս չարեաց՝ մխիթարու֊թիւն, քաղցեալ գազանիս՝ ողորմութիւն յողորմածէն յէ (յիսուսէ), որ է աւրհնեալ յաւիտեանս»: (Մեր տպ. էջ 133, ծան. 13)։

էջ 108բ. ստորին լուսանցքում նոյն գրչից. «Ով մեծ տառապա֊նացս թէ ես յիմէ ձեր փախչիմ, դառն կու փախեմ ու գլս ոչ»: (Մեր տպ. էջ 160, ծան. 6)։

էջ 174բ, ստոր. լուսանցք, նոյն գրչից. «Շնորհալի...»: (Մեր տպ. էջ 243, ծան. 9)։

էջ 247ա. միակ յիշատակարանը նոյն գրչից, որ պահել է գրչի անունը. «զամենամեղս... գգրիչս Դաւիթ յիշել... և զներսէս զհոգևոր եղբայր...»: (Տես ամբողջը մեր տպ. էջ 355, ծան. 3)։

էջ 261ա, Վարդապետութեան վերջում, նոյն գրչից. «Սուրբ լու֊սաւորիչ բարեխաւսեայ առ քս վս մեղուցեալ ծառայիս քո զոր ծնար սուրբ աւազանաւն յանուն սբ երրորդութեանն»:

էջ 275բ, նոյն գրչից «Քս ած յիշեայ...» (մեր տպ—ի էջ 392, ծան. 12։

էջ 325ա, Ագաթ—ի վերջում, նոյն գրչից. «Ողորմութեամբն այ սկսայ ի յամսեանն դեկտեմբեր. ժԵ. և շնորհաւք սուրբ հոգոյն կատա֊րեցի ի մարտ. Լ. Որ հասուցեր զմեզ ի գիծ վերջի այսմ նամակի որ երրորդութիւն. քեզ փառք յերկնաւորաց և յերկրաւորացս և ի հա֊մայն եղելոցս»: Մեր տպ. էջ 472, ծան. 3. ուր տպագրի ժէ-ն պիտի ուղղել ժԵ: Ամբողջ Ագաթանգեղոսը գրուած է ուրեմն 106 կամ 107 օրում։

էջ 325բ. մի երես դատարկ թողած, որից օգտուել են յետագա֊ները, զանազան ժամանակ, այլևայլ ձեռքով, տարբեր թանաքով և գրչութեամբ աւելացնելով յիշատակարաններ, խառն ի խուռն գրչա֊փորձեր են: Դրանցից մեզ համար կարևոր են հետևեալները.

1. խոշոր բոլորգրով. «Արդ գրեցաւ գիրս /ի թվին Հայոց /: Զժ:»։



Ուրեմն Հայոց Զժ կամ փրկչական 1261 թուից յետոյ չէ կարող լինել այս Ագաթանգեղոսի գրութիւնը։

2. Ուրիշ գրչութեամբ, բոլորգիր. «յանուն այ / յապաուլ (յետոյ ուղղած՝ ապաուլ) քարիմ ծառայ այ / ի թվիս հայոց: ՊԾԹ:», որ կար֊դում եմ 840 (=փրկչ. 1391), ուրեմն տասնչորսերորդ դարից։

3. Թերևս նախընթաց ձեռքից. «Ոուճա շահամիր ծառայ այ»:

4. Աւելի նորագոյն գրչութեամբ. «Արդ ես Արիստակէս սուտանուն աբեղայ որ զա՛ծարան գիրք[ս] տեսայ ու բերի ի վանքս Մելտենու ի դուռն սուրբ լուսաւորչին. ով որ կարդայ ու բան աւկտի ած թողու զիւր մեղքն և զծնողին: Գրեցաւ գիրս. ՋՀԲ». ուրեմն հայոց 972 կամ Փրկչական 1523 թուին այս Ագաթանգեղոսը բերուել է Մելիտինէ: Զանց ենք առնում աւելի նորագոյն յիշատակարանները։

էջ 326ա, նոյն Դաւթի գրչութեամբ սկսում է «Ոսկեբերանի» Լուսաւորչի ներբողեանը. «Երանելոյն յովհաննու ոսկեբերանի Կոս֊տանդնուպալսի եպիսկոպոսապետի ասացեալ, վասն վարուց... Հրաշալի է մեզ տաւնս» են: (Տես Սոփերք Դ, Վենետիկ 1853)։

էջ 365բ երկրորդ սիւնակը վերջանում է հետևեալ տողերով. «Ի բանսարկու թշնամոյն փորձեցար: Ընդ Քի», և այսպէս մնում է թերատ Լուսաւորչի ներբողեանը (տես Սոփերք, Դ, էջ 81, ներքևից 2-դ տող)։ Ներբողի վերջին մասը և Դաւիթ գրչի վերջին մեծ յիշատակարանի սկիզբը պակասում են. 365 և 366 թերթերի միջև թուղթ է ընկած, ինչպէս նաև յիշատակարանի վերջից։

էջ 366ա—367բ, սկզբից և վերջից թերի՝ այդ յիշատակարանն է, բաւական մաշուած, ստորին լուսանցքները կտրուած և տեղ-տեղ կար֊կատաններով կամ անընթեռնելի: Յիշատակարանիս պարբերութեանց սկզբնատառերը սովորականից խոշոր են, և, պակաս մասը ենթադրա֊բար լրացնելով՝ կազմում են հետևեալ ծայրայանգը կամ ակրոստիքը։

«[ԶԴաւիթ գր]իչ Յի[շ]եցէք ի տէր»: Դնում ենք յիշատակարանիս մնացորդն ամբողջութեամբ։

«իսկ յետ բազում ժամանակաց ծագեաց լոյս ա՛ծգիտութեան ի խաւար մեզաւք յաշխարհն Հայաստանեայց, զոր և ինքն իսկ տէր մեր ասաց՝ Ոչ են կամք հաւր իմոյ թէ կորիցէ ի փոքրկանցս յայսցանէ: Նաև գթացեալ փոխանակ առաքելոցն առաքէ զմն սուրբ, զԳրիգորիոս ասեմ, զբազմաչարչարն, զխոստովանողն, զխարազանազգեցն, զՔաջաէրն, զհամբերատարն, զփշխանակիցն Պետրոսի և Պաւղոսի սբ առաքելոցն։

Զարչարեալ տասն զանազան տանջանաւք, որ և զայս նամակս (համա. վերևը էջ 325ա յիշատակարանում նոյն ասացուածը) շարագրեաց մեծ[ահանճար] քարտուղ[արն ագա]թանգեղոս [ի սկզբան(է)] մինչև ցկատա[րումն]: (Փակագծուածները կարկատանի վրայ)։

Յայս իսկ [.......]* թար եալ (տողամիջում՝ եղ=եղեալ*) ի բազ֊մաշահ մեծագին գանձուցս սուրբ եղբարց մեծ և հռչակաւոր անապա֊տիս Ակներ կոչեցեալ, զի ունելով այլ գիրս զձուարընթեռնլի, զի ոչ

*) Բնագրում իւրաքանչիւր տողը մերձաւորապէս 15 տառ ունի. մեր ամեն մի կէտը մի տառ է նշանակում։

տխրժէին ընթեռնուլ ի ժամատեղ կամ ի սեղան համարձակ (Նախապէս՝ համարձակապէս):

Իսկ կամակից եղեալ առաջնորդք ուխտիս փոխեալ (=փոխել) զայս յայլ գիր, որով և իմ յանձն առեալ զհրամանսն ի պատուական հարց և եղբարցս գրել զսա.

[Ընդհ]ակ ամենա[.......] կատարե[......] կարողութեան [......] ոչ եթէ գիտէի զարուեստ գրչութեան յանդգնեցաք ի գործս. այլ ըստ յուսոյ մեր որ ի սուրբ յուխտս, և ըստ հրամանի պատուական եղբարցս, որպէս և գրեալ է, թէ Կեանք է լսողութիւն:

Եւ արդ աղաչեմ և մախթեմ զձեզ ով ամենամաքուր և հոգեպայծառ սբ դասք քահանայից և միայնակեցաց որք հանդիպիք այսմ տառի կամ ընթերցմամբ՝ կամ գաղափար առնլով. յիշել առ Քս զպատուական հայրն զԳրիգոր մաքրակրօն քահանայ, և զտր Բարսեղ, և զՎարդան վարդապետ, աքանչելի վարուք փայլեալ ի մէջ եկեղեցոյ. և զփակակալ Սիմէոն և զՀայրապետ (Հմմտ. վերի յիշատ. էջ 48ա) ամենայնի սրբասէր և ա՛ծահաճոյք, նաև զհոգևոր եղբայրս իմ զՆերսէս և Յոհաննէս յոյժ պիտանի և աւգտակար ի գործս բարիս. և զայլ ամենայն եղբայրութիւնս որ ոչ էր կար մի ըստ միոջէ անուանել: Աղաչեմ յիշել և զԹորոս միակեաց և զԳրիգոր որ աշխատեցան ի կոկ թղթիս, նաև զմնաեւ և զմարմպան (=մարմնապան) և զհոգացպան և զփամպան (=փնապան) և զամենայն աշխատողս առ Քս յիշել. զսուրբ ծնողսն զՍարգիս և զԿարապետն [......]:

Ցուցից և ձեզ սիրելիք փոքր ի շատէ զթշուառութիւն իմոյ ակարութեանս, որ տրուպ և անարգ և անպիտան յամենայն գործս. զի չեմ առացեալ գործ բարի, այլ զամենայն խոտոր և չար և անշահ:

Է և ինձ պատմել, զի գոլով իմ ի նահանգէն յարևելից, յԱյրարատեան գաւառէն, ի գեղակէն Բջնոյ, և իմ խոցեալ չար վիրաւք հոգւոյս զանազան մեղաւք. ապա այնուհետև որպէս զչար վիրաւք հարեալ մարդ՝ ի խնդիր եղեալ բժշկի և ոչ ուրեք գտեալ, այլ միայն դէմ եդեալ գնալ ի սուրբ քաղաքն Երուսաղէմ և ի Հռոմ՝ ի պատկերն անձեռագործ [և սբ, (վրան աւելացրած գ=զսուրբ) Պետրոս] և Պաւղոս, նաև յա՛ծածին որ ի ծագս տիեզերաց և ի սբ առաքեալն Յակոբ:

Քանզի ոչ եթէ վասն պանծանաց գրեմ զայս, այլ վասն մեծ մեղաց իմոց որ անհուն է և անչափ է:

Իսկ դարձեալ (պիտի աւելացնել և լսեալ) զհամբաւ բարեաց և սբ կրաւնք և կանոնք այսմ մենաստանիս (և) յոյժ ցանկացայ, և եկեալ իմ յուսով մեծաւ և աշխատութեամբ յոյժ և տուայ[տանաւք]:

Տեսեալ զիս ատար և պանդուխտ ողեւէր եղբարցս՝ և գթացին յիս իբրև զծնաւղ և ցուցին ինձ սէր իբրև զոր Յս, զոր հատուցէ Քս սոցա ըստ իմ[.........կ]եանս տացէ հանդերձեալ յաւիտենից ընդ սրբս իւր. և ոչ միայն զայս, այլ ես տաւել ցուցին յիս գթութիւն:

Եւ ես ոչ ունելով զձև սոցա և զկարգ, զի ամենեքեան իբրև զհրեշտակս ա՛յ արթուն և զուարթուն ի յաւրհնաբանութիւնս ա՛յ ի տուէ և ի գիշերի անդադար և անհանգիստ, և զայս տեսանելով իմ, վայ



և եղուկ ասելով անձին իմոյ, զի թափուր գոլով ի կրաւնից սոցա և յառաքինութենէ:

Թամեալ զիս այնուհետև զմտաւ ածի զգործս զայս թերևս լինիմ կցորդ բարեաց սոցա: Ուրեմն և որդորելով (Հմմտ. որդորել, յիշտ. էջ 48ա) զիս և խրախուսելով սբ հարցդ որ ի վերոյ գրեցաք. քանզի և մեր արն անարգամեծար է, ընդունի զաշխատութիւնս իմ որպէս զխերեւչ այրոյն և զմաղ այծեաց ի սպաս տաճարին: Եւ դարձեալ մեխրամած զիմաւք և սրտառուչ հառաչմամբ աղաչեմ զսրբութիւնդ ձեր անմեղադիր լինել սխալանացս և սիրով ուղղել, զի այս էր կարողութիւն իմ, այլ ի տառյդ աւրինակէ գրեցի և ըստ չափու զգրադարձ...»: Այստեղ վերջանում է Ն-ն, Զ—իրը և յիշատակարանը մնում են թերի:

23. Այս մանրակրկիտ հետազօտութիւնից ստանում ենք հետևեալ եզրակացութիւնը: Ն-ի գրիչն է Դաւիթ Բջնեցի, որ ուխտ է գնացել Երուսաղէմ, Հռոմ և այլ արևմտեան ուխտատեղիներ: «Անձեռագործ» զրուցապատում պատկերի յիշատակութիւնը Հռոմում՝ հազիւ թէ կռուան ծառայէ որևէ ժամանակագրական վարկածի: «Աբգարի» դաստառակի Պոլսից Իտալիա փոխադրուելու զրոյցը աւելի նոր է: (Հմմտ. Ս. Դաստառակ, Մաղաքիա վ. Սամուէլեանի, Վիեննա 1850. նոյնը կայ և գերմաներէն): «Ա՛ծածին ի ծագս տիեզերաց» հմմտ. Գաբրիէլ Ղալաթիացու († ՌՃԺԱ =1662, սեպտ. 17, չորեքշաբթի) վկայաբանութեան մէջ ասուածի հետ. «Գնաց յերկիրն Ֆրանկաց... շրջեալ ի տեղիս ուխտից որ անդր կան. առ տապանի սրբոյն Յակոբայ տեառն եղբօրն, և ուխտս արարեալ առ սուրբ Աստուածածինն որ Եզր ասի, և առ սուրբ առաքեալքն Պետրոս և Պօղոս»: (Հայոց Նոր Վկաները, Յ. Մանանդեանի և Հ. Աճառեանի, 1903, Վաղարշապատ. գիտակ. հրատ. էջ 485): Դաւիթ Բջնեցին ուխտագնացութիւնից վերադառնում է Կիլիկիա՝ Ակներ կամ Ականց հռչակաւոր վանքը, ուր «հայր» էր Գրիգոր «քահանան» (անշուշտ կուսակրօն). յիշւում են նաև տէր Բարսեղ, Վարդան վարդապետ, Սիմէոն փակակալը, Հայրապետ և ուրիշները: Ակներում կար մի այլ Ագաթանգեղոս, հին, անշուշտ երկաթագիր, «դժուարընթեռնլի», այնպէս որ միաբանները դժուարանում էին կարդալ ժամատեղում կամ սեղանատանը. և ահա Դաւիթն այդ Ագաթանգեղոսը փոխում է «յայլ գիր», այն է ընդօրինակում է խոշոր և դիւրընթեռնլի բոլորգրով. եկեղեցում կարդացուող ընթերցուածների կողքին խաչով նշանակելով վերնագիրը †«Համբարձմանն» (էջ 175բ). †«Հոգեգալստեանն» (էջ 177բ). ԵՒն: Եթէ Ն-ի մայր օրինակը նոյնչափ հնութիւն ունէր, որչափ ունի այժմ Ն-ն մեզ համար (6—7 դար)՝ այն ժամանակ այդ դժուարընթեռնլին պիտի լինէր Զ կամ Է-երորդ դարու գործ, որին մենք ոչ մի արգելք չենք գտնում: Սակայն պէտք է աւելի ճիշտ որոշել Ն-ի ժամանակը: Հէնց առաջին հայեացքից իրադեկ բանասէրը կհամոզուի գրութեան ձևից և թղթի որակից, որ Ն-ն ԺԳ-երորդ դարու գործ է: Վերևը մէջ բերինք երկրորդ ձեռքից յիշատակարան, որ ասում է. «Արդ գրեցաւ գիրս ի թվիս Հայոց ՉԺ (=1261): Գիրս բառով մենք հասկացանք յիշատակարանս: Բայց հնարաւոր է և ուրիշ մեկնութիւն: Գիրս կարող է

նշանակել գիրքս, այսինքն «գիրքս (=Ագաթանգեղոս) դրաւեց ՉԺ-ին»։ Երևի յիշատակարան գրողը ազդուել է Դաւթի գրածից—«զի անկեալ այլ գիրս դժուարընթեռնլի... (փոխեցի) զսայ յայլ գիր»։ Իսկ ՉԺ թուականն առած կարող է լինել՝ մեծ յիշատակարանի այժմս պակասող մասից։ Այս ենթադրութեամբ Ն-ն գրուած ենք համարում ՉԺ թւին։ Շարժական տոմարով այս հայ տարին ընկնում է 1261 յանուարի 15-ից (=1 Նաւասարդի) մինչև 1262 յանուարի 14-ը։ Այսպիսով Դաւիթ Բջնեցին սկսած պիտի լինի իւր ընդօրինակութիւնը 1260 թուի դեկտեմբերի 15-ին և վերջացրած 1261 (=ՉԺ) մարտի 30-ին։

Յամենայն դէպս Ն-ն չէ կարող Հայոց ՇՂ=Փրկչ. 1141 թուից առաջ լինել, որովհետև այդ թուին է «Ոսկեբերանի» Լուսաւորչին նուիրուած ներբողեանի թարգմանութիւնը Աբրահամ Ղրամատիկոսի ձեռքով. (տես Սոփերք, Դ, էջ 86 և ներքևում մեր β ճառընտիրը), և ոչ էլ ուշ 1261-ից։ Ակներևի վանահօր (Գրիգոր), փակակալի (Սիմեոն) և այլ միաբանների անունները հնարաւորութիւն պիտի տան ապագայում աւելի ևս ճշտելու մեր որոնած թուականը։ Ակների մասին տես մանրամասն Սիսուան Ալիշանի, էջ 153—156, Տաշեան ցուցակ, էջ 361, 661, 790. Բջնու մասին՝ Այրարատ էջ 270—276։

24. Երկրորդ խմբից՝ անմիջապէս մեր ձեռքի տակ եղած միակ Զ—իրն է Ն-ն։

$v^{5}$. Ն-ին շատ մօտ, համանման ընթերցուածներով, մի Զ—իր է Վենետիկի $v^{5}$, գրուած ՌՃԽԶ=1697 թուին։ Ն-ն և $v^{5}$-ն միայն ունին «Տաճառ փեսայ Արտաւանայ» են. (տես մեր հրատ. § 121, ծան. 3) ընթերցուածը։ Ամենայն հաւանականութեամբ $v^{5}$-ը միջնորդաբար կամ անմիջապէս ընդօրինակութիւն է Ն-ից։ $v^{5}$-ի մասին տես վերևը, Վենետիկեան տպագիրները։

Մի թեթև ակնարկ մեր հրատարակութեան վրայ՝ բաւական է համոզելու, որ բացի մի քանի առանձնայատուկ ընթերցուածներից Ն և է-ն միևնոյն խմբից են և ամբողջ Ագաթանգեղոսում ծայրէ ծայր ընթերցուածներով ընթացակից։ է-ն (=Թիֆլիսի տպագիրը) տարատպութիւն է Վենետիկեան հրատարակութիւններից (պարզութեան համար այդ հրատարակութիւնները անուանենք $v$ա և $v$բ), իսկ վերջիններս բղխում են Պարիզի Զ—րից։

R. Պարիզի Զ—րի մասին վերևում խօսեցանք։ Գրուած է Վարդան քահանայից Հայոց ՉԳ=Փրկչական 1254 թուին «Ռիմ» քաղաքում։ Բուն յիշատակարանը ամբողջապէս չունինք։ Տես բացի վերևում մէջ բերուածից և Սամուէլ Անեցի, Վաղարշապատ 1893, հրատ. Արշակ Տէր Միքելեանի, էջ 266, ծան. 22)։ Գրուած է Յովհաննէս եպիսկոպոսի խնդրանքով։ Մակլէրը Պարիզեան հայ Զ—ների նոր ցուցակում աւելացնում է նաև՝ pour l'usage de l'évêque Jean et de ses prêtres Daniel et Siméon (տես № 112)։ Պարիզեան այս Ագաթանգեղոսը անուանում ենք R. R-ից է Վենետիկցիների ունեցած ընդօրինակութիւնը=$v^{1}$ և տպագրի վրայ բաղդատութիւնները։

Վենետիկցիների Զ—րերի մասին ունեցած մեր տեղեկութիւններն



ընդհանրապէս անբաւարար են և հակասական։ Շատ անգամ որոշ չէ, թէ Զ—իր կամ «օրինակ» անուանուածը իսկապէս բուն Զ—իրն է, թէ ընդօրինակութիւն, կամ լոկ բաղդատութիւն տպագրի վրայ։ R-ից եղած մի ընդօրինակութեան մասին հետևեալ տեղեկութիւնն ունինք Մեսրոպ Վարդապետից. «Ագաթ. նոր նորոգիր, վարդապետութիւնը միայն. օրինակեալ է Պարիզ յօրինակէ գրելոյ ի թուին ՉԳ ի Վարդան քահանայէ ի Ռիմ քաղաքի»։—«Տպագիր բաղդատեալ ընդ օրինակին Փարիզու, 1824 թիւ»։ Վենետիկցիների ունեցած այս բոլոր նիւթերը հասկանալով $v^{1}$ նշանագրի տակ՝ կունենանք հետևեալը ծագման կարգով. R—$v^{1}$—$v$ա—$v$բ (Վենետիկեան տպագրեր) և է։

$v^{6}$. Վենետկեան մի ուրիշ Զ—իր՝ $v^{6}$ նորոգիր, թերի, գրուած Լեհաստան, ըստ Մխիթարեանների վկայութեան «բաղում մասամբ սա զհետ ընթանայ Փարիզեան օրինակին» (տես վերևը)։ Այս Զ—իրն էլ ուրեմն R-ի խմբից կարելի է համարել և նրանից կամ նրա նման մի օրինակից ծագած։

բ. Վիեննայի կրկնագրի (բ) մասին վերևը խօսեցանք։ Իւր ընթերցուածներով, որչափ որ մեզ ծանօթ է՝ բ-ն շատ մօտ է Նէ-ին. տես Ագաթ—ի յառաջաբանի ընթերցուածները և Տաշեան Ցուցակ էջ 263—265, ուր կայ մի քանի էջ կրկնագրից։ «Կրկնագրիս մէջ Ագաթանգեղեայ հատուածոք կան Յառաջաբանէն, Առաջին մասէն և նաև Վարդապետութենէն։ Վերջին պատմական մասէն ամենևին հատուածոր չկայ, և այն արդէն կը պակսէր ապահովապէս նախնականին մէջ»։ (Տաշ. Ցուցակ էջ 261)։ Վերջին կէտին հազիւ թէ կարելի լինի համաձայնել։ Քանի որ բ-ն ունի Յառաջաբանում Ագաթանգեղոս անունը, Կորիւնից ընդմիջարկուած հատուած՝ պիտի ունենար ապահովապէս և վերջին (Երրորդ) մասը, ուր կայ Ագաթ—ի գլխաւոր Տրդատին և Կորիւնի հատուածների ամենամեծ թիւը։ Ընդմիջարկուած կտորները Ագաթանգեղոսի սկզբում և վերջում կապուած են միմեանց հետ օրգանապէս և միևնոյն գրչից են։ Ուստի բ-ի Երրորդ մասի պակասելը պիտի վերագրել լոկ պատահականութեան։ Կրկնագրի թերթերը նոր գրութեան համար գործածողը օգտուել է որոշ թուով թերթերից, և դրանից հազիւ թէ ուրիշ հետևանք կարելի լինի հանել։ Անշուշտ բ-ի ամբողջական հրատարակութիւնը կարող է փոփոխել մեր դատաւորութիւնը, բայց առ այժմս, մեր ձեռքի տակ եղած նիւթի վրայ հիմնուած՝ բ-ն դասում ենք Երկրորդ խմբում։ Ըստ Տաշեանի՝ բ-ն ամենաուշը Թ—Ժ դարու գրութիւն է։

ա. Այս խմբից՝ է նաև ա ճառընտիրը իւր Ագաթանգեղոսեան հատուածներով, շատ աւելի մօտ Նէ-ին քան Երրորդ խմբին։ ա-ն ԺԲ-երորդ դարու վերջումն է գրուած. տես վարը ճառընտիրների մէջ։ ա-ի ընթերցուածները տես մեր հրատարակութեան էջ 30-ից սկսած, նաև Վարդապետութեան մէջ։

E. Այս խմբից՝ ենք համարում նաև մի հին Զ—րի մնացորդը, մագաղաթեայ երկու պատառիկ, որոնց վրայ կարդացուում են մեր հրա-

տարակուսեան § 190—193 պարբերութեանց մասը։ Այդ Ձ—իրն անուանում ենք E։ Դատելով այժմեան չորս մասի բաժանուած մագաղաթեայ թերթից՝ E-ն եղել է երկու սիւնակով, իւրաքանչիւր սիւնակը 23 կամ 24 տող, խոշոր երկաթագիր, երեւի մեծութիւնը մերձաւորապէս 34×28 հրմտր., գրութիւնից և ուղղագրութիւնից դատելով՝ ամենաուշը ԺԲ-երորդ դարու գործ։

X. Այս Երկրորդ խմբիցն է նաև Առաջին խմբի մեր որոնած մայր Ձ—իրը=X։ Մեր այս ասութիւնը կարող է շփոթել ընթերցողին—Առաջին խմբի Ձ—րը վերագրում ենք Երկրորդ խմբին։ Բայց ինչ է խումբ կոչուածը։ Երբ մի օրինակից կատարւում է երկու ընդօրինակութիւն, նոյն-իսկ միևնոյն գրչի ձեռքով՝ անհրաժեշտօրէն այդ երկու ընդօրինակութեանց մէջ առաջ են գալիս տարբեր ընթերցուածներ, մի քանի բառ մոռացւում են, այս կամ այնտեղ սպրդում են վրիպակներ և այլն։ Նոր ընդօրինակութեանց ժամանակ հետզհետէ, կամաց և ակամայ, աւելանում է տարբերութեանց թիւը, և գնալով՝ նախկին երկուօրեակ սերունդը ճիւղաւորւում է, և նոյն ընտանիքի անդամները հեռանում են միմեանցից, ներկայացնելով իւրաքանչիւրը տարբեր ընթերցուածների աւելի մեծ թիւ։ Լուսանցքագրութիւններից, գիտակցաբար կատարուած սրբագրութիւններից աւելի ևս բարդանում է գործը և շեշտւում այլազանութիւնը։ Դասաւորողի հայեցողութիւնից է կախուած ընտրել այս կամ այն մոմենտը խմբերի բաժանման կէտը որոշելու։ X-ը թէև բաւական շատ տարբեր ընթերցուածներով՝ անշուշտ Երկրորդ խմբի ձեռագիր էր։ Մի արտաքին պատահար—թերթերի անկանոն յառաջաբանում, առաջ բերեց կերպարանափոխութիւն, և ստացուեց «համառօտ» յառաջաբանը։ Բոլոր Ձ—րը «համառօտ» յառաջաբանով՝ անուանեցինք Առաջին խումբ։ Բազմաթիւ ընդօրինակութիւններ, անթիւ վրիպակներ, ապէտ գրիչների գործ, անուշադրութիւնից առաջացած պակասներ, նաև ընդմիջարկութիւն Զենոբ Գլակից (Ա, Զ) մեծամեծ փոփոխութեանց ենթարկեցին Առաջին խմբի օրինակները։ Եթէ ունենայինք X-ը՝ առանց այլևայլութեան կարելի կլինէր դուրս ձգել բաղդատութիւնից ամբողջ Առաջին խումբը։ Մեր հրատարակութեան մէջ X-ին փոխարինում են ԱԲ, որոնց մասին վերևը խօսուեց և գնահատութիւնը տրուեց։ Բաւական է մի ակնարկ մեր բաղդատութեանց վրայ, և կտեսնուի որ ծայրէ ծայր ամբողջ Ագաթանգեղոսում ԱԲ (=X) զուգընթաց են ƀE-ին և ƀEԱԲ հակադրւում են a (c) d-ին (Երրորդ խումբ)։

Ուրեմն Առաջին խումբը ծագում է Երկրորդ խմբի մի Ձ—ից՝ X-ից, իսկ X-ին փոխարինում են մեր հրատարակութեան մէջ ԱԲ։

Յոյնը $v^7$. Այս խմբի Ձ—ից է թարգմանուած յոյնը (վերջին անգամ հրատ. Լագարդ)։ Յոյնը յատկապէս մօտ է իր բազմաթիւ ընթերցուածներով ƀ-ին։ Այս ազգակցութիւնը ապացուցանելու համար հարկաւոր է յատուկ ուսումնասիրութիւն։ Բաւականանանք մի երկու օրինակով։ Քաղաքական և կրօնական (Քաղկեդոն) պատճառներով Հայերից ատուած Մարկիանոսի՝ բանաւորների թւում յիշուելը (§ 868, ծան. 11) ունին Յոյնը, ƀ-ն և ճառընտիրներից ց-ն։ R և նրանից ծագածներն ունին



Մարտիանոս։ Երկրորդ խմբի միւս անդամները, նաև Առաջին և Երրորդ խումբը՝ չունին Մարկիանոս։ Բոլոր Ձ—երի «մինչև ի սահմանս Կասպից» ասացուածի փոխանակ՝ միայն Յոյնը և ƀ-ն ունին «մինչև ի դրունս Կասպից»=πυλῶν Κασπίων (Լագարդի հրատ. էջ 77, տող 70)։ § 36-ում մինչդեռ Առաջին խումբը կարդում է Ոյծքն, R՝ Ոյծք, Երրորդ խումբը՝ Սոյծք, միայն ƀ-ն ունի Սոյգն, որի տառացի թարգմանութիւնն է յոյնը τόπος χάσματος (էջ 12, տող 77)։ Եւ այսպէս ուրիշ տեղեր։ Միւս կողմից ƀ-ն նոյն իսկ յատուկ անուանց ուղղագրութեան մէջ յաճախ տառացի հաւատարիմ է մնում յոյն ձևերին, օրինակ «Կապադովկացւոց». մինչդեռ միւսները, հայ լեզուի օրէնքների համաձայն, մի պ-ով, իսկ Երրորդ խումբը՝ Կապուտկացւոց (§ 796, ծան. 3)։ Նոյնը ճշտութեամբ կրկնւում է և § 861, ծան. 12։

Ամփոփելով այս բոլորը՝ Երկրորդ խմբից կունենանք հետևեալ Ձ—երը —

p (Թ—Ժ դար), E (ԺԲ դար), α (ԺԲ դար), R (1254 թ.), ƀ (1261 թ.), X (1569 թուից առաջ), $v^5$ (1697 թ.), $v^6$ (թուականն անյայտ), $v^1$ (անյայտ կամ 1824), և տպագրեր՝ va (1835 թ.), vp (1862 թ.), t (1883 թ.)։ Սրանց վրայ աւելացնելով և Յոյնը՝ ընդ ամէնն 9 ձեռագիր, 3 տպագիր և Յոյնը։

Մեզ յայտնի բոլոր Ձ—երը, բոլոր խմբերի, նաև Յոյնը՝ ազատ չեն Կորիւնի ընդմիջարկուած հատուածներից։ Մինչև այստեղ մեր նկարագրած Ձ—երը դասաւորելով կստանանք հետևեալ պատկերը.

Կորիւնեան խմբագրութիւն.




(Երկու գիծը ցոյց են տալիս անմիջական ծագում, մի գիծը՝ ենթադրական կամ միջնորդաբար, կողմնակի (մի որևէ ազգակից Ձ—ից) ծագում)։

## 25. ԵՐՐՈՐԴ ԽՄԲԻ Ձ—ՐԵՐ։

Այս խմբից անմիջապէս մեր ձեռքի տակ ունինք 3 Ձ—իր (ամբողջ Ագաթանգեղոս)—a, c, d և մի տօնական՝ β։

a, № 1655 մեր մատենադարանի, Կարենեան ցուցակ 1613, կաշեկազմ, թուղթ (ոչ մագաղաթ), հին բոլորագիր։ Կազմը քայքայուած, թերթերը շատ տեղ պատառոտուն, լուսանցքները (մանաւանդ ստորին) կարկատաններով։ Անհրաժեշտ է անպայման նորից կազմել Ձ—րը, կորստից ազատելու համար։ Անազարտ մնացած թերթի մեծութիւնն է 33×25 հրմտր. երկսիւն, տող 25, նորոգուել է մի քանի անգամ։ Նորո-

գութեան համար գործ են ածուած հին ձեռագրեր, տպագրի թերթեր, և չգրուած հին թուղթ: Ինչպէս այս, նոյնպէս և նախընթաց Ն Զ—րը մանրամասն նկարագրուած են Ստ. Կանայեանցից. տես Հանդէս Հայագիտութեան=Zeitschrift für armenische Philologie, Մարբուրգ, 1904, էջ 286—303: Մեր և Կանայեանցի նկարագրութեան մէջ տեղ-տեղ եղած տարբերութիւնները վերստուգութեան արդիւնք են: Սկզբից, շատ տեղեր միջից և վերջից, թերթ ընկած: a-ի պակասները մեր հրատարակութեան մէջ լրացնում ենք c-ից, որ, ինչպէս պիտի տեսնենք՝ ընդօրինակութիւն է a-ից: Բացի Ագաթանգեղոսից a-ն ունի և «Լուսաւորչի» Յաճախապատումը: Այս Զ—րից օգտուել է և Արշակ Տէր-Միքելեանը (տ. «Յաճախապատում», Էջմիածին 1894:) Զ—րս «Հաւատամք» և «Դաշանց թուղթ» չունի, ինչպէս և սպասելի էր: Նոր ցուցակագրողը բովանդակութեան մէջ յիշում է և «Դաշանց թուղթ», անշուշտ սխալմամբ, միւս Ագաթանգեղոսների բովանդակութիւնից խաբուած: Զ—րիս թերթերը դասաւորուած են շատ խառնաշփոթ, յետ և առաջ: Կանայեանցն աշխատել է վերակազմել և տալիս է թերթերի սկզբնական կարգը, թէ Ագաթ—ի և թէ Յաճախապատումի համար, ստորանիշերով նշանակելով ընկած թերթերը: Զ—րով օգտուողը պիտի դիմէ Կանայեանցի աշխատութեանը: Մանր-մունր յիշատակարաններ, Զաքարիայի ոտանաւորը ևն զանց ենք առնում (տ. Հանդէս Հայագիտ.):

Ձեռագրի վերջում կայ գրչի յիշատակարանը, դժբախտաբար առանց անուան. «Յամենայնի զաւրացուցչին խմո, և աստուածաբար խնամողին, յսկզբան գրոց մինչև ի վերջին գիծս, փառք, պատիւ» են: Հետևում է բուն յիշատակարանը. «Յիշատակարան սուրբ գրոցս. որք աստուածային փառացն են ցանկացեալ... Արդ պատուական հայրապետին տեառն Համազասպա, յսուով բարերարին Աստուծոյ տեառն Յիսուսի նահցեալ ի սեր վկաիցն և ի համբերութիւն սուրբ հաւրս մերոյ Գրիգորի լուսաւորչիս, եա գրեալ (=գրել) զսուրբ մատեանս կոչեցեալ Ագաթանգեղոս վասն յիշատակի և միջնորդութեան յաւուր ահ[աւ]որ և մեծ ատենի, անդ ուր բանքն սպառին և գործքն թագաւորեն: Եւ ընձեցոյց զսա ի սուրբ Կարապետն, ի Վանս Յոհաննու, ի լուսաւորութիւն հաւատացելոց և ի վարժումն մանկանց եկեղեցւոյ և ի փառս անմահ բանին աստուծոյ որ է աւրհնեալ յաւ՟՟»: Ի թվ. ՉԽԲ (=1293 փրկչ.): Հետևում է նորագոյն թղթի վրայ Զաքարիա սարկաւագի ձեռքով գրուած նորոգութեան յիշատակարանը. «Շնորհօք... եղև նորոգումն այսմ պատմագրի... ի թուին Ռ. և Ճ. Խ և Գ. (=փրկչական 1694) ի Թորգոմեան սեռի, յերկրիս Արարատեան ի գաւառս Կոգբւոյ, ի հրաշափառ և գերապանծ սուրբ ուխտս Յոհաննու վանք... ի թագաւորութեան պարսից Շահ Սուլէմանի և յիշխանութեան տանս Արարատեան Շահղուլի բէկի (նոտրագրուածը ուրիշ թանաքով, թէև նոյն ձեռքից՝ յետոյ աւելացրած): Եւ ի կաթողիկոսութեան սբ Էջմիածնի Տեառն Նահապետի: Եւ առաջնորդութեան սուրբ ուխտիս՝ Սարգիս վարդապետի: Ձեռամբ աղկաղկի և տրպի Զաքարիա արշխարկաւագի Քանաքեռցւոյ, որ ամս Ծ և Դ աստ ծառայեմ անհանգոյ գեղեցմամբ: Որ ԿԵ ամի կենաց իմոց նորոգեցի չքաւորութեամբ և աղքատութեամբ իմով, և ոչ որք էր



որ օժանդակ լինէր: Սակայն որպէս և է նորոգեալ աւարտեցի և աւանդեցի զսա յառաջին բնակութիւն իւր Յոհաննուվանք ի դուռն մեծի ամերդւոյն, որ յՈտին Արագածու, հանդէպ Արաու լերինն, ի գլուխ բարձրաբերձ քարանցն, ի վերա կարկաճահոս և ծիծաղայծաւալ Քասաղու: Արդ որք կայք աստ և ընթեռնուք զսայ՝ յիշեցէք առ Քրիստոսունակ (առ Քունունակ, պէտք չէ կարդալ «առքաղունակ») և ածընկալ յաջօղս ձեր զառաջնորդ վանիցս... (յիշում է միաբաններին. տես Կանայեանցի և կամ Տէր-Միքելեանի ընդօրինակութիւնը) և զիս իսկ Զաքարիայս, որ բաղում չարչարանօք հազիւ կարացի կատարել. քանզի յոյժ ապականեալ էր. վասն զի բաղում լուսանցս հատեալ էին և ի լուբեանց կարկըն անցուցեալ, և ես զոր ինչ կարացի նորոգեցի և զոր ոչն կարացի ներեցէք ինձ և զաշխատանս իմ ապախտ մի առնէք վս Այ. զի և դու որ ընթեռնուս յԱյ առցես զվարձս: Ամէն»: Հմմտ. Զաքարիայի մի ուրիշ յիշատակարանի հետ 1687 թուից. «Յիշատակ Դատակնքաց Գորիա և Շմոնի վկայից», Վաղարշապատ 1896, էջ 43 և շար.: Համազասպ եպիսկոպոսի (=հայրապետ) մասին տես Այրարատ Ալիշանի էջ 170. Պատմութիւն Զաքարիա սարկաւագի, Էջմիածին, Հատ. Գ. էջ 19, 30 ևն:

Այսպէս ուրեմն a-ն գրուած է 1293 թուին, ստացողն է Տէր-Համազասպ, ընծայուած է Յովհաննու վանքին: Ուղիղ 4 դար յետոյ նորոգուած է Զաքարիայից 1694 թուին—(Ն Զ—իրն այս խմբից չէ. նրա մասին տես վերը):

26. c. № 1658 մեր մատենադարանի, Կարենեան ցուցակ № 1616. կաշեկազմ, բոլորգիր, երկսիւն, անպիտան ծրող թուղթ, անյիշատակարան: Ագաթանգեղոսին հետևում է (էջ 120ա) ուրիշ, նորագոյն նոտր, ձեռքով (=c²) «Հաւատամք» և Դաշանց թուղթ, որ վերջից թերի է: Հինգ էջ դատարկ (Դաշանց թղթի համար թողած): Էջ 125ա, առաջին գրչից, բոլորգիր, սկսում է «Յաճախապատում»-ը: Մեծութիւնն է 25×19½ հրմտր. տողերի թիւը 37: Բոլոր հանգամանքներից դատելով՝ գրչութիւն է 17-դ դարու: Ընդհանրապէս լաւ պահուած, տեղ-տեղ կարկատաններով, մասամբ ցեցակեր:

Առանձին ուշադրութեան արժանի են Զ—րիս պահպանակները, երկ-երկու թերթ սկզբից և վերջից, կոկուած լաւ թղթից, անցման գրով, ճիշտ նման այն երկու մեծ ճառընտիրների գրութեան, որ նկարագրուած են Գուրիա և Շմոնի վկաների հրատարակութեան յառաջաբանում: Ուրեմն 12 դարու գրչութիւն: Պահպանակների, նաև կողերի ներքին երեսների վրայ կարդացուածները (ընդ ամենը 10 երես) Յակոբկի վկայաբանութիւնից են (տ. Վարք և վկայաբանութիւն սրբոց, Վենետիկ 1874, հատոր Բ, էջ 108): Կազմի մէջ, կաշու տակ, ոչ թէ ինչպէս պէտք էր սպասել, տախտակ է, այլ նոյն հին ճառընտրի թերթեր միմեանց շրջած՝ ստուարաթղթի կամ կարտոնի նման ծառայել են կազմին, ուրեմն և այս կազմի մէջ պահուած ունինք հին ճառընտրի մի քանի տասնեակ թերթեր: Կազմը չքանդեցինք. այդ թերթերը մնում են առկաւին չուսումնասիրուած:

c-ի մանրամասն, ծայրէ ծայր հետազօտութիւնը համոզեց մեզ բոլորովին, որ այդ մի անմիջական ընդօրինակութիւն է a-ից, բայց այնպիսի մի ժամանակ գրուած, երբ a-ն դեռ չէր քայքայուել, և թէև տեղ-տեղ ունէր կարկատաններ, (այդ հին կարկատանների տակը մնացածը c-ն չէ կարդացել.) բայց դեռ թերթերի յետառաջութիւնը չկար։ Ուրեմն c-ն ընդօրինակուել է Զաքարիայի նորոգութիւնից (1694 թ.) առաջ և կարդացել է Զաքարիայի կարկատանների տակ մնացած մասերը։ Մեր այս հետազօտութեան արդիւնքը մի քանի տեղ տուել ենք ծանօթութեանց մէջ, բնագրի տակ։ Տես յատկապէս էջ 385, § 740, ծան. 15, ուր ապացուցւում է, որ c-ն, առանց պակաս նկատելու, a-ի մի ընկած թերթի ճիշտ չափովը պակաս ունի։ էջ 418, ծան. 11, ուր a-ի հին կարկատանի և c-ի յաջորդականութեան խնդիրն է որոշւում։ Նաև տես ac-ի միատեսակ շփոթը (Յառաջաբանում). երկուսն էլ նոյն բառերը և նոյն տառացուածները բաց են թողել, էջ 3, ծան. 13, 16, 17. էջ 5, ծան. 3. էջ 7, ծան. 1, 3, 17. էջ 12, ծան. 2, 16. էջ 11, ծան. 12. և այլ անթիւ։ c-ն լոկ ընդօրինակութիւն չէ a-ից։ Ընդօրինակողը մի ուրիշ Զ—րի հետ բաղդատել է իւր արտագրածը և լուսանցքներում ու տողամիջերում լրացրել մի երկրորդ Զ—րից։ Որովհետև բաղդատութիւնը միևնոյն գրչից է՝ շատ անգամ դժուար է լինում որոշել յետոյ աւելացրած բառերը, մանաւանդ երբ տողում բաւական բաց տեղ է եղել նոր բառերը գրելու համար։ Բաղդատութեան օրինակը Ագաթանգեղոսի առաջին խմբի օրինակ է, շատ մօտ մեր Գ-ին (1668—1676-ի մէջերում գրուած Էջմիածնում), հաւանօրէն նոյն-ինքն մեր Գ-ը, որովհետև a-ից ընդօրինակութիւնը կատարուած պիտի լինի Արագածոտնի վանքերից մէկում (Սաղմոսավանք կամ Յովհաննավանք), իսկ «Արևելեան» ընտանիքի Զ—երից 1694-ից առաջ միայն Գ-ը կարող էր լինել ընդօրինակողի տրամադրութեան տակ բաղդատութեան համար։ Պիտի յիշել որ Գ-ի ընտանեկից Ե-ն (Աստրախան 1692), Թ-ն (Աստրախան 1690-ին) չէին կարող այդ բաղդատութեանը ծառայել, հեռաւորութեան, հաւանօրէն նաև ժամանակի պատճառով, միայն երկու կամ չորս տարով առաջ լինելով Զաքարիայի կարկատաններից։ Զաքարիան իւր օրինակն արդէն քայքայուած է գտնում. մինչդեռ c-ի ընդօրինակութեան ժամանակ a-ն համեմատաբար ամբողջ էր, թերթերը իրանց շարքերը չէին շփոթել, Ագաթանգեղոսի յառաջաբանից թերթեր չէին ընկած։ Իսկ Գ-ի ընտանեկից միւս օրինակները (Է, Աստրախան 1714-ին և այլք) ժամանակով արդէն շատ ուշ են Զաքարիայի նորոգութիւնից։

Օրինակի համար տես «Սեղբեստրոս» ընթերցուածը (§ 875), որ միայն Գ-ի ընտանեկից օրինակների մէջ է պատահում և c-ի լուսանցքում (c էջ 118ա)։ Այսպիսով c-ն a-ի և Գ-ի «բարդութիւնն» է։

c-ն միակ օրինակն է անմիջապէս մեր ձեռքի տակ եղած Զ—երից, որ իւր արդի վիճակում ամբողջովին ունի ընդարձակ Յառաջաբանը։ c-ից օգտուել ենք մեր հրատարակութեան մէջ ամբողջ Յառաջաբանում և բոլոր այն դէպքերում, երբ a-ից թերթ է ընկած և c-ն ունի այդ պակասները։ Միւս դէպքերում c-ն մեզ աւելորդ էր, քանի որ ունէինք a-ն, և Գ-ի փոխարէն՝ լաւագոյն ԱԲ։ Մի տեղ նաև Վարդապետութեան մէջ



կողք կողքի մէջ ենք բերել a և c-ի ընթերցուածները (տ. էջ 326, ծան. 3), իսկ էջ 326 փորձ ենք արել ուղղահայեաց գծերով բաժնել c-ի լուսանցքներից և տողամիջերից առնուած ընթերցուածքները իբրև նմուշ։

Իբրև ամփոփումն ստանում ենք հետևեալը.

c-ն 17-դ դարում՝ հաւանօրէն 1668—1694-ի միջև, ընդօրինակուած է a-ից և յետոյ յաւելումներ ստացած Առաջին խմբի մի Զ—րից, ամենայն հաւանականութեամբ Գ-ից, ուրեմն c=a+Գ, և բնագրի համար կարևոր է միայն այն մասերով, որոնք a-ում այժմս պակասում են։

c²։ էջ 120ա, «գրչաւ գպրի ճարտարի» բառերով (տես § 894) c-ում սկսւում է նօտրագիր գրչութիւնն ուրիշ ձեռքից, որից են և «Հաւատամքն» ու Դաշանցը։ c-ի այս մասը նշանակել ենք c². c²-ը գործ էր ածուած «Հաւատամք»-ի բաղդատութեանց մէջ, բայց տպագրութեան ժամանակ, երբ «Հաւատամք»-ի համեմատութիւնները դուրս ձգեցինք՝ c-ից մնաց միայն մի ընթերցուած էջ 473։

27. d. Մեր մատենադարանի № 1659, Կարին. № 1617. կաշեկազմ, թուղթ, հնագոյն նօտրգիր։ Մեծութիւն 21×15 հրմտր. երեսում 22 տող։ Շատ տգէտ գրիչ, վրիպակներով լի, բայց դիւրընթերց։ Անշուշտ շատ հին օրինակից արտագրուած։ էջ 1ա դատարկ թերթի վրայ նման նօտրով, բայց տարբեր թանաքով, ուրիշ ձեռքով գրուած է հետևեալը. «տէր Դաւթին գրածն Ագաթանկեղոսն»։ Յառաջաբանի վերջում. «տէր աստուած ողորմեա գաւզգէ ամէն»։ Ուրիշ յիշատակարան չունի։ Մնացած հանգամանքները, թերթեր են, մանրամասն նշանակուած են մեր բաղդատութեանց մէջ։ Յառաջաբանը այս Զ—ռում սկսւում է առանց թերութեան որևէ արտաքին նշանի, «Պատմութիւն որ առ մեւք գործեցան» բառերով (տ. § 7, էջ 6, տող 1) ուրեմն և այդպէս գտել էր իւր օրինակում։ Երրորդ մասը վերջանում է «Նոյնպիսիք և այլոց մարգարէիցն հրամայեալ» բառերով երեսի կիսում։ Բացի Ագաթանգեղոսից ուրիշ գրութիւն չկայ այս Զ—ռում։

Համեմատութեանց սկզբում d-ի բազմաթիւ վրիպակների պատճառով բաւական արհամարհական էր մեր վերաբերմունքը դէպի այդ Զ—իրը։ Ակներև կոպիտ վրիպակները զանց արինք նշանակել, մեր ծանօթութիւնները չխճողելու համար։ Բայց հետզհետէ ստիպուած եղանք մեր վերաբերմունքը գլխովին փոխել։ d-ն մեր լաւագոյն և հազուագիւտ Զ—երից մէկն է։ Ամբողջ գործի ընթացքում ծայրէ ծայր իւր ընթերցուածներով միանում է a-ի հետ. բայց a-ից (ուրեմն և c-ից) անկախ է, որով և a-ի հետ հաւասարարժէք մի Զ—իր։ Բոլորովին ապահով է, որ d-ն չէ կարող ac-ից ընդօրինակուած լինել։ c-ն ունի ամբողջ Յառաջաբանը. a-ն նոյնպէս ունեցել է ամբողջը, և նոյն-ինքն այժմեան թերի վիճակում ունի մասեր՝ որ չկան d-ի մէջ. տես օրինակ մեր տպագրի էջ 9, ծան. 12, d-ի մեծ պակասը, որն ունին ac։ Կամ էջ 199, ծան. 9, ուր ac-ն պակաս ունին, մինչդեռ d-ն այդտեղ պակասաւոր չէ, ուստի և չէ կարող ac-ից ընդօրինակուած լինել։ Մեր բաղդատութեանց մէջ կան և ուրիշ այդպիսի ապահով ցուցումներ, որ թուելն աւելորդ է։

Դատելով գրչութիւնից և թղթից՝ d-ն ամենաուշը 16-դ դարու,

համանօրէն նաև փոքր ինչ կանուխ, Ձ—իր է. գրիչն է, Ներսէ՝ «անէր Դաւիթ». տեղը, գրութեան տարին անյայտ են։

d-ի առանձնութիւնն այն է, որ c-ի նման ընդմիջարկուած չէ որևէ այլ Ձ—րի բաղդատութեամբ, և թէև վրիպակներով, բայց տգէտ գրչի հաւատարմութեամբ ներկայացնում է մեզ հնագոյն մի երկաթագիր Ձ—րի արտագրութիւն, երբեմն շատ հին ընթերցուածներով. տես օրինակ, առերի Յեշով կամ Յիշով ձևի փոխանակ՝ d-ի «յիշելով» ընթերցուածը (Ձ—րի էջ 75բ, մեր տպագրի՝ § 316), ուր բոլոր միւս Ձ—երը, նոյն իսկ a-ն, ունին Յեսու։

β. acd-ին համընթաց է իր ընթերցուածներով մի լաւ հին տօնական՝ β, 1220 թուից, որի մասին տես վարը։ β-ն իր ընդարձակ հատուածներով բռնում է գրեթէ մի ամբողջական Ձ—րի տեղ։ Մեր հրատարակութեան մէջ $ad\beta$ (c-ն քիչ է գործածուած) շատ լաւ լրիւ տալիս են Երրորդ խմբի կատարեալ պատկերը։

28. $d^2$։ Դրսում եղած Ձ—երից այս խմբին է պատկանում անկասկած Վիեննայի Մխիթարեանց մատենադարանի № 314-ը (հին թիւ 54), գրուած ՌԽԳ=1594-ին։ Այս Ձ—իրն անուանում ենք $d^2$, որովհետև մեզ թւում է, որ նա մեր d-ից անմիջական ընդօրինակութիւն է։ Մեծութիւնը (20,5×15, միասին), տողերի թիւը (22), թուղթը և գրչութիւնը (նօտր) բոլորովին մեր d-ի նման, բայց աւելի նոր։ Բովանդակութիւնը՝ Ագաթանգեղոս, Զենոբ և Յովհան Մամիկոնեան։ Գրիչ՝ Աստուածատուր եպիսկոպոս, գրութեան տեղը «ի դուռն սուրբ Արգըլմբրա վկային»։ 1783-ին յիշատակ է տուել Շնորհու ս. Կարապետին, 1845-ից առաջ մտել է Վիեննայի Մխիթարեանց մատենադարանը (մանրամասնութիւնները տես Տաշեան Ցուցակ, էջ 748 և շար.)։ Տաշեանի նկարագրութիւնից տեղեկանում ենք, որ $d^2$-ի Յառաջաբանը սկսւում ճիշտ մեր d-ի նման «Պատմութիւնք որ առ մեօք գործեցան» բառերով. Յառաջաբանի վերջում կայ, յար և նման մերինին՝ «Տէր Աստուած ողորմեայ գործէ ամէն» յիշատակարանը. թերի է մնում Երրորդ մասը՝ «նոյնպիսիք և այլոցն մարգարէիցն հրամայեալ» բառերով, ճիշտ d-ի նման։ Ուրեմն կէտ առ կէտ մեր d-ի նման։ $d^2$-ից մեզ ծանօթ է միայն մի ընթերցուած «զուգումն», փոխ. «զօգումն». նոյնն ունի («զուգումն») և մեր d-ն (տպագրի էջ 373, ծան. 3), անշուշտ առաջացած երկաթագիր «զաւգումն» բառը «զուգումն» կարդալուց (Տ և Մ-ի շփոթութիւն), որից և «զուգումն»։

$d^2$-ն ունի յիշատակարաններ, որոնցից մէկը Ագաթանգեղոսի վերջում այսպէս. «Գրեցաւ սա ի դուռն սուրբ Արգը[լ]մբրա վկային, ձեռամբ Աստուածատուր եպիսկոպոսիս և բանի սպասաւորիս, այսմ ամի թուին, ՌԽԳ (=1594) բազում հարկապահանջութիւն եղեաւ» եւն, տ. Տաշ. Ցուց. էջ 749.։ Կամ այն է որ d և $d^2$՝ երկուսն էլ ընդօրինակուած են մի մայր Ձ—րից, և կամ $d^2$-ը ընդօրինակուած է մեր d-ից, որ մեզ աւելի հաւանական է թւում, աչքի առաջ ունենալով մեր d-ի ակներև հնութիւնը և սրա յիշատակարանի («գործէ») կրկնութիւնը $d^2$-ի մէջ։



Մխիթարեաններին է մնում ճշտել ի մօտոյ այս հանգամանքը, ունենալով մեր d-ի բոլոր մանրամասնութիւնները մեր համեմատութեանց մէջ։

Մնում է մի երկու խօսք ասել, թէ ինչ հիման վրայ $acdd^2\beta$ Ձ—երը բաժանում ենք մենք Առաջին և Երկրորդ խմբի Ձ—երից և անուանում ենք Երրորդ խումբ։ Ինչպէս տեսանք՝ Առաջին խումբը լոկ մի ճիւղաւորութիւն է Երկրորդ խմբի մի Ձ—րից, պատահական անզգամութեան շնորհիւ առաջացած, որով ստացուել է «համառօտ» Յառաջաբանը, և այնուհետև այդ խմբի անդամները վարել են իրանց անջատ կեանքը՝ ենթարկուելով հետզհետէ, բազմաթիւ ընդօրինակութեամբ, աղճատման պրոցէսին։

Երրորդ խումբը նոյնպէս մի ճիւղաւորութիւն է Երկրորդից, բայց ոչ պատահաբար առաջ եկած, այլ արդիւնք գիտակցաբար կատարուած թեթև խմբագրութեան։ Երկրորդ խմբի մի հնագոյն օրինակ խմբագրուել է գլխաւորապէս ոճի և ոչ իրական բովանդակութեան կողմից։ $ad\beta$-ի չիքերի մեծ մասը ոչ թէ գրիչների անուշադրութեան արդիւնք է, այլ խմբագրողի համառօտութիւն։ Խմբագրութիւնը զգալի է մանաւանդ Երրորդ մասում։ Այդ բանին համոզուելու համար համեմատելու է յատկապէս Կորիւնից ընդմիջարկուած հատուածները (Երրորդ մասում) մի կողմից ԱԲԵt և միւս կողմից $ad\beta$-ի մէջ, ուր բնագիրը կազմելիս մանրամասն շեշտել ենք այդ հանգամանքը։ Երրորդ խմբի ընթերցուածները, բոլոր այն տեղերում, ուր չէ զգացւում նոր խմբագրողի ձեռքը՝ մեծաւ մասամբ շատ ընտիր են և նախնական բնագիրը վերականգնելու անհրաժեշտ։

Ունինք Երրորդ խմբից ուրեմն հետևեալ Ձ—երը, ըստ ժամանակագրական կարգի.—β 1220 թուին, a 1293 թ. Յովհաննավանք, d 16-դ դար, 1594-ից առաջ, $d^2$ 1594-ին, c 1694-ից առաջ, ընդ ամենը հինգ Ձ—իր։ Դասաւորելով ըստ ծագման՝ կստանանք հետևեալ ծննդաբանական պատկերը.

Կորիւնեան խմբագրութիւն.




Այստեղ մենք ունինք ոչ միայն Երրորդ խմբի ծննդաբանական պատկերը, այլ և մեր երեք խմբերի յարաբերութիւնը։ Հնագոյնն է Եր-

կրորդ խումբը, որից ծագել են Երրորդն ու Առաջինը։ Խմբերի անուանակոչութիւնը ոչ թէ ըստ ժամանակագրական կարգի է, այլ ըստ մեր ուսումնասիրութեան, ծանօթներից անցնելով դէպի անծանօթը։

Այժմ անցնենք ճառընտիրներին։

## 29. ՀՆԱԳՈՅՆ ՃԱՌԸՆՏԻՐՆԵՐ, α և β.

α. Գէորգեան ցուցակի № 130. մեծադիր (46×32 հրմտր.) ճառընտիր, կաշեկազմ, թուղթ, անցման երկաթագիր, երկսիւն։ Սկզբից և վերջից թերի, միջից տեղ-տեղ թերթեր ընկած։ Ստացող Յովհաննէս քահանայ. ստացողի հայրը՝ Թորոս, մայրը՝ Աշխէն (էջ 259բ), եղբայրները՝ Սարգիս և Կոմանոս (230բ. չկարդալ Ռոմանոս). գրիչ՝ Գրիգոր. գրութեան տեղը և ժամանակն անյայտ. սակայն կան նորագոյն զանազան գրչութեամբ յիշատակարաններ լուսանցքներում։ α-ն, ինչպէս երևում է կնքից (էջ 1ա), բերուած է Ախալցխայից և Կարնեցի Կարապետ եպիսկոպոսի ժողոված Զ—երիցն է։ Աւելի առաջ հաւանօրէն եղել է Դերջանում (ՌՄԿԹ թուին, տես էջ 116բ), նաև Կարնում (էջ 132ա)։ էջ 160ա, ստորին լուսանցքում՝ «Ես Ներսէս վարդապետս առաջնորդ որ Լուսօրչի վանից թվին ՌՃՀԳ»։ էջ 196բ «թվ. ՌԿԴ (=1615 փրկչ.) ձմեռն ձուն չեկաւ, գարուն աղբուրք ամենայն ցամաքեցաւ»։ էջ 244բ նորոգութեան յիշատակարան. «...յիշեցէք զտէր Աստուածատուրս Թէոթոյպալի (=Էրզրում), որ զգիրքս նորոգեցի, կարկատեցի և կազմեցի, ընդ նմին և զնախնին մեր զտր Գրիգոր... և զեղբայրն իմ զԲէմին»։

Յամենայն դէպս α ճառընտիրը 1158 թուից յետոյ է գրուած, որովհետև ունի Ս. Սարգսի վկայաբանութիւնը Ներսէս Շնորհալու խմբագրութեամբ, բայց հաւանօրէն չէ ուշ 12-դ դարու վերջերից։ Ինչպէս տեսանք՝ α-ն պատկանում է մեր Երկրորդ խմբին (տես վերը)։ α-ի մանրամասն բովանդակութիւնը տես Գէորգեան Ցուցակ (անտիպ)։

30. β. Մեր հիմն. մատենադարանի № 1753, Կարեն. Ցուց. № 1712. կաշեկազմ, թուղթ, անցման գիր, խառն երկաթագրի և հին բոլորգրի տառերով։ Մեծութիւնն 25½×16½ հրմտր. միասիւն. մեզ հետաքրքրող առաջին մասը երեսում ունի 19 տող. երկրորդ մասում տող 21, 24, 22 են։ Մինչև էջ 203բ մի գրչից (այս առաջին գրչինն է նաև գրքի վերջին թերթ 325-ը)։ Առաջին մասը մի ամբողջական է, ամբողջովին նուիրուած Լուսաւորչին և Հռիփսիմեանց։ Այս մասի բովանդակութիւնն է—«Ոսկեբերան»-ի ներբողեանը (Համա վերը Ե), սկզբից թերի. վերջում «Աբրահամ գրամատիկոսի» (β-ն գրում է «վատմարտիկոս») յիշատակարանը ՇՂ հայոց թուականից (տես Սոփերք Դ), որի մէջ կայ ներբողեանի հնագոյն գրչի անունը «Գրիգորիսի Հայոց Կաթողիկոսի» բառերից յետոյ այսպէս. «և գրեցաւ [ի ձեռն] Սանփանոսի գրչի», որ պակասում է Սոփերքում։ Սրան հետևում է β-ի գրչի (Առաջին մասի) յիշատակարանը այսպէս. «Աղաչեմ վասն սիրոյն Քի և սուրբ հաւրս (=Լուսաւորչի) առաջիք Տէր աստուած որ հաւրս բարեխաւսութեամբ և ամենայն սրբոց քոց ողորմեայ Մխիթարա գրչի և ծնաւղաց իւրոց և դուք յիշեալ լիջիք յոյ։ Ամէն, ամէն»։ Հետևում են Ագաթանգեղոսի



ընդարձակ հատուածները, որ առնուած են մեր համեմատութեանց մէջ։ Սրանց հետևում է (էջ 165ա) Խորենացուց, առանց հեղինակի յիշատակութեան «[Յ]աղագս մահուան, և գիւտ նշխարաց սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ.—Ի յետին և ի տասն ամի թագաւորութեանն Տրդատա...» մինչև գլխի վերջը, բաւական մեծ տարբերութեամբ ընթերցուածների (Համա. Խոր. Բ, 91)։ Հետևում է (էջ 167բ) «Պատմութիւն յաղագս գիւտի նշխարաց սրբոյն Գրիգորի Հայոց լուսաւորչի ի Կոստանդինուպաւլիս.—Ի ժամանակին յորում երեք հարիւր քսան և հինգ էր թուականութեանս Հայոց մեծաց...»։ Հետևում է մի հատուած Սեբէոսից (էջ 175բ) «Գիւտ նշխարաց սրբոյն Հռիփսիմեայ.—Եւ եղև յամի քսան երրորդի ութերորդի Աղբուեզ Խոսրովու...» (տ. Սեբէոս ԻԸ, էջ 88—89, Պետերբուրգ 1879) ընդարձակուած, ընդմիջարկուած հատուածներով։ Հետևում է գլխաւոր յիշատակարանը. «Ո՜վ ընթեռնուք յիշելոյ արժանի համարեսջիք զստացողս և զաշխատաւղս մեղաւք զանպիտան գրիչս զի ասոփ և անգի գրեցի յաղագս սիրոյ սրբոցս, որ ա՛ծ գձեզ յիշէ։ Կատարեցաւ... յամի վեցհարիւրերրորդի վաթսներորդի իններրորդի ձեռամբ անպիտան և տխմար գրչի, որոյ զանունն գրեսցէ Քս ի գիրն կենդանի» են։ Գրչութիւնը վերևում յիշուած Մխիթարինն է, ուրեմն β-ի թուականն է Հայոց ՈԿԹ (=1220 փրկչ.)։ Հետևում են նոյն գրչից՝ Քառասնից վկայաբանութիւնը և Եփրեմի «Գուլատեան» ճառը։ Զ—բի երկրորդ մասը աւելի հին գրչութեամբ է, պատահմամբ կազմուած նախընթաց տօնականի հետ։ Բովանդակութիւնն է Զենոբ Գլակ, Յովհան Մամիկոնեան և Մեսրոպ Երէց, պակասներով, տեղ-տեղ պատառոտուն են, շատ նշանաւոր իբրև հնագոյն օրինակ այդ պատմիչների և յատուկ ուսումնասիրութեան կարօտ։ Վերջին մասիս գրիչն է Մարտիրոս (էջ 240բ)։

β-ն, ինչպէս վերևում տեսանք՝ մեր Երրորդ խմբի հնագոյն ներկայացուցիչն է։

α և β-ի բոլոր ընթերցուածները, իբրև հնագոյն օրինակների, ամենայն մանրամասնութեամբ առնուած են մեր համեմատութեանց մէջ, մինչդեռ հետևեալ ճառընտիրներից առնուած են ընթերցուածներ ընտրովի, և թողնելով դէպի ցած՝ հետզհետէ ընթերցուածների թիւը պակասեցրած, բաւականանալով հատուածների սկիզբն և վերջը նշանակելով, սակայն ամբողջը ծայրէ ծայր կարդալով, որպէս զի որևէ կարևոր բան չփախչի մեր ուշադրութիւնից։

## 31. ՄԻՒՍ ՃԱՌԸՆՏԻՐՆԵՐԸ.

գ. № 943 մեր հիմնական մատենադարանի, Կարենեան ցուցակ 917. կաշեկազմ, ընտիր թուղթ, անցման երկաթագիր (ետևառամ այլ), երկսիւն։ Մեծութիւն 47×34 հրմտր։ Բովանդակութիւնը տես Կարեն. ցուց.։

էջ 218բ «ի թուիս ի. ՈԾ. ի ժամանակս բարեպաշտ ամիրսպասալար Զաքարիայի ի հրոտից ամսեան բովանդակ. ԻԲ. ուր թաթաեկն և գետյարոյց եղև». ընագրի գրչով, ուրեմն 1201 փրկչ. թուին.

էջ 97բ «Յիշեսջիք ի սրբամատոյց յաղօթս ձեր զՅովհաննէս քահանայ՝ զառաջի գիծն որ սկսաւ կատարել և ոչ ժամանեաց, այլ

փոխեցաւ ըստ աստուածային կամացն. ես Գէորգ հայր Յովաննիսի յանձն առեալ խաւար աչաւք թերևս կարացից կատարել զյիշատակս Յովաննիսի, ծնողիս և Յովհաննիսի և Մխիթարչին մեղաց թողութիւն խնդրեցէք ի Քէ»:

էջ 438ա. «Զգէորգ մեղապարտ գծողս և զորդի իմ զՄխիթարիչ անուն, որ զնիւթս ետ անարատնոյ ի յիւր հալալ վաստակոց, ի յիշատակ իւրն, և զիս զսուտանուն գրողս Յիշեսջիք ի սրբամատոյց յաղաւթս. և աղաչեմ զամենեսեան մի մեղադրէք, զի ոչ էի տեղեկ բայից և բառից, այլ ընաւ չունեի. վասն այնր յաւժարեցայ ի ժամ ծերութեանս զի զառաջի զգիծն Յովաննես եր սկսեալ եւ տարաժամ փոխեցաւ յաշխարհէ: Այս Յովաննես և Մխիթարիչս եղբարք էին, յիշեսջիք, եւ զգրողս որ հայրս եմ»: Լուսանցազարդերից յատուկ ուշադրութեան արժանի է երկգլխեան արծիւը էջ 5բ: Նորագոյն յիշատակարաններ՝ էջ 336բ, որոնցից մէկը Յհաննէս երէցից ՉԾ (=1301) թուից: Միւս մանրամասնութիւնները զանց ենք առնում:

ց². Այս տառով նշանակուած են մեր հրատարակութեան մէջ ց-ի մի-երկու հատուածները, Ագաթ-ի միևնոյն կտորների կրկնութիւնները, ճառընտրիս զանազան մասերում, նոր ընթերցուածներով, տարբեր ուղղագրութեամբ:

32. ե. № 940 հիմնական մատենադարանի, Կարին. ցուց. № 920. «Հրաշափառ տօնական». կաշեկազմ, թուղթ, բոլորգիր, երկսիւն, մեծութիւն 33×45 հրմար. բովանդակութիւնը տ. Կարին. ցուցակ:

Բաւականանում ենք քաղելով վերջում եղած (էջ 767ա—768բ) ընդարձակ յիշատակարանից իրական մասը. «փառք... ես հէքս Մթս [=Մատթէոս] էրէց... բազում սիրով գծագրեցի զհրաշափառ զարմանազան... տաւնականս:... Յիշեցէք... հարազատն իմ զսրբասնեալ վանականսն զԻգնատիոս... և զԵսային բանիբուն փիլիսոփայն և անհաս նկարող, որ երփն երփն գունով ծաղկափթիթ զարդարեաց զհրաշափառ... տօնականս և կազմեալ զսա... զոր գրեալ կայր սա զամս իբրև քանից... Տէր Աստուած վայելել տացէ սոցա... եղբարբն իւրեանց Թադէոս քահանայիւ և Ստեփաննոս և նոցին հարազատաւքն Ռըստակէսիւ և Յուսկանաւն: Այլ և զկուսութեամբ ճըգնեալ և զընաւին պահող քոյր սոցին և սաղմոսող... որ բազում աշխատութեամբ օգնականեաց մեզ, նաև զմայր սոցա, որ զամս .Լ. մեծաւ ճըգնութեամբ... կեցեալ փոխեցաւ առ Քս: Այլև զհայրն իմ զմեծն Սուլթան և զեղբայրն իմ Իկլիթադայն և զԲոջրէկ, և զմայրն իմ զպարոն Թուխթէնի, և զԹուխծամ, որք բազում երախտիք ունին ի վերայ իմ թշուառացելոյս. և զեղբարսն իմ զՓառուխշահն և զՍալուքշահն... Գրեցաւ հրաշափառ տօնականս ի Վերի Նորավանս, թվին ՋԵ. (=1456 փրկչական): Վերին Նորավանքի մասին հմմտ. Սիսական Ալիշանի:

33. Լ. № 671 Գէորգեան ցուցակ. Մեծադիր ճառընտիր, կաշեկազմ, թուղթ անողորկ, ծրագ. բոլորգիր, երկսիւն, մեծութիւն 46×31½ հրմար.: Գրութեան տեղն և ժամանակն անյայտ. վերջին մեծ յիշատա-



կարանը չէ պահուած, բայց իւրաքանչիւր վարքի վերջը մի քանի տող յիշատակութիւն կայ, որով բազմաթիւ մանր յիշատակարաններ, որոնցից երևում է, որ ստացողն է՝ Պարոն Տաւած և Պարոնիկ Ռայիս. գրիչը՝ Սոսթենէս. կենակից պարոն Տաւածի՝ Փոքր-Տիկին, որդին՝ Ներսէս, եղբայրը՝ Խարիպշահ: էջ 242բ կայ ոտանաւոր, որի առաջին տողը՝ «Լաւագք բանից աստուածական»: Տողերի սկզբնական տառերը կազմում են «Լորեցոյ Վարդանայ Գեղփիրեաց քահանայից»: Գեղփիրեք կամ Գեղփիրիս թւում է տեղի անուն. այդտեղի քահանաներին են ակնարկում կարծես ոտանաւորի հետևեալ տողերը. «ցանկացելոց տառիս պիտան Քահանայիցն վեհական»: Յիշւում են նաև «մեծ քաջապետն Աւետիս և սուրբ եղբայր նորա Գրիգոր»: էջ 270ա «յիշեսջիք և զԱսպետ միակեց»: էջ 274բ «զհոգևոր եղբայրն մեր զԱվրան... քահանայն զՅովհաննէս, զնախնի սկզբնաւորն սուրբ գրոցս, որ ի Քրիստոս փոխեցաւ»: Յիշւում են նաև Գրիգոր քահանայ, Ֆաւնկ տիկին, Վարդան և ուրիշներ:

ռ. № 672 Գէորգեան ցուց. Սաւսար ճառընտիր, մեծութիւն 38×26, կոկուած թուղթ, բոլորգիր, անթուական. գրիչ՝ Նատեր (էջ 285ա, 198բ). տեղն անյայտ: Յիշւում են բազմաթիւ ստացողներ, իւրաքանչիւր ճառի կամ վկայաբանութեան վերջում առանձին առանձին: Ստացողները մեծ մասամբ հասարակ դասակարգից, արհեստաւորներ. յիշւում են՝ ներկարար, կաւշկար, բազազ, եկեղեցպան, քահանայ, ճոն, ջուլանկ, սարկաւագ, ոսկերիչ, գանկրար, կաւագործ, ալրեփեց, «հուսն», թաւկիր, դերձակ, ժամակոչ, դանկագործ, զինեծախ, զարբին, էգէպան, սանդրգործ են: Յիշւում են Վարդերես Շիրասցի, Ստեփաննոս Վանեցի և մի ուրիշը (անունը քերուած), «որ էր ի ազգայութեանն յազգէն Բռծորայ և երաց Քս զաշս նորա և հայեցաւ ի Քս և հաւատաց և եղև միանձնաւոր և սր ճգնաւոր»: Թւում է թէ գրուած է քաղաքում, ուր այդպիսի բազմատեսակ արհեստաւորներ կարող էին լինել, և այնպիսի մի քաղաքում, ուր խաղող է հասնում («էգէպան»):

34. Տ. Ճառընտիր № 945 մեր մատենադարանի, Կարինեան ցուց. № 925. կաշեկազմ, թուղթ, բոլորգիր, երկսիւն, մեծութիւն 30×20 հրմար.: Ամեն հատուածի վերջում, ինչպէս լինում է յայսմաւուրքներում, ինչպէս նաև Լռ-ում, յատուկ յիշատակութիւն ստացողի՝ «իշխանաց իշխան պարոն Շալուին», նրա մերձաւորների և Զ—րի գրչութեան որևէ կերպ նպաստողների: Բերում ենք միայն վերջին մեծ պատմական յիշատակարանից քաղուածքներ: «Փառք... ի թուաբերութեանս հայկազեան տումարի ՊՂԱ (891) և կենարարին փրկչին մերոյ յի քի ՌՆԽԴ (1444) և յեւթներորդն Ադամայ ի դրախտէն ՑՈԽԲ (6642) կատարեցաւ տեսիլ Սահակա հայրապետին...»: Նկարագրում է կաթողիկոսական աթոռի վերահաստատութիւնը Էջմիածնում, իբրև լրումն Սահակ Պարթևի տեսլեան. «...հինն էանց և եղև ա՛մ ինչ նոր... ի ձեռն սր հարանց, որ ժողովեցան յարևելից և յարևմտից, ի հարաւոյ և ի հիւսիսոյ ի Վարդգէս, ի Նոր քաղաքս, Վաղարշապատ, ի սբ Էջմիածինս, որ է մայր ա՛մ եկեղեցեաց և ծնաւղ և լուսատու Հայոց ազգիս... Հայրս մեր հոգևոր տր Կիրակոս

կեղկս, որ յիւր ժամանակին ոչ միս է ձեռնել և ոչ գինի խմել և ոչ սուտ ասել և ոչ երդումն կերել, ոչ նզովք և անէծք ի բերանն է ելել, ԽԵ տարի է որ յանապատի է և որ կենդանանթաղ Խաչ Վիրապին սրբատուրել. Զսա ընդրեաց Հոգին սուրբ... սա է տող ունկին որ ի վերջք մագաղաթին գրեալ էր... Եւ ի սոյն (ժա)ժամանակի նաև կոտորումն անմեղ քրիստոնէիցն Սամշուիլդոյ *), որ նահատակեցան վասն Քի և են մարտիրոսք: Վասն զի շարժեցան ի սատանայէ ազգն Աղխթացւոց Ջահանշահ միրզէն և առ ընդ խիքեան զբազմութիւն ըռազան զաւրացն և նստաւ ի վերա բերդին Գ ամիս և ի նեղութիւն էարկ զնոսա, զի բազումք մեռան ի վշտաց: Եւ անաւրէնքն երդուեցան յԱծ կենդանի, թէ ասնել չենք ձեզ մեռա: Եւ նոքա հաւատացեալք ի սուտ երդումն նոցա բացին զդուռն բերդին և անաւրէնքն զխմեցին ի ներքս և սուր ի վեր (=վերայ) եդեալ կոտորեցին անխնայաբար աւելի քան Վ (=3000). և զողբումն և զաղխաղում և զկսկիծ դառնութեան ոչ կարեմ ընդ գրով արկանել: Զի զոմանս սրով խո(ղ)խողեցին, զոմանս քարկոծեցին, զոմանս բրաւք ջարդեցին, զոմանց զգլուխն հատին և զմերկս շինեցին... Եւ էր թիւ գերելոցն աւելի քան զ. Թ. (=9000), որ բաժանեցին զմայր ի յորդւոյ... զեղբայր յեղբաւրէ, զհարսն ի փեսայէ... և զմատաղ տղայքն յափշտակէին անողորմաբար ի մաւր գրկացն և արկանէին ի գետ և մարքն աղեխարշեալ լալով զնոցայն ի գերութիւն: Զոմանս ի նոցանէ յարեւս տարան ի Խորասան, զոմանս յարեւմուտս ի Համաստան, զոմանս ի հարաւ ի յԱրաբըստան, զոմանս հիւսիս ի Լակըստան (Լեկերի կամ Լեզգիների երկիրը, հաւանաբար լեռնաշղթայում)... ի յայս զասն և ի նուրբ և ի նեղ և ի սուգալի ժամանակիս այս մի բարեպաշտաւն... քաղաքան և ուղղափառ, այր հեզահոգեար ի մեղմանս պատերազմաց, զիւցազնական ի յաղթաց և պայազատ ի յիշխանաց: Ի յազանց և ի տոհմէ Աղքանալեան սերից տր Շալուէ որդի մեծ իշխանին ածանէր տր Սարգսին և թոռն տր Բուղախին... տր Շալուէս ցանկացաւ եղև... տանտականիս... առաջաւ զսա... և ետ գրել զսա... յիշատակ տր Բուղախին, հաւրն տր Սարգսին, և մաւրն տր Թամախն և եղբաւրն տր Գրիգորին, որ ի ծրագրել սորա խաղաղաւր եկ յաշխարհէս... և միւս եղբաւրն տր Փանուէլին. Եւ քերցն Սիթխաթունին և Թենիկին, և ամուսնոյ իւրոյ տր Դովլաթ խաթունին և միւս այլ կենդանի կենաց կցորդի իւրոյ տր Դուլփաշին. և նորաբողբոջ զեառաւսակ զաւակի սոցա տր Դաւթին... դարձեալ աղաչեմ յիշել ի տր զտր Յոհաննէս եպիս մականուն Ոսկիափոր, որ է ուսուցիչ մեր այսմ գործոյ: Արդ ծրագրեցաւ սա յերկիրս Արարատեան ի գեաւղս որ կոչի Սերկեւլի (տես Այրարատ էջ 164—5 են), ընդ հովանեաւ սբ Յովանիսիս և այլ սրբութեանցս. ի հայրապետութեան և իշխանութեան տէր Գաբրիէլի արի և քաջ կրաւնաւորի և ի խանութեան Ջահանշահին և ի թագաւորութեան վրաց [Վա]խթանկին: Եւ յիշխանութեան տեղւոյս տր Ալիբեկին և տր Շալուին տեառն գրոյս և տր Վաչ[է]ին... տր Բըրըթին [և տր Սա]րգս[ի]ն...

*) Սամշուիլդէի աւերակները կան այժմեան Թիֆլիսի նահանգում, Բորչալուի գաւառում:



Դարձեալ աղաչեմ... յիշել... զայս գեղիս զկրաւնաւորքս և զքահանայքս զտր Խաչատուր կրաւնաւորն խրատիչ և ուսուցիչ սոցա, վասն զի եւթանասնամեայ անձամբ հեծեծանաւք գնացեալ է յԵ՛էմ յերկրպագութիւն սուրբ ոտնատեղեացն և ի տեսութիւն գերեզմանին Քի Այ մերոյ... և ի դարձ նորա առել է զքարտէզս(ս) և բազում աշխատութեամբ և տառապանաւք հասոյց առ մեզ... աղաչեմ կրկին յիշել զտր Մանուէլ քհնյ, զՈհ՛ս (=զՈհաննէս) կրաւնաւոր սպասաւորք սուրբ ուխտիս... զտր Յակոբ կրաւնաւոր զըփակակալ [սբ] Յով՛սիս, զեղբայրն իւր զԻշխան, և զմայր սոցա զնարին և զհարսն սոցա զԴուլփաշայ... որ բազում աշխատութեամբ և տառապանաւք սպասաւորէին մեզ ի ծրագրել սորայ... զգեղի տանուտէրքն զՄովսէսն, զՎիրապին, զԹէրագինն, զխաւջա Մկրտիչն, զհանգուցեալ Սարգիսն... և զայլ քրիստոնեայքս որ յառ ատս հաւաքեալ կան տր Շալուին... Այլ և աւրհնեսցէ Քս զԹանսուխն և զԴուլմելիքն, զի բազում աշխատեցան յերթեւեկութիւն և ի կերակրել զմեզ... աւրհնեսցէ... զիշխան[աց] իշխան զպարոն Շալուէն. Թշնամիք սորա ընդ մի ճանապարհ գայցեն և ընդ հազարսն փախիցեն... Եւ ես անարժանս... սուտանուն Ոհաննէս միայնակեաց ի գաւառէն Վրացտանայ ի յամուրն գղեակէն Թմոքոյ *) ըստ իմում անարժանութեանս գծագրեցի զսայ, զի լիցի մասն մեր ի սմայ... և սղալանաց սորա, ծաղկէդ և կազմէդ, զի կար մեր այդչափ էր... »:

Սամշուիլդէի կոտորածի մասին հմմտ. Չամչեան Պատմ. Հայոց հատ. Գ. էջ 471—2, այլ մանրամասնութեանց համար Թովմա Մեծոփեցին: Հայ թուականը ՊՂԱ պիտի համապատասխանէ ըստ շարժական տոմարի 1440, 1 դեկտ.—1441, նոյեմբ. 30, կամ ըստ անշարժի (Սարկաւագի)՝ 1441, 11 օգոստ.—1442, օգոստ. 10: Քրիստոսի թուականը (1444) մեր գործած «սովորականը» չէ: Քրիստոսի և հայ տարբեր թուականների մասին առիթ կունենանք ուրիշ տեղում խօսելու:

**35.** ա. № 938 մեր մատենադարանի, Կարեն. ցուց. № 918. շատ մեծ, հաստափոր ճառընտիր. կաշեկազմ, թուղթ, խոշոր բոլորգիր, երկսիւն, մեծութիւն 48×31 հոմտր. տարբեր գրիչներից և տարբեր թղթի վերայ: Գրիչներն են՝ Յովհաննէս քահանայ, Յովհաննէս կրօնաւոր, Աւետիք սարկաւագ: Բովանդակութիւնը տես Կարեն. ցուցակ: Ստացողն է Հայրապետ կրօնաւոր. բազմաթիւ մանր ու խոշոր յիշատակարաններ վերջին ստացողներից. Աւետիս գրչի մեծ յիշատակարանից մէջ ենք բերում միայն հետեւեալը. «...ի զառն և ի վշտաբեր ժամանակիս, որ է բոլոր աշխարհս ի գերութիւն և ի տար (մ՛կնակեր)... ու ի ձեռն անաւր[էն] զանիին Լանկթամուր[այ], որ էր թիւս հայոց ՊԾ[Ա]: Այլև

*) Թիֆլիսի նահանգի այժմեան Ախալքալաքի գաւառում Վերին-Թմոգուի (= Zéda-Thmogwi) և Ներքին-Թմոգուի, տ. M, Brosset, Rapports sur un Voyage archéologique dans la Géorgie et dans l'Arménie են, St-Pétersbourg, 1850, էջ 154—156 են: «Թմոք բերդն» յիշւում է և Ջուանշէրին ընծայուած Վրաց Պատմութեան մէջ, Ժ2. էջ 107 (Վենետիկ 1884): Վրաց մատենագրութեան մէջ յայտնի է իբրև մատենագիր և թարգման պարսկական ռոմանի (Վիս և Ռամին) Սարգիս Թմոքեցին (Ս. Թմոգուելի), կարծեմ հայ:

* *
* *

գրեցաւ սայ ի զերահռչակ և յերկնահանգէտ սբ ուխտս Վարագ... յառաջնորդութեան և յեպիսկոպոսութեան տեղոյս տր Սահակայ...»։ Ուրեմն գրուած է Վասպուրականում 1402 փրկչ. թուին։ Տօնականիս առաջին ընթերցուածքն սկսւում է ծննդեան ճրագալոյցից։

36. ա$^{2}$. № 909 մեր մատեն—ի, Կարեն. ցուց. № 889, փոքրադիր ճառընտիր. կաշեկազմ, թուղթ, բոլորգիր, երկսիւն, մեծութիւն 26$\times$18 հրմտր.։ Ճառընտրիս ընթերցմունքներն սկսւում են բուն բարեկենդանի կիւրակէից։ Վերջին մեծ յիշատակարանից քաղում ենք. «Փառք... ի դառն և ի նեղ ժամանակի զոր տառապեալ կամք ի յանաւրինաց... գծագրեալ եղև այս սուրբ մատեանս, որ կոչի ճառընտիր. զոր ընտրեալ և հաւաքեալ է սբ վարդապետաց և եդեալ ի մի տուփ. յոհան ոսկեբերանի, յհ՛՛ն Մանդակունեցոյ, Սարգիս շնորհալից վարդապետի, Զաքարիայ հայոց կաթողիկոսի։ Զոր սահմանեալ են և եդեալ ի պայծառութիւն և ի զարդ աղուհացից պահոցն և սուրբ յարութեանն... Եղև աւարտ գրգոյս (երեք բառս լուսանցքում, կարմրադեղով) ի թվիս Հայոց ՋԻԷ (927=1478 փրկչ.) և ի զանութեան Յայղուպ պէկին, որդոյ Հասան բէկին, թոռնին Աւթմանայ, զոր յայսմ ամի էսպան զեղբայրն իւր զուլտան Խալիլն՝ և էառ զսուլթանութիւնն։ Եւ ի յաթոռակալութեանն Վաղարշապատու տէր Սարգիս կաթողիկոսի, և մերում Նահանգի եպիսկոպոսութեան՝ տէր Յոհաննիս(ես)ի և տր Եղիշէի, հոգևոր եղբարց։ Եւ էառ զգրաւ ձեռամբ խեղագար և փցուն գրչի Դաւիթ... իրիցի... ի յերկիրս Վայոձորոյ, ի գեաւղս որ կոչի Սրկղունս», են։ Յիշատակարանից ընդարձակ քաղուածքներ տես Սիսական Ալիշանի, էջ 130։

Կան վերջին ստացողների յիշատակարաններ. ոմն Տիկջան ստացել է ՋՁԴ (=1535) թուականին։ Մի ուրիշը՝ տէր Մելքէսէթ, ՌՀ (1621) թուին։ Յիշւում է ի թիւս այլոց այս տէր Մելքէսէթի քոյրը Ղզլար, «որ է ի ձեռն այլազգեաց ի քաղաքս Յերեւան իշխան ոմն Ամիրգունայի տուն գերեցեալ (գ)որ և հաւատով քրիստոնէութիւն առնէ»։ Յիշւում են նաև Դոլաթ խաթուն և նրա կողակիցը (այրը) Թանղրիղուլի, որոնց դուստրը Սանդուխտը նոյնպէս «է ի ձեռն այլազգեաց, որ ունի սէր ընդ քրիստոնէիցս և ինքն ոչ է ուրացեալ, այլ պահէ ինքն և ընկերակիցն իւր Ղզլարն զպահս և զաղօթս ի թագըստի»։ Մի ուրիշը՝ Անայ խաթուն, տուել է «սբ գրոցս գին Ռ դկ (հազար դեկան)»։ Արպատեցի Թովմայ քահանան նորոգել և կազմել է «ճառընտիրս ի թվականիս մերոյ ՌՃԺ-երորդի (1661 թ.) ի հայրապետութեան Վաղարշապատու Յակովբայ տեառն՝ սրբազան կաթողիկոսի»։

37. ա$^{3}$. № 127 Գէորգեան ցուցակի. կաշեկազմ, թուղթ, բոլորգիր, երկսիւն, մեծութիւն 35$\times$27 հրմտր. ստացող Յովանէս և տիկին Աւագուհի. (յիշւում են իւրաքանչիւր վարքի վերջում։) Գրիչ՝ Կարապետ, որդի Ստեփանոս քահանայի և Մինայի։ Վերջին ստացող՝ «Մուրատբաշի և կենակիցն իւր Նուշիկ»։ Էջ 589բ կայ յիշատակարան մի ոմն Յովանիսի, կարծեմ գրքի ստացողի, այսպէս. «Փառք... աղաչեմ... յիշել... զբարէպաշտ տանուտէր զԹումա որ վերստին կազմել ետուր



զգիրքս... Ես Յովանէս որ զԹումէն ինձ որդեգիր էրի որ զգիրքս կազ[մ]ել ետուր, և յանձնեցի զգիրքս ի Թումէն որ խնամք տանու և լաւ տիրութիւն առնէ և այլ ոչ ում իշխանութիւն չկա ի վեր[ա] գրոցս. Թումին անցել որ ինձ հոգւոյ որդի եմ էրել, թէ ինքն Թումէն իմ գրոցն խնամք տանու՝ ա՛՛ծ ուրն ողորմի ամէն։ Կազմեցաւ ի թվ. ՋԲ (902=1453) ի վանքս Սղքառ ընդ հովանեաւ սբ ա՛՛ծածնիս ի յառաջնորդութեան հեզահոգի կրաւնաւորին Մխիթա[րա], զի բազում աշխատութեամբ ծառայէր մեզ ի պէտս մեր զոր փոխարէն յա՛՛յ առնու [ա]մէն։ Եւ ինձ մեղապարտ Վարդան անուն մեղաւոր[ի] և ծնողացն ամենայնի կազմողի սուրբ գրոցս ա՛՛ծ ողորմեաց[ի]...»։ Ուրեմն ճառընտրիս գրութեան թուականը 1453-ից առաջ է, և հաւանօրէն ոչ շատ առաջ, թէև «վերստին» կազմելու մասին խօսք է լինում։ Սղքայոյ վանքն անշուշտ գտնւում է Սղգայ գաւառում. «Սա ...սեփհականեաց ...զգաւառն Սղգայ ի Տոսպ գաւառէ, որ առ ստորոտով լերինն Վարագայ... առնու զամրոցն և տիրէ գաւառին»։ (Թովմա Արծրունի Գ. ԻԹ, էջ 262, Ս. Պետերբ. 1887)։ Այս համանուն ամրոցը ՊՀԶ (=1427) թուին մի ճաշոցի յիշատակարանում «գեաւղ Սխգայ»-ն է, որ ըստ Փիրղալէմեանի անցեալ դարի վերջում շէն էր։ «Սոյն շէն 48 հայ ընտանեօք կար կանգուն յարեւելից կուսէ մերձ յՍյգեստան Վանայ» (Նօտարք Հայոց թիւ 87, էջ 83. Պոլիս 1888)։ Ըստ Հ. Կիպերտի Սղգայ գաւառը=Σελγία Պաղամէնսի (H. Hübschmann, Die altarmen. Ortsnamen, § 74, էջ 340. Strassburg 1904)։ Այժմեան կազմը Հայոց ՌՃԿԶ թուիցն է (յուլիսի 15-ին) Աստուածատուր կաթողիկոսի ժամանակից. (տ. յիշատակարան Զ-րի, էջ 726ա)։ Կան և այլ նորագոյն յիշատակարաններ, որոնցից մէկը «ՌՃՁ և մէկ թվոյ, մայիս ամսոյ տասն և ութ, աւուր համբարձման տեառն...»։ Եւ իսկապէս՝ 1732 թուին (=Հայոց ՌՃՁԱ) զատիկն ընկնում է ապրիլի 9-ին. իսկ համբարձումը մայիսի 18-ին. գիր տարւոյն է Ճ։

38. ա$^{4}$. № 937 մեր մատենադարանի. Կարեն. ցուց. № 921. կաշեկազմ, թուղթ, բոլորգիր, երկսիւն. մեծութիւն, 45$\times$31 հրմտր. գրիչ Յովանէս, ստացող Էլմելիք, վերջին ստացող և նորոգող Մովսէս վարդապետ Շատիկոյ անապատից։ Հին մասը հաւանօրէն 15-դ դարու գործ է։

զ. № 1754 մեր մատ—ի. Կար. ցուց. № 1713. կաշեկազմ, թուղթ, բոլորգիր, միասիւն. մեծութիւն 20$\times$14 հրմտր. փոքրադիր ճառընտիր, հաւանօրէն գրուած 17-դ դարում։ Ճառերի վերջում յիշւում են ստացողներ Հախպէնտէ, հայրը՝ Շահպէնտէ, մայրը Ճանպէկի, Պայրաք, Ըսպանտիար։

Զ—րիս հէնց սկզբում գտնւում է մի մեծ հատուած Ագաթանգեղոսից, առանց հեղինակի անուան։ Սխալաշատ գրչութիւն, որից քիչ բան է առնուած մեր համեմատութեանց մէջ։

39. Այժմս ամփոփենք այս ճառընտիրների ուսումնասիրութիւնից մեր ստացած տեղեկութիւնները։ ց-ն գրուած է 1201 թուին, հաւանօրէն

հիւսիսային Հայաստանում, որովհետև ունի Զաքարէ ամիր սպասալարի յիշատակութիւն։ Է-ը գրուած է 1456 թուին, Վերին Նորավանքում։ Բազմաթիւ Նորավանքերից (տ. Ալիշանի Սիսական) հաւանօրէն սա այն Վերին Նորավանքն է, որ յիշւում է «Սիսական»-ում էջ 203, Վայոց Ձոր գաւառում, ուրեմն նոյնպէս Արաքսից հիւսիս։ Ը և Թ ձեռագրերի տեղը և ժամանակը յայտնի չէ։ Դատելով բոլոր հանգամանքներից՝ երկուսն էլ 15-դ դարու գործ են։ Բովանդակութեամբ էլ (տփի կազմութեամբ) այս երկու ձեռագրերը շատ մօտ են միմեանց։ Գէորգեան ցուցակում կողք կողքի են արձանագրուած այս երկուսը (№ 671 և 672), որից կարելի է ենթադրել, որ միաժամանակ են բերուած Էջմիածին և հաւանօրէն միևնոյն տեղից։ Լոռեցի Վարդանի յիշատակութիւնը հազիւ թէ ծառայէ տեղը որոշելու, որովհետև լոռեցին կարող էր այդ ժամանակ չլինել Լոռիում (այժմեան Բորչալուի գաւառ), այլ պանդխտութեան մէջ։ Նոյնը պէտք ասել Ժ-ում յիշուած «Վանեցի», «Շիրազցի» են տեղական կոչումների համար։ Տեղը որոշելու համար աւելի կարևոր են Պարոն Տուածի անունը, և մանաւանդ Գեղփերխ կամ Գեղփերիք գիւղի անունը (Ի-ում), որ որևէ յիշատակարանի կամ արձանագրութեան մէջ կարող է երևան գալ։ Ժամանակի որոշումը արգելում է մեզ նոր հետազօտութեանց մէջ մտնել, ուրեմն այդ մնում է ապագային։ Տ-ը գրուած է 1441—1442-ին Սերկեւիլի գիւղում (Սաղմոսավանքի և Յովհաննավանքի միջև), ուրեմն նոյնպէս Արաքսից հիւսիս։

Մի բոլորովին տարբեր, լաւ գծերով որոշուած, խմբագրութիւն են ներկայացնում ա, ա², ա³, ա⁴ ձեռագրերը։ ա-ն գրուած է Վարագում 1402 թուին, ա³-ը գրուած է Սղքայոյ վանքում, Վասպուրականում, շատ մօտ Վարագին, 1453 թուին։ ա⁴-ի գրութեան տեղը և ժամանակը յայտնի չէ, բայց դատելով այլ հանգամանքներից՝ հաւանօրէն գրուած է նոյն 15-դ դարում, և նոյնպէս Վասպուրականում, յետոյ անցած Արաքսից հիւսիս և նորոգուած Շատիկ անապատի Մովսէս վարդապետից։ Հաւանօրէն այս Մովսէսը 1674-ին յիշուած Շատիկ անապատի (Վայոց Ձոր) «Հայր» տէր Մովսէսն է (տես Սիսական էջ 159), որով որոշւում է նորոգութեան ժամանակը։ Վերջապէս ա²-ը, աւելի փոքր գրերով և տփի ուրիշ կազմութեամբ ձեռագիր, գրուած է 1478-ին, նոյնպէս Վայոց Ձորում, Սրկղունք գիւղում։ Սրկղունքի մասին տես Սիսական էջ 129 և շար.։

Այս խմբակցութեան ձեռագրերը (ա—ա⁴) ներկայացնում են Ագաթ-ի մի բոլորովին նոր խմբագրութիւն, որի ծագման վայրը ամենայն հաւանականութեամբ Վարագն է։ Խմբագրողը հիւսել է Ագաթանգեղոսի հետ Խորենացու անունով մեզ հասած «Հռիփսիմեանց Պատմութիւնը», Գրիգորի Նշխարաց գիւտը են։ Յատկապէս նպատակն է եղել Վարագի վերաբերեալ աւանդութիւնները ներմուծել Ագաթանգեղոսի մէջ։ Տես մեր հրատարակութեան էջ 73 ծանօթ. 1, այս ձեռագրերի համառօտ բովանդակութիւնը։ Վարագից, իբրև կենտրոնից, այս խմբագրութիւնը տարածուել է Սղքայոյ վանք, Սրկղունք և Շատիկ՝ Վայոց Ձորում (հին Սիւնիք, այժմ Երևանի նահանգում)։ Խմբագրութեան տեղի մասին վկայում են նաև Վասպուրականի գաւառաբարբառի հետքերը, որ երևում են այս ձեռագրերում. տես, օրինակ, «Անախտ» ընթերցուածը § 48, ծան. 3։ Այս խմբագրութիւնը կատարուած պէտք լինի 1402 թուից (=ա-ի թուականը) առաջ. բայց որովհետև Հռիփսիմէի նահատակութեան ամիսը Վարագայ ընտանիքի բոլոր Ձ—րերն էլ դնում են սեպտեմբերին (տես § 210, ծան. 15), առանց ամսաթուի, որով հայ Հոռի ամիսը «զուգաւորուած» է սեպտեմբերի հետ, ուրեմն Նաւասարդը օգոստոսի հետ, և որովհետև այդպիսի զուգաւորութիւն, Նաւասարդ=Օգոստոս, ճշտիւ համապատասխանում է Սարկաւագի անշարժ տոմարին, ուստի ակներև է, որ Վարագայ խմբագրութիւնը չէ կարող 1084 օգոստոսի 11-ից առաջ լինել։ Սարկաւագի տոմարում հաշուի սկզբնակէտն է 1084 օգոստոսի 11-ը. բայց այդ տոմարի կազմութեան և գործածութեան մտնելու ժամանակը պէտք լինի տարիներով աւելի ուշ։ Հայ թուականի սկզբնակէտի (552 փրկչ.) վրայ աւելացնելով զատկական կամ «Հինգհարիւրեակ»-ի բոլորակը (=532 տարի)՝ ստացւում է 1084, որի վրայ աւելացնելով նորից մի հինգհարիւրեակ՝ ստացւում է Ազարիայի թուականի սկիզբը (552+532=1084+532=1616), այն է փրկչական 1616 թուականը։ Սրանից պարզ երևում է, որ հայ զանազան թուականները սերտ կերպով կապուած են զատկական հաշիւների հետ, ինչպէս որ է և Վրաց քրոնիկոնը, նոյնպէս հինգհարիւրեակներով (=532) կազմուած*)։ Նաւասարդ=Օգոստոս զուգաւորութիւնը հանդիպում է և շարժական տոմարում, բայց շատ կանուխ, հինգերորդ դարում. ուստի և այս ձեռագրերում պահուած Ագաթանգեղոսի Վարագայ խմբագրութեան մէջ պատահող զուգաւորութիւնը՝ ակներև է որ չէ կարող լինել շարժական տարով։ Այս խմբագրութեան ժամանակը կարելի էր աւելի ևս ճշտել, բայց հարկ կլինէր դրա համար ի մօտոյ քննել ա ձեռագրի ամբողջ տփի կազմութիւնը, ուստի և երկարութիւնից խուսափելով՝ այդ թողնում ենք, բաւականանալով մեր ձեռք բերած հետևանքով, այն է՝ Ագաթանգեղոսի այս խմբագրութիւնը կատարուել է 1084—1402 թուերի միջև, հաւանօրէն՝ մօտաւորապէս 12—14-դ դարերում։ Վերջին ձեռագիր z, 17-դ դարից, տեղն անյայտ, մնում է առանձնացած։



Մեր գործածած բոլոր ձեռագրերից միայն β-ն, ինչպէս տեսանք, ապահովապէս պատկանում է Ագաթանգեղոսեան Ձ—երի Երրորդ խմբին, α և միւսները բղխում են Երկրորդ, այն է հիմնական խմբից. Տ-ը ծագած է թւում Ն-ին շատ մօտիկ մի Ձ—րից, տես «զճորայ պահա-

*) Եւ որովհետև «հինգհարիւրեակի» գիւտը Աղեքսանդրիայում, մեր ունեցած հին և վաւերական տեղեկութիւններով, (Անանիա Շիրակացի և շատ ուրիշներ) փրկչ. 562 թուին էր, ուստի և հետևում է անհրաժեշտօրէն, որ ոչ 552-ին, ոչ էլ Ներսէս Բ-ի ժամանակ Դուինի ժողովում, ոչ էլ հէնց 562-ին չէր կարող «դրուել» զատկական հինգհարիւրեակի հետ սերտ կապուած հայ թուականը, այլ պէտք էին տարիներ, մինչև որ 562-ից յետոյ Աղեքսանդրիայի տոմարը մուտ գործէր հայերի մէջ և ընդունուէր։ Մեր թէ հին և թէ նոր գրողները շփոթում են երկու բոլորովին տարբեր բան. 1. հայ թուականի հաշուի սկզբնակէտը, որ է 552 փրկչ. թուականը. 2. Հայ թուականի դրուելու կամ պաշտօնապէս ընդունուելու տարին, որ դեռ գիտականօրէն ճշտուած չէ, թէև չեն պակասում մեզ կարևոր տեղեկութիւններ այդ մասին մեր հին գրականութեան մէջ։

հիւսիսային Հայաստանում, որովհետև ունի Զաքարէ ամիր սպասալարի յիշատակութիւն։ Ե-ը գրուած է 1456 թուին, Վերին Նորավանքում։ Բազմաթիւ Նորավանքերից (տ. Ալիշանի Սիսականը) հաւանօրէն սա այն Վերին Նորավանքն է, որ յիշւում է «Սիսական»-ում էջ 203, Վայոց Ձոր գաւառում, ուրեմն նոյնպէս Արաքսից հիւսիս։ Լ և Ղ ձեռագիրների տեղը և ժամանակը յայտնի չէ։ Դատելով բոլոր հանգամանքներից՝ երկուսն էլ 15-դ դարու գործ են։ Բովանդակութեամբ էլ (տափի կազմութեամբ) այս երկու ձեռագիրները շատ մօտ են միմեանց։ Գէորգեան ցուցակում կողք կողքի են արձանագրուած այս երկուսը (№ 671 և 672), որից կարելի է ենթադրել, որ միաժամանակ են բերուած Էջմիածին և հաւանօրէն միևնոյն տեղից։ Լօրեցի Վարդանի յիշատակութիւնը հազիւ թէ ծառայէ տեղը որոշելու, որովհետև լօրեցին կարող էր այդ ժամանակ չլինել Լօռիում (այժմեան Բորչալուի գաւառ), այլ պանդխտութեան մէջ։ Նոյնը պիտի ասել Ղ-ում յիշուած «Վանեցի», «Շիրացի» են տեղական կոչումների համար։ Տեղը որոշելու համար աւելի կարևոր են Պարոն Տուածի անունը, և մանաւանդ Գեղփերիս կամ Գեղփերիք գիւղի անունը (Լ-ում), որ որևէ յիշատակարանի կամ արձանագրութեան մէջ կարող է երևան գալ։ Ժամանակի սղութիւնը արգելում է մեզ նոր հետազօտութեանց մէջ մտնել, ուրեմն այդ մնում է ապագային։ Տ-ը գրուած է 1441—1442-ին Սևկևիլի գիւղում (Տաղմոսավանքի և Յովհաննավանքի միջև), ուրեմն նոյնպէս Արաքսից հիւսիս։

Մի բոլորովին տարբեր, լաւ գծերով որոշուած, խմբագրութիւն են ներկայացնում ա, ա$^2$, ա$^3$, ա$^4$ ձեռագիրները։ ա-ն գրուած է Վարագում 1402 թուին, ա$^3$-ը գրուած է Սղբայոյ վանքում, Վասպուրականում, շատ մօտ Վարագին, 1453 թուին։ ա$^4$-ի գրութեան տեղը և ժամանակը յայտնի չէ, բայց դատելով այլ հանգամանքներից՝ հաւանօրէն գրուած է նոյն 15-դ դարում, և նոյնպէս Վասպուրականում, յետոյ անցած Արաքսից հիւսիս և նորոգուած Շատիկ անապատի Մովսէս վարդապետից։ Հաւանօրէն այս Մովսէսը 1674-ին յիշուած Շատիկ անապատի (Վայոց Ձոր) «Հայր» տէր Մովսէսն է (տես Սիսական էջ 159), որով որոշւում է նորոգութեան ժամանակը։ Վերջապէս ա$^2$-ը, աւելի փոքր գիրքով և տափի ուրիշ կազմութեամբ ձեռագիր, գրուած է 1478-ին, նոյնպէս Վայոց Ձորում, Արկղունք գիւղում։ Արկղունքի մասին տես Սիսական էջ 129 և շար.։

Այս խմբակցութեան ձեռագիրները (ա—ա$^4$) ներկայացնում են Ագաթ.-ի մի բոլորովին նոր խմբագրութիւն, որի ծագման վայրը ամենայն հաւանականութեամբ Վարագն է։ Խմբագրողը հիւսել է Ագաթանգեղոսի հետ Խորենացու անունով մեզ հասած «Հռիփսիմեանց Պատմութիւնը», Գրիգորի Նշխարաց գիւտը են։ Յատկապէս նպատակն է եղել Վարագի վերաբերեալ աւանդութիւնները ներմուծել Ագաթանգեղոսի մէջ։ Տես մեր հրատարակութեան էջ 73 ծանօթ. 1, այս ձեռագիրների համառօտ բովանդակութիւնը։ Վարագից, իբրև կենտրոնից, այս խմբագրութիւնը տարածուել է Սղբայոյ վանք, Արկղունք և Շատիկ՝ Վայոց Ձորում (հին Սիւնիք, այժմ Երևանի նահանգում)։ Խմբագրութեան տեղի մասին վկայում են նաև Վասպուրականի գաւառաբարբառի հետքերը, որ երևում են այս ձեռագիրներում. տես, օրինակ, «Անախիտ» ընթերցուածը § 48, ծան. 3։ Այս խմբագրութիւնը կատարուած պիտի լինի 1402 թուից (=ա-ի թուականը) առաջ. բայց որովհետև Հռիփսիմէի նահատակութեան ամիսը Վարագայ ընտանիքի բոլոր Ձ—րերն էլ դնում են սեպտեմբերին (տես § 210, ծան. 15), առանց ամսաթուի, որով հայ Հոռի ամիսը «զուգաւորուած» է սեպտեմբերի հետ, ուրեմն Նաւասարդը օգոստոսի հետ, և որովհետև այդպիսի զուգաւորութիւն, Նաւասարդ=Օգոստոս, ճշտիւ համապատասխանում է Սարկաւագի անշարժ տոմարին, ուստի ակներև է, որ Վարագայ խըմբագրութիւնը չէ կարող 1084 օգոստոսի 11-ից առաջ լինել։ Սարկաւագի տոմարում հաշուի սկզբնակէտն է 1084 օգոստոսի 11-ը. բայց այդ տոմարի կազմութեան և գործածութեան մտնելու ժամանակը պիտի լինի տարիներով աւելի ուշ։ Հայ թուականի սկզբնակէտի (552 փրկչ.) վրայ աւելացնելով զատկական կամ «Հինգհարիւրեակ»-ի բոլորակը (=532 տարի)՝ ստացւում է 1084, որի վրայ աւելացնելով նորից մի հինգհարիւրեակ՝ ստացւում է Ազարիայի թուականի սկիզբը (552+532=1084+532=1616), այն է փրկչական 1616 թուականը։ Սրանից պարզ երևում է, որ հայ զանազան թուականները սերտ կերպով կապուած են զատկական հաշիւների հետ, ինչպէս որ է և Վրաց քրոնիկոնը, նոյնպէս հինգհարիւրեակներով (=532) կազմուած*)։ Նաւասարդ=Օգոստոս զուգաւորութիւնը հանդիպում է և շարժական տոմարում, բայց շատ կանուխ, հինգերորդ դարում. ուստի և այս ձեռագիրներում պահուած Ագաթանգեղոսի Վարագայ խմբագրութեան մէջ պատահող զուգաւորութիւնը՝ ակներև է որ չէ կարող լինել շարժական տարով։ Այս խմբագրութեան ժամանակը կարելի էր աւելի ևս ճշտել, բայց հարկ կլինէր դրա համար ի մօտոյ քննել ա ձեռագրի ամբողջ տափի կազմութիւնը, ուստի և երկարութիւնից խուսափելով՝ այդ թողնում ենք, բաւականանալով մեր ձեռք բերած հետևանքով, այն է՝ Ագաթանգեղոսի այս խմբագրութիւնը կատարուել է 1084—1402 թուերի միջև, հաւանօրէն՝ մօտաւորապէս 12—14-դ դարերում։ Վերջին ձեռագիր զ, 17-դ դարից, տեղն անյայտ, մնում է առանձնացած։



Մեր գործածած բոլոր ձեռագիրներից միայն β-ն, ինչպէս տեսանք, ապահովապէս պատկանում է Ագաթանգեղոսեան Ձ—երի Երրորդ խմբին, α և միւսները բղխում են Երկրորդ, այն է հիմնական խմբից. Տ-ը ծագած է թէւում Ն-ին շատ մօտիկ մի Ձ—րից, տես «զճորայ պահա-

*) Եւ որովհետև «հինգհարիւրեակի» գիւտը Աղեքսանդրիայում, մեր ունեցած հին և վաւերական տեղեկութիւններով, (Անանիա Շիրակացի և շատ ուրիշներ) փրկչ. 562 թուին էր, ուստի և հետևում է անհրաժեշտօրէն, որ ոչ 552-ին, ոչ էլ Ներսէս Բ-ի ժամանակ Դուինի ժողովում, ոչ էլ հէնց 562-ին չէր կարող «դրուել» զատկական հինգհարիւրեակի հետ սերտ կապուած հայ թուականը, այլ պէտք էին տարիներ, մինչև որ 562-ից յետոյ Աղեքսանդրիայի տոմարը մուտ գործէր հայերի մէջ և ընդունուէր։ Մեր թէ հին և թէ նոր գրողները չփոթում են երկու բոլորովին տարբեր բան. 1. հայ թուականի հաշուի սկզբնակէտը, որ է 552 փրկչ. թուականը. 2. Հայ թուականի դրուելու կամ պաշտօնապէս ընդունուելու տարին, որ դեռ գիտականօրէն ճշտուած չէ, թէև չեն պակասում մեզ կարևոր տեղեկութիւններ այդ մասին մեր հին գրականութեան մէջ։

կին» ընթերցուածը, էջ 16, ծան. 8։ Հնագոյններից ց-ն արդէն սկսում է համառօտել, փոփոխել (§ 107), ըստ յարմարութեան հատուածներ տեղափոխել (§ 443, 475, 496 են), կամ Խորենացուց փոխառութիւն անել (§ 859)։ Այդ նոյն գործողութիւնն աւելի եւս շեշտւում է նորագոյնների մէջ։ Միանման չիքերը, սկսուածք և վերջաւորութիւն, լաւ գաղափար են տալիս ճառընտիրների միմեանց հետ ունեցած յարաբերութեան և ընդհանուր ծագման մասին։ Բազմաթիւ ծանօթութեանց մէջ ուշադրութեան արժանի կարևոր կէտերը մատնանշել ենք բնագրի տակ, ուստի և աւելի ի մօտոյ ուսումնասիրել ցանկացողը պիտի դիմէ ծանօթութիւններին։

Թէ մեր մատենադարանում և թէ մանաւանդ դուրսը մնում են դեռ եւս շատ Զ—րեր՝ Ագաթանգեղոսից հատուածներ ունեցող։ Այդ բոլորն աչքէ անցնել և որոշ չափով համեմատութեանց մէջ առնել մեր ուժից բարձր էր։ Բաւականացանք 12 ճառընտրով, որոշ գաղափար տալու համար, թէ ինչ կարելի է սպասել ճառընտիրներից Ագաթանգեղոսի բնագրի համար, և մասամբ նաև պարզելու զանազան խմբերի ծագումն ու ճիւղաւորութեան ընթացքը։ Աւելին մնում է ապագայ ուսումնասիրողներին։

40. Այժմ գանք մեր համեմատութեան եղանակին և հանգամանքներին։ Ագաթ-ի այս նոր հրատարակութիւնը Զ-երի համեմատութեամբ յանձն էին առել Սահակ Կանայեանց և Մեսրոպ վարդապետ Մաքսուդեան։ Մի Զ-րի, մեր Ա.-ի, համեմատութիւնն սկսել էին և գրեթէ հասցրել մինչև Ագաթ-ի Առաջին մասի վերջերը, երբ Մաքսուդեան վարդապետը պաշտօն ստանալով դրսում՝ ստիպուեցաւ գործը թողնել և հեռանալ։ Նրան փոխարինեց Գալուստ Տէր-Մկրտչեանը։ Լաւ համարուեց գործը աւելի հիմնաւոր դնելու համար նախապէս Զ-երի ուսումնասիրութեան դիմել և ըստ կարելւոյն, արտաքին նշանների վրայ հիմնուած, Զ-երը բաժանել խմբերի, նաև լրացնել Զ-երի թիւը Կարենեան ցուցակը չմտած օրինակներով։ Մեր երկուսիս գործակցութիւնն սկսուեց 1903-ի յունուարի 22-ին։ Կանայեանցն ու Մաքսուդեանը մի քանի ամիս առաջ արդէն սկսել էին իրենց աշխատութիւնը, այնպէս որ ամբողջ գործը սկզբից մինչև վերջը՝ տևեց մօտ եօթը տարի։

Ըստ որոշման հրատարակչական նախապատրաստական ժողովի, տեղ և ժամանակ խնայելու նպատակով, պարտաւորուած էինք համեմատութեանց մէջ չառնել հետևեալ ընթերցուածները.

աւ=օ. Մեր հնագոյն Զ-երն ընդհանրապէս ազատ են օ-ի գործածութիւնից, յատկապէս a Զ-րը. Նորագոյններում հետզհետէ տիրող է հանդիսանում օ գրչութիւնը։ Ա. Զ-րում գլխովին տիրում է օ-ն, նոյն իսկ այնպիսի դէպքերում, ուր մեր այժմեան գրութեանց մէջ աւ է, օրինակ Դօիթ=Դաւիթ, կարդեցօ=կարդեցաւ, հաստատեցօ=հաստատեցաւ և այլն։

ե=է. Հնագոյն Զ-երի, մանաւանդ a-ի և մասամբ նաև b-ի մէջ, դժուարին է, տեղ տեղ նաև անհնարին, որոշել ե և է գրերը միմեանցից։ ԺԲ—ԺԴ դարու շատ Զ-երում յաճախ պատահում է այս



երևոյթը (Հմմտ. Գ. Տէր-Մկրտչեան, Ագաթ-ի աղբիւրներից, Յիշատակ դատակնքաց Գորիա և Շմոնի վկայից, յառաջաբանը, Վաղարշապատ 1896)։ Ուրիշ դէպքերում, ինչպէս թե, էթէ (յաճախ d Զ-րում), ետի և էի գործածութիւնը ոչ թէ տառերի նմանութեամբ է բացատրւում, այլ ծագում է տարբեր ուղղագրութիւնից։

ը. Մի քանի բառերում, ինչպէս մշտընջենաւոր, խորհըրդական, հրըշտակաց, տըւան (=տուան), կամ տողադարձի մէջ՝ ըղնա կամ գընա, յատկապէս ամեն դէպքում չեն նշանակուած այս տարբերութիւնները։

ղ=լ. Փչիկով լինը կամ զատը ապագրական դժուարութեան պատճառով՝ նոյնպէս չէ նշանակուած ամեն անգամ, այլ բնագրի մէջ առնուած են սովորական ձևերը՝ այլ (=այղ), Եղեկիել (=Եղեկիեղի) և այլն։

յ. Մի կողմից այսպիսի ընթերցուածներ, ինչպէս օրինակ թանձրայյատակ, հրաշայկերտ, նայ (=նա), ոյ (=ո), ապայ, և այլն, միւս կողմից ի վերա, արքաի, աստուածաին, վաեւչական և այլն, յաճախ են մանաւանդ հնագոյն Զ-երում։ Իսկ d-ն, որ աւելի և ագէտ գրչութիւն է, ոչ միայն բաց է թողնում շատ անգամ բառերի վերջում չհնչուող յ տառը, այլև յաճախ գեղչում է յ նախդիրը, օրինակ՝ արարչէ (=յարարչէ), նաև երբեմն բառի սկզբնատառ յ-ն, օրինակ գոյս, ուսալից (=զյոյս, յուսալից)։

ւ. Այս տառի գործածութիւնը նոյնպէս մեծ տատանումների է ենթարկուած։ Նորագոյն Զ-երը յաճախ ունեն հոգով, եկեղեցոյ, ազատնոյ, փոխանակ հոգւով, եկեղեցւոյ, ազատնւոյ և այլն։ Շատ հազուադէպ չեն նաև ու-ի տեղ գործածուած ւ-երը, մանաւանդ Ա. Զ-րում, օրինակ. աւերամած, յաւրինուածոց, և այլն։ Յատուկ ուշադրութեան արժանի է նաև մակաբոյծ ւ տառը, մանաւորապէս a Զ-րում, օրինակ որդւի, հոգւի, մարդւոյն, միայնւոյ և այլն։ Իսկ d-ն աւելի եւս հեռու է գնում և ունի այսպիսի ուղղագրութիւն, ոչ հազուադէպ, կենդանոյւն=կենդանւոյն, սիրոյւն=սիրոյն, եցւոյց=եցոյց, միացոյւց=միացոյց և այլն։

Պատիւ. Պատիւները հնագոյն Զ-երի մէջ, ինչպէս յայտնի է, հազուադէպ են, և գործ են ածւում մի միայն Տէր, Յիսուս, Քրիստոս, Աստուած և նման բառերի մէջ։ Հետզհետէ պատուագրութիւնը տարածւում է անխտիր բոլոր բառերի վրայ, մանաւանդ —թիւն, —թեան, —թեամբ և նման վերջաւորութեանց համար։ Պատուին աւելանում է և սղման նշանը (՛)։ Տեղ-տեղ միայն, կարևոր համարուած դէպքերում, մեր համեմատութեանց մէջ յիշւում են պատուագրութիւնները։ Պատիւների բանալը աշխատել ենք մեծ ուշադրութեամբ անել։ Պատահում են և առանց պատուի արտաքին նշանի սղումներ, օրինակ a Զ-րում, «զուրութեն», «զփառաւորութեն», փոխանակ զօրութեան, զփառաւորութեան և այլն։ d Զ-րն այս կէտումն էլ աչքի է զարնում իւր տարօրինակ պատուագրութեամբ. այսպէս օրինակ, ամյզաւրաց, ամյփրկիչն, ամյգէտ, ամյպրգև, ամյկար (պատիւները միշտ առաջին այբի վրայ), որ կարդացել ենք «ամենազօրաց, ամենափրկիչն, ամենագէտ, ամենապարգև, ամենակար» և այլն։ Բառի միջի թարմատար յ-ն ուղղագրական տարբերութիւն է—ամենայկար, ամենայփրկիչ և այլն։ Պատուա-

գրական սղումները նոյնպէս շատ տարբեր են այս կամ այն Ձ-րի մէջ, օրինակ Ա Ձ-րը —Թիւն վերջաւորութիւնը համառօտում է սովորաբար Թի, իսկ դիմորոշում Թին (=Թիւնն), մինչդեռ նոյն խմբի Բ Ձ-րը Թին է գրում Թիւն վերջաւորութեան համար, իսկ Թինն (=Թիւնն)՝ դիմորոշով վերջաւորութեան համար։ Գրութեան այսպիսի տարբեր ձևերից այլազան ընթերցումների թիւը անհամար է։ Յատուկ ուշադրութիւն է դարձուած մեր համեմատութեանց մէջ այսպիսի պատճառներից առաջացած սխալների վերականգնելուն։

*Կէտադրութիւն և տողադարձ.* Ձ-երի շատ անգամ միմեանց հակասական կէտադրութիւնը հարկաւ հնարաւոր չէր պահել։ Տպագրի մէջ եղածն էլ շատ տեղ ըստ իմաստի փոփոխել ենք, հազիւ երբեմն կարևոր համարուած դէպքերում ծանօթութեանց մէջ նշանակելով մեր մտցրած փոփոխութիւնը։ Իսկ մեր տպագրի մնացած կէտադրութեան սովորական մասը, մասնաւորապէս ստորակէտների և բութերի գործածութիւնը, նաև տողադարձն ամբողջապէս թողնուած էր Ստ. Մալխասեանցի հայեցողութեանը։

*Համառօտագրութիւններ.* Ընթերցումների պակասները նշանակել ենք չիք-երով. փխ. (=փոխանակ) համառօտագրութիւնը գործ է ածուած՝ երբ մի ընթերցուածի տեղ այլ Ձ-ր մի ուրիշ ընթերցուած ունի, օրինակ ուր, փխ. յոր։ Երբ մի ուղղագրական տարբերութիւն տիրում է մի որևէ Ձ-րում, և կարճութեան համար հարկ է համարուել խուսափել իւրաքանչիւր անգամ յատուկ նշանակելուց՝ այդ յայտնել ենք (յաճ.)=յաճախ համառօտագրութեամբ, օրինակ «d այնաւրիկ (յաճ.)», որ նշանակում է, թէ d-ն յաճախ այնորիկ բառը գրում է «այնաւրիկ»։ Սովորական փակագծի մէջ (պատ.)՝ նշանակում է պատառ. ուրեմն այս դէպքերում ընթերցուածը Ձ-րում պատառ ունի, և հարկ է համարուել այդ մատնանշել։ Երբ տողի մէջ միևնոյն բառը մի քանի անգամ է պատահում, անորոշութիւնից խուսափելու համար չիք-ի առաջ կլոր փակագծի մէջ գրուած է և հետևեալ բառը, օրինակ՝ «չիք և (տաց)». այս նշանակում է, որ պակասում է մի քանի և-երից այն և-ը, որ գտնւում է «տաց» բառի առաջ։ Տեղ-տեղ հանդիպող աստղանշով ընթերցուածը ցոյց է տալիս, որ այդ ընթերցուածը տպագրական վրիպակ չպէտք է համարել իր տարօրինակ գրչութեան պատճառով. օրինակ՝ ԱՁ* հրեշտաց, մինչդեռ միւս Ձ-երն ունին «հրեշտակաց», «հրշտակաց», և այլն։ Տիրէն (—) նշանակում է մինչև, յատկապէս գործածուած չիք-երի մէջ, օրինակ՝ «չիք և ինքն իսկ թագաւորն— բանակին և ի խոր վիրապին»։ Տիրէն գործ է ածուած նաև Ձ-երի տառերի համար, օրինակ՝ Ա—Ը նշանակում է ԱԲԳԴԵԶԷԸ, Ա—Դ= ԱԲԳԴ և այլն։

*Անկիւնաւոր փակագիծը,* [ ], գործ է ածուած այլեայլ Ձ-երի նման ասացուածի մէջ այս կամ այն Ձ-րին յատուկ տարբերութիւնները նշանակելու համար, առանց կրկնելու մի քանի անգամ ամբողջ ասացուածը, օրինակ՝ «βabdԱԲ «և ի ներքսագոյն խորանացն [βd խորանին, α խորանն] ի վերայ հանգստարանացն կենդանագիր [βα կենդանագիր]» ասացուածքի մէջ վեց ձեռագիրն էլ յար և նման ընթերցուած ունին,



բացի անկիւնաւոր փակագծերով նշանակուած բառերից։ Այս փակագծի գործածութեամբ ձեռք է բերւում մեծ պարզութիւն և տեղի խնայողութիւն։

*Բառերի յետևառաջութիւնը*՝ ընթերցումների մէջ առաջ է բերուած առանց որևէ նշանի, օրինակ բնագիր՝ «և ասէ թագաւորն», *ընթերցուած* «և թագաւորն ասէ»։

Մնացած համառօտութիւններն ինքն ըստ ինքեան հասկանալի են, օրինակ տեղ տեղ տ. այսինքն է տե՛ս, էջերի թուանշաններից յետոյ տ.=տող. հմմտ=համեմատել, պարբ.=պարբերութիւն կամ հատուած, միւսները կամ միւսն.=միւս Ձեռագրերը և այլն։

Ամբողջ Ագաթանգեղոսը բաժանեցինք 900 հատուածի կամ պարբերութեան, որոնուած բառը կամ տեղը դիւրաւ գտնելու համար։ Կորիւնից եղած կոչումները նոյնպէս նշանակուած են հատուածաթուերով (§§)՝ ապագայ տպագրութեան համար Գ. Տէր-Մկրտչեանի արած տրոհումների համեմատ։

Ագաթ-ի մեր այս բաղդատութիւնը կատարուել է հետևեալ ձևով։

Տփղիսի տպագրութիւնը (=t), իբրև մատչելի և տարածուած օրինակ, ընտրեցինք բաղդատութեան համար։ Ընթերցումները գրի առնելու գործը ամբողջովին Ս. Կանայեանցինն է։ Ձ-երին հետևել է Գ. Տէր-Մկրտչեանը, տպագրին՝ Կանայեանցը, երկուստեք հետևելով Ձ-րի և տպագրի տարբերութեանցը։ Ընթերցումն եղել է փոխնիփոխ, ձայնի յոգնութիւնից խուսափելու համար։ Նկատուած տարբերութիւնները տող-տող գրի են առնուել, տպագրի տողերի համաձայն։ Փորձը ցոյց տուեց, որ այս տեսակ համեմատութեան ժամանակն էլ անխուսափելի են երկու տեսակ սխալ—աչքի և ականջի։ Աչքի սխալները առաջ են գալիս Ձ-րին կամ տպագրին անուշադիր հետևելուց. բայց որովհետև հսկողութիւնը երկուստեք էր՝ այսպիսի սխալները իսկոյն նկատւում էին։ Ականջի սխալը թելադրելուց կամ «տուն տալուց» է առաջ գալիս, մանաւանդ երբ երկար լարուած աշխատանքից յոգնութիւնն աւելանում է։ Օրինակ, շատ սովորական է, երբ «ըստ» և «զ» շփոթւում են լսողութեան յոգնութիւնից («ըստ Նոցա»—«զնոցա» և նմաններ)։ Մեր բաղդատութեան մէջ մինչև այժմ ուշադրութեան են առնուած եղել՝ տառերի նմանութիւնից առաջացած աչքի սխալները, ասացուածքի վերջի նման բառերից կամ նման վերջաւորութիւնից ծագած թռիչքները,—մանաւանդ երբ ընդօրինակութիւն է, և օրինակողը ստիպուած է գաղափարում կարդացածը գրել և նորից աչքերը դարձնել գաղափարին՝ ընդհատուած տեղից վերստին կարդալու համար,—կամ անանջատ բառերը (հին, երկաթագիր գրութեանց մէջ) անյաջող անջատելուց ծագած թիւրիմացութիւնները։ Մինչդեռ ուղղագրական տարբերութիւնների մեծ մասը ծագած են թւում թելադրութիւնից։ Թելադրուած բառը լսողը կամ լսողները գրում են իւրաքանչիւրն ըստ իւր լսածի և իւր գիտեցած ուղղագրութեան, և երբ գրողները մի քանիսն են՝ մի անգամից, մի թելադրութիւնից ստացւում են բազմաթիւ տարբեր օրինակներ, այլ և այլ ուղղագրութեամբ և զանազան վրիպակներով։ Օտար ազգերի, օրինակ Յոյների և Հռովմայեցոց մէջ, շատ յայտնի են ընդօրինակու-

թիւններ պատրաստող գործարաններ, ուր վաճառքի համար պատրաստւում էին մեծ քանակութեամբ Զ-եր՝ թելագրութեամբ։ Մեզնում աներկբայ է, որ պիտի լինէին քիչ թէ շատ նման հաստատութիւններ, մանաւորապէս վանքերում։ Յամենայն դէպս «տուն տալու» յիշատակութիւններ կան Զ-երի մէջ, որոնցից բերենք մի օրինակ։ Մեր Մատենադարանի № 934 (=Կարին. 914) ճառընտրում կարդում ենք «... (յիշել) այլ և զօրբամանեալ եպիսկոպոսն զտէր Յոհաննէս Ալւորենց, որ զայս. Բ. ճառս աշխատութեամբ տուն երետ, որ գրեցաւ» (էջ 351ա)։ Կամ «...տէր Յոհաննիսին Ալւորենց եպիսկոպոսին և ծնողաց,... որ աշխատեցաւ ի տուն տալն» (էջ 359բ)։

Տուն տալու աչքի սխալները, անյաջող վերծանութիւն, թռիչքներ և այլն, անդրադառնում են թելագրութեամբ գրողների օրինակներում, ուր աւելանում են նաև գրիչների ագիտութեան (վատ ուղղագրութեան) և ականջի, այն է լսողութեան, սխալները։ Մեզ մեծապէս նպաստեցին Զ-երի խմբերի բաժանմունքը՝ այս թերութիւններից խուսափելու։ Խմբակից Զ-երի միմեանցից ունեցած տարբեր ընթերցուածները յատուկ ուշադրութեան արժանացան, որով պատահական աչքի կամ ականջի սխալների առաջն ըստ կարելւոյն առնուեց։

Բոլոր Զ-երը բաղդատելուց յետոյ ստացուած ընթերցուածները փոխանակ անմիջակ կերպով միմեանց կողքին շարելու, ինչպէս անում են ոմանք, նպատակայարմար համարեցինք համախմբել, գործածելով ուղղանկիւն փակագիծ, որի մասին տես վերը։ Համախմբման գործը աւելի մտաւոր լարուածութիւն և յոգնութիւն պատճառող գործ է, նոյնպէս ենթակայ սխալների և թիւրիմացութեան։ Ընթերցուածները §§ 1–20, 179—497 և 802—805 համախմբել է Գալուստ Տէր-Մկրտչեանը, իսկ §§ 21—178, 498—801 և 806—900 Ստեփան Կանայեանցը։ Համախմբելու և բնագիրը կազմելու ժամանակ բոլոր կասկածելի տեղիք տուող ընթերցուածները նորից և նորից վերստուգուել են Զ-երով *)։

Ընթերցուածների համախմբումների վրայ հիմնուած մեր հրատարակութեան բնագիրը կազմել է Գ. Տէր-Մկրտչեանը, օգտուելով Ս. Կանայեանցի և Ստ. Մալխասեանցի խորհուրդներով, աչքի առաջ ունենալով նաև Կանայեանցի կազմած բնագիրը (§§ 498—801), այլ և իւր՝ տպագրութեան համար պատրաստած Կորիւնի հիմնական Զ-ի ընթերցուածները։ Մալխասեանցը բացի տպագրութեանը և սրբագրութեանը հսկելուց՝ շատ օգտակար է եղել նաև բնագրի կազմութեանը, իւրաքանչիւր մամուլի համար ընդարձակ և յաջող դիտողութիւններով, ցուցումներով և կասկածելի թուացող կէտերը մատնանշելով, որ կրկին վերստուգել ենք։ Այսու ամենայնիւ բնագրի կազմութեան ամբողջ պատասխանատուութիւնը մնում է Գ. Տէր-Մկրտչեանի վրայ, որի վերջնական ցուցումները տպագրութեան մէջ գործադրուել են ճշտութեամբ։

*) Համախմբման ժամանակ զանց են առնուած մեծ մասամբ յ և ի—է տառերի տարբերութիւնները. օրինակ՝ բնագիր եթէ, ընթերցուած ԱԲ թե, փոխանակ նշանակելու՝ Ա թե, Բ թէ, այսպէս նաև մեծ մասամբ նշանակել ենք՝ ԱԲ վերա, փոխանակ գրելու՝ Ա վերայ, Բ վերա և նմաններ։



Բոլոր վկայութիւնները ժողովել է Ս. Կանայեանցը, Սուրբ Գրքինը իւր աշակերտ Գէորգեան ճեմարանի ուսանողներ՝ Խորայէլ սարկաւագի և Սիմէոն Գրուզինեանի օգնութեամբ։ Բնագրի կազմութեան ժամանակ Գ. Տէր-Մկրտչեանը, աչքի առաջ ունենալով և նախկին բանասէրների աշխատանքներն այդ մասին (Հ. Բարսեղ Սարգսեան, Պաուլ դը Լագարդ, Մառ), վկայութիւնները վերստուգել է և տեղ-տեղ լրացրել, թէև այսու ամենայնիւ մնում են հարկաւ պակասներ։ Փաւստոսից և Կորիւնից առնուած ցուցմունքները նոյնպէս լրացրել է Գ. Տէր-Մկրտչեանը, յատկապէս Կորիւնինը, առնելով տպագրութեան համար իւր կազմած բնագրից։ Տպագրութեան վերջում վկայութեանց ցանկն ամփոփողն է Ս. Կանայեանցը։ Սկզբներում բաւականացանք միմիայն ուղղակի «կոչումները» նշանակելով, բայց յետոյ լաւ համարեցինք աւելացնել նաև «ակնարկները» Ս. Գրքից, առանց յաւակնութիւն ունենալու նիւթն սպառած լինելու, մանաւանդ որ մանաւորապէս Վարդապետութիւնը Ս. Գրքի ամփոփումն է սկզբից մինչև վերջը, որով և գլխովին տոգորուած Ս. Գրքով։

Դրսում եղած Զ-երի մասին մեր հաւաքած տեղեկութեանց մի մեծ մասը պարտական ենք Մեսրոպ վարդապետ Տէր-Մովսէսեանին, որ մեր տրամադրութեան տակ դրեց իւր տետրակները, որոնցից և քաղեցինք մեզ հարկաւորը, ինչպէս և յիշուած է վերևում։ Անուանց ցանկը տոմսակներով ժողովել է Ս. Կանայեանցը, դասաւորել ենք միասին, իսկ Գ. Տէր-Մկրտչեանը տեղ-տեղ լրացնելով տուել է վերջին ձևակերպութիւնը։ Մեր այս յառաջաբանի նիւթը և Զ-երի ուսումնասիրութիւնը բաղդատութեանց ընթացքում՝ մեր երկուսինն է, իսկ վերջնական ամփոփումը Տէր-Մկրտչեանինը։ Բովանդակութեան ցանկը Տէր-Մկրտչեանինն է, Ագաթանգեղոսի վերաբերեալ մատենագրութեան ցանկը Կանայեանցինը։ Իւրաքանչիւրս կատարել ենք այնչափ, որչափ ներել են մեր ոյժերն ու ժամանակը, աւելին և լաւագոյնը սպասելով ապագայ աշխատաւորներից։

Գ. Տէր-Մկրտչեան
Ստ. Կանայեանց

Մնում էր ինձ մի գլուխ նուիրել Ագաթ-ի տարբեր խմբագրութիւններին, թարգմանութիւններին, հեղինակին և գրութեան ժամանակին։ Մառի հրատարակութիւնը, արաբ «Ագաթանգեղոս», ռուս թարգմանութեամբ և յատուկ ուսումնասիրութեամբ, նոր լոյս է սփռում այս բոլոր խնդիրների վրայ։ Կարևոր էր նաև մեր այս հրատարակութեան մէջ երևան եկած նոր ուշագրաւ ընթերցուածները, տարական ձևով յատուկ անուններ, բազմաթիւ սրբագրութիւններ և ուղղումներ, ի մի ամփոփել ընթերցողի դիւրութեան համար. բայց գործի շատ ուշանալը և մանաւանդ իմ առողջական վիճակը արգելում են ինձ այդ. թերևս ուրիշ պատեհ առթիւ հնարաւոր լինի այդ խնդիրներին վերադառնալ։

Գ. Տ.-Մ.

9 ապրիլի 1909.
Ս. Էջմիածին.

# II

Դնում ենք այստեղ արդի հայերէն Ագաթանգեղոսում պահպանուող հատուածը—սկիզբը, որ պահպանուած է յունարէնում: Թարգմանութիւնը առնում ենք Հ. Գ. Զարբհանալեանից (Հայկական Հին Դպրութիւն, երրորդ տպ., Վենետիկ 1897, եր. 206—212): Արտաշիրի վէպը հասել է մեզ և պահլաւերէն, որի գերմաներէն թարգմանութիւնը, կատարուած Թ. Նէօլդեքէ'ից, կրում է հետևեալ խորագիրը. Geschichte des **Artachsîr î Pâpakân**, aus dem Pehlewi übersetzt, mit Erläuterungen und einer Einleitung versehen von Th. Nöldeke. Separat—Abdruck aus der Festschrift zum fünfzigjährigen Doctor-jubiläum des Herrn Professors Benfey. (Beitrage zur Kunde der Indogermanischen Sprachen, IV. Bd.). Göttingen, 1879.—Կայ նոյն վէպի և հայ թարգմանութիւնը պահլաւերէնից—«Արտաշիր Բաբական **Կարնամակ**. պահլաւ բնագրէն թարգմանեց հանդերձ ծանօթութեամբք գործ. Յ. Թիրեաքեան, Փարիզ 1907»:

Ա. Ըղձիւք բղձացեալքն յօժարութեամբ ընդ ծով նաւարկութեան՝ խնդրակամ մտին ի ջուրցն վտանգ. զուարթամիտք ձեռն մխեն ի շինուած նաւուց, և ախորժեն ծովային անցուցանել կեանս. կայմս կանգնեն, և թեօք ուղղեկաց՝ զալեացն խորտակեն զբռնութիւն. և ընդ որ կոյս կամք իցեն՝ զնաւն ուղղեն, զհաստափոր զծոցաւոր զառագաստն՝ իբրև զկրմուղ բառ կամի սանձահարեալ: Որոց ոչ ինչ ահ արկանէ, ոչ կոհակացն ուժգնութիւն, և ոչ քարաժայռիցն ընդ առաջ ելք կասեցուցանեն. վասն զի ի վտանգս յաճախեալ զկենցաղական ընթացս՝ ի հզաւորսն մահու զեղերել ցանկան, զի կարող լինիցին զկարևորսն անձանց մատակարարել: Են որ ի սակս քաղաքացն ապրանաց ճարակի՝ ուղի հատանեն. և են որ ի պէտս զարդու պճնութեան արանց և կանանց մինչև ցհնդկայինն նաւարկեալ ծով, և զազնուագիւտ ականց խնդութիւնս՝ բաղձացելոցն բերեալ մատուցանեն: Յայսպիսիս զոգցես անդունդս խորոց և իմ միջամուխ լեալ ի տուրևառս Հայաստան աշխարհի, բուռն հարից ի գիր արձանացուցանել զեղեալսն, զգործեցեալս յաշխարհին Պարսից և ի Հայոց, և զմարտս պատերազմաց զոր եառն ընդ միմեանս:

Բ. Պարթևք՝ իբրև դէպք ի բարի յաջողէին նոցա, զթագաւորութիւն Պարսից, զՀայոց և զՀնդկաց՝ որ սահմանակիցք են արևելեայ Պարսից, նա և զխստալուծ զազգն Մասքթաց՝ յիւրեանս կորզեալ ժառանգէին, այսպիսի ինչ կարգաւ. երիցագոյնն ի Պարթևաց տոհմէ, որ ապա զարշակունի ընկալան անուն, հասակաւ բարգաւաճ և արութեամբ շքեղ, գեր ի վերոյ քան զայլս երևեալ, նա կալաւ զիշխանութիւն արքայութեանն Պարսից: Եւ որ երկրորդն էր զկնի նորա՝ զՀայաստանեայց առնոյր յինքն զթագաւորութիւն. իսկ որ երրորդն էր՝ զՀնդկացն կալաւ զտէրութիւն, զհպատակն սահմանաց Պարսից: Իսկ չորրորդն ի նոցանէ՝ զՄասքթացն ընկալաւ զիշխանութիւն թագաւորութեան: Այս կարգ էր տոհմին Պարթևաց, և առլիմբ զբազում ժամանակս յերկարեցան յաջողութեամբ:



Գ. Անտի սկիզբն արարից՝ ուստի զիւրոյ զկորմանն ծագ եցոյց Պարթևն: Արտաւան որդի Վաղարշայ ի Պարթևական ծննդոց, քաղդէիցն գոլով գիտութեամբ ներհուն, զընթացս և զհոլովմունս աստեղացն համարեալ և իրացն հանդերձելոց կանխագէտ, իբրև յառագաստի էր ընդ կնոջն, ամբառնայր զաչսն յաստեղս ի վեր և խորհրդոց լեալ հասու, ասէ առ թագուհին. Տեսի զընթացս աստեղ. և այս թուի ինձ նշանակ, զի եթէ ոք փախարանջեալ ի տեառնէ իւրմէ՝ ելցէ ընդդէմ նորա մարտիւ պատերազմաւ, յաջողեսցի նմա տանել ի գլուխ զյաղթութիւնն և նկուն առնել զտէր իւր: Զայս ասացեալ՝ ի քուն լինէր: Եւ որպէս զկարգ օրէնք են, մի ի նաժշտաց թագուհւոյն ի նմին սենեկի առագաստին ունէր իւր դադար անկողնոյ առ ի պէտս կարևոր հարկի սպասարկութեան առ ի նմանէ հրամայելոցն: Դուստր էր սա ուրումն յաւագ ծառայից, և ընտանի մերձաւոր ումեմն ի գլխաւոր իշխանաց, որոյ անուն Արտաշիր, ի գաւառէն Ստրխստանեայց, որոյ ի ցանկութիւն տարփանաց ըմբռնեալ իսկ էր: Վասն որոյ ի լսել անդ զբանս թագաւորին, ել ի սենեկէ անտի զանխուլ յարքայէն և ի տիկնոջէն, ընթացաւ առ Արտաշիր որդի Սասանայ, յորմէ Սասանականքն՝ որ ի նմանէ՝ և ի թագաւորացն Պարսից ընկալան զծագումն:

Դ. Մտեալ սորա ի խորանն՝ քանզի և ոչ ոք ի սպասաւորաց կարէր արգելուլ զնա, գիտելով զառ միմեանս սիրելութիւնն, այսպէս խօսէր ընդ նմա. Սիրեցեալդ իմ Արտաշիր, ի բաց արա զքուն յարտևանանց քոց և բուռն հարցես զխորհրդոցն զոր խորհեցար երբեմն. զօրացիր և քաջ լեր ի վերայ հասանել գուշակութեան արքային. քանզի ժամ է արդ գեղեցիկ զինուորութեան, արդ ընդ իմաստունս խորհրդակցութեան, արդ դէպ ժամանակ ի ճակատ գումարելոյ զբազմութիւն զնդիցն. վասնզի քննեաց թագաւորն զընթացս աստեղաց և ասէ. Եթէ ոք ի ծառայից ընդդէմ դարձցի տեառն իւրում, յաղթեսցէ. և արդ երթ, ի խորհուրդ ժողովեա և կարկառեսցես առ իս զաջ քո, և հաստատեսցես երդմամբ զբանս իմ. և եթէ յաջողեսցի քեզ բերել ի ձեռս զարքայութիւն Պարսից, և զիս մի որոշեսցես յանկողնոյդ. զի զդոյն հանապազ ասէիր, յորմէ հետէ եղև ի սրտի քում խորհուրդդ այդ և ինձ պատմեցաւ: Զայսոսիկ Արտադուխտ:

Իսկ Արտաշիր շնորհս կալաւ զնմանէ. և աջովն ի վեր յերկինս բարձրացուցեալ զձեռս կնոջն, ասէ. Ահաւադիկ տեսցեն յանդիման դիցն զօրութիւնք, արև և հուր, օդ և հող, զի յայսմ և ի սոյն աւուր խորհուրդ արարեալ ընդ աւագաց Պարսից, և նշկահեալ զարքայն, փաղփաղակի ի պատիւ տիկնութեան ամբարձից զքեզ:

420 Վասն այնորիկ Հոգին աղաւնակերպ իջանէ, զի ուսուսցէ տեսողացն՝ սրբամտելով առ Աստուածորդին մերձենալ, և զշնորհս բարերարութեան Հոգւոյն ընդունել, և Հօրն հաճոյ լինել. վասն այսորիկ Որդին Աստուծոյ եկն և կատարեաց զուխտ հարցն, անուանելով նոցա որդի։ Որդին Աստուծոյ վասն այսորիկ եկեալ մկրտի, ի հաստատել զմկրտութիւն ամենայնի՝ որ մկրտելոցն իցեն, զի անդ իսկ զայս աւանդելով՝ փրկութիւն ամենեցուն յայտնել՝ ի միտ առնել ծանիցի, և անտի իսկ բացցէ զամենակեցոյց ճշմարտութեան վարդապետութիւնն իւր յայտնել աշխարհի։ Որպէս ասէ մարգարէն իբրև յերեսաց տեառն-որդւոյն, թէ «Մատերուք առ իս և լուարուք զայս. ոչ ի սկզբանէ ի ծածուկ ինչ խօսեցայ, և ոչ ի տեղւոջ խաւարին երկրի. զի յորժամ լինէին՝ ես անդ էի. և արդ՝ Տէր Տէր առաքեաց զիս և Հոգի նորա»։ Տեսանե՞ս զէական միաւորութիւնն. «յորժամ լինէին՝ ես անդ էի» ասէ. յայտ արարեալ զմիաւորն երրորդական զօրութիւնն, թէ և՛ ի հաստատելն համագործ, և ի նորոգելն միարան։

421 Արդ՝ բացեալ երկինք՝ և Հայր աղաղակէ, թէ «Դա է Որդի իմ սիրելի». և Հոգին իջեալ ի նմանութիւն աղաւնոյ. զի յայտ լիցի միարան խորհուրդ զօրութեան գալստեան Որդւոյն։

422 Եւ զի՞նչ իցէ զոր ասէն, թէ «ի սկզբանէ խօսեցայ»՝ եթէ ոչ

12 Ես. ԽԸ, 16. / 17 Մատթ. Գ· 17. Մարկ. Թ, 6.

1 bԱԲg այսորիկ
1 ԱԲ հոգին սուրբ
1 Ա աղօնակերպ
1 b իջանէր
2 a տեսողաց
2 aԱԲg սրբամտելով / t սրբամտելովն
2 a առ աստուած մերձենալ
3 t հօր / t այնորիկ
4 g եկն որդին աստուծոյ և կատարեաց / b չիք որդին աստուծոյ / t չիք և
4 abԱԲ և կատարեաց զուխտ / t զուխտն
5 ԱԲ նմին իրի, փխ. վասն այսորիկ
5 b մկրտի որդին աստուծոյ ի յովհաննէ հաստատել զմկրտութիւնն ամենայն որ
5 g մկրտի ի հաստատել / abԱԲt մկրտի հաստատել
6 a մկրտելոցն / bԱԲgt մկրտելոց
6 bԱԲ իցեն ի նա, զի
6 g չիք զի անդ իսկ—և ի նորոգելն միարան (s. 15)
7 ԱԲt և ի միտ
7 a ծնանիցի և անտի բացցէ / ԱԲ ծանիցի իսկ և բացցէ / b ծանիցի. անտի իսկ բացցէ
8 t չիք անտի իսկ
8 ab ճշմարտութեանն
8 abԱ վարդապետութիւն
9 abԱԲ յայտնեալ
9 ԱԲ որպէս և ասէր / b որպէս և
9 b չիք իբրև
9 a յերեսաց տեառն թե
9 ԱԲ տեառն որդւոյ
10 b եթէ / ԱԲ չիք եթէ
12 a լինէր
12 Ա անs (յաճ.)
12 ab չիք տէր / b ոգի
13 Ա միօրութիւն
13 b ասէ ես անդ էի, յայտ
14 Ա զօրութիւն / b եթէ և
14 a ի հաստատելն համագործ և ի նորոգելն միարան
15 abԱԲ համագործ / t միագործ, փխ. համագործ
16 b և, փխ. արդ
16 ԱԲ աղաղակէր
16 g չիք թէ
17 a և հոգւին սուրբ
18 b զաւրութեանն / a չիք զաւրութեան
18 Ա գալստեանն
18 ԱԲ որդւոյ
19 g չիք և զի՞նչ իցէ—խորհրդոց ծննդեան իւրոյ (kr. 219, s. 15)
19 b որ
19 abԱԲ եթէ ոչ / t թէ ոչ

զյառաջաձայնման սրբոց մարգարէիցն, որ ինքն իսկ ի նմանէ վասն իւր խօսեցաւ. և խորհրդով միաբանական Հօրն և Հոգւոյն՝ եկեալ երևի առ ի վախճան ժամանակացս: «Որ էրն ի սկզբանէ Բանն, և Բանն էր առ Աստուած, և Աստուած էր Բանն. նա էր ի սկզբանէ առ Աստուած: Ամենայն ինչ նովաւ եղև, և առանց նորա եղև և ոչ ինչ որ ինչ եղեւն: Նովաւ կեանք էր, և կեանքն էին լոյս մարդկան. և լոյսն ի խաւարի անդ լուսաւորէր. և խաւար նմա ոչ յաղթեաց: Եղև այր մի առաքեալ յԱստուծոյ, անուն նորա Յովհաննէս. սա եկն ի վկայութիւն, զի վկայեսցէ վասն լուսոյն, զի ամենեքեան հաւատասցեն նովաւ»:

423 Արդ՝ լցեալ և կատարեալ զամենայն, և լոյս Որդւոյն Աստուծոյ ի մէջ անցեալ լուսաւորել զամենայն մարդ՝ որ գալոց է յաշխարհ: որում խաւարն ոչ կարացեալ համեմատել յաղթել. այլ այսու լուսով եղև աշխարհ, և զնա ոչ ծանեաւ: Արդ՝ վասն այսորիկ եկեալ, զի ի մի[illegible]ացեն զլոյս նորա, և որդիք Աստուծոյ լիցին: Եկն հաստատել զօրէնս և զմարգարէս, և զօրինական անցուցեալ՝ և զճշմարտութիւնն հաստատել:

424 Եւ զի՞նչ իցէ որ ասէ՝ «Բանն». միթէ բարբառ լոկ իցէ բախման լեզուի ընդ օդս, որ յառաջ քան զասել ասողին չէ լեալ, և յետոյ անհետ՝ չէ ի միջի: Այլ վասն այսորիկ անուանեցաւ Բան, զի որպէս բան ի բերան ասողին՝ նոյնպէս և ամենայն հրամանք Հօր կամացն ելանեն ի բերանոյ Որդւոյ: Զի գիտակ է Հօր և կատարիչ կամաց նորա, որպէս և ինքն ասէ. «Ոչ ոք գիտէ զՀայր՝ եթէ ոչ Որդի. որպէս և զՈրդի ոչ ոք գիտէ՝ եթէ ոչ Հայր»: Եւ դարձեալ ասէ, եթէ «Եկի կատարել

9 Յովհ. Ա, 1—7. / 23 Ղուկ. Ժ, 22.

1 a զյառաջաձայնիսն / ԱԲ զառաջաձայնսն / bt զառաջաձայն
1 abԱԲ ինքն իսկ ի նոցանէ վասն իւր / t չիք իսկ
2 b չիք և (խորհրդով)
2 aԱԲ երևի. արդ ի վաղճան [ԱԲ ի վախճան] / b և ի վախճան / bt չիք արդ
3 ԱԲ ժամանակացս / abt ժամանակաց
3 b որ ի սկզբանէ էր
4 at սա, փխ. նա
5 b և ամենայն
5 aԱԲ չիք և (առանց)
5 ԱԲ ինչ եղև / a չիք ինչ (եղև)
6 a և կեանքն էր լոյս / b չիք և կեանքն էին
6 t և լոյս
6 Ա ի խաւարին անդ
7 a խաւարն
8 b անուն նմա / t չիք անուն նորա
10 abԱԲ զամենայն / t ամենայն
11 ab լուսաւորեալ
11 a մարդ զգալոց յաշխարհս / ԱԲ գալոց էր
12 b համեմատեալ / a յաղթեալ
12 b չիք այլ
13 b ծանեան. և վասն
13 ԱԲ այսորիկ իսկ
13 abԱԲ զի ի միա / t չիք զի
15 ԱԲ և զմարգարէս, զօրինականսն / ... և զօրինականսն / b զաւրէնսն
15 a ի մեզ անցուցեալ
15 Ա զճշմարտութիւն
17 aԱԲ զոր ասէ / b ասէն
18 bԱԲ չիցէ յայտ և կամ յետոյ անհետ չմիջի [b ոչ ի միջի] / a անհետ ոչինչ ի միջի
19 ԱԲ այնորիկ
19 bԱԲ բանն [b բան], զի որպէս բանն
20 a ասաւղին
20 b չիք և ամենայն / ԱԲ չիք և
20 t կամաց / abԱԲ կամացն
21 bԱԲ և զի / b չիք է
21 a և ինքն կատարիչ
22 ԱԲ ինքն իսկ ասէ
23 abԱԲ չիք ասէ
23 bԲ թէ



զկամս այնորիկ որ առաքեացն զիս»: Եւ դարձեալ Յովհաննէս ասէ. «զԱստուած ոք երբեք ոչ ետես, բայց միածին Որդին որ ի ծոց Հօր՝ նա պատմեաց»:

425 Եւ ինքն առ Հայր ասէ, թէ «Եհաս ժամ, Հայր. փառաւոր արա զՈրդի քո». և եկեալ բարբառ յերկնից ասէ. «Փառաւոր արարի, և այլ փառաւորեցից»: Իբրև զի ոչ թէ ի խնդրել ապաստան, և կամ կարօտ ինչ հայրաբուն փառացն, այլ զի լուիցեն արարածք և հաստատեսցին յՈրդին: Նոյն օրինակ և Որդին ի միջի կացեալ՝ զՀայրն ցուցանէ աշխարհի և զՀոգին սուրբ. նոյնպէս և Հայր աղաղակէ վասն Միածնին, թէ «Դա է Որդին իմ միածին, հաճեցուցիչ անձին իմոյ. եկից զոգի իմ ի վերայ դորա»: Որ և յայտ լեալ յիջանելն ի վերայ և հանգչել, որպէս և ինքն ասէր զՀոգւոյն սրբոյ, թէ «Նա զիս փառաւոր առնէ»:

426 Եւ եկեալ կատարէ զկամս առաքչին իւրոյ. որ և աղաղակ իսկ եղեալ ասէր, եթէ «Որ հաւատայ յիս՝ հաւատայ յայն որ առաքեացն զիս. և որ տեսանէ զիս՝ զայն տեսանէ որ առաքեացն զիս»: Եւ այսպէս զհայրական փառսն յինքեան ցուցանէ ամենեցուն յայտական վարդապետութեամբն:

427 Եւ զյառաջընթաց կարապետն հրեշտակ առաքեալ Հօր՝ գայ առաջի և աղաղակէ, թէ «Սա է Որդին Աստուծոյ, սա է գառն Աստուծոյ,

1 Յովհ. Դ, 34. / 3 Յովհ. Ա, 18. / 5 Յովհ. ԺԷ, 1. ԺԲ, 28. / 6 Յովհ. ԺԲ, 28. / 11 Մատթ. ԺԲ, 18. / 13 Յովհ. ԺԶ, 14. / 16 Յովհ. ԺԲ, 44.

1 b զկամս հաւր իմոյ այնորիկ
1 a և աւետարանագիրն ասէ, զԱստուած
2 b թէ զԱստուած երբէք ուրուք ոչ կարացեալ տեսանել, բայց միածինն որ էր ի ծոցոյ / aԱԲ ոչ կարաց տեսանել, բայց միածինն որ էր [a չիք էր] ի ծոց
4 bԱԲ և ինքն իսկ առ հայր ասէ թէ [ԱԲ չիք թէ] եհաս
4 a չիք թէ
4 aԱԲ ժամ, փառաւորեա զորդի քո. և [a չիք և] եկեալ
5 a չիք ասէ
6 a իբր ոչ խնդրեալ / ԱԲ իբրու զի
6 b ոչ եթէ
7 b ինչ է ի հաւրէն ի փառացն
7 b հաւատասցեն, փխ. հաստատեսցին
8 a սոյնպէս, փխ. նոյն օրինակ / bԱԲ սոյն օրինակ
8 a ի մէջ
8 abԱԲ զհայր
9 b սոյնպէս
10 a որդւի ի միածին
11 abԱԲ եկից / t եկի
11 ԱԲ ի վերայ նորա / b չիք դորա
11 b որ և յայտ եղեալ զիջանելն / ԱԲ որ և յայտ լեալ իջանել և հանգչել ի վերայ նորա, որպէս և որդին իսկ ասէ զհոգւոյն սրբոյ / a իջանել և հանգչի ի վերա նորա, որպէս ինքն ասե
11 at չիք և
12 b չիք և (ինքն)
12 b ասէ առ ի հոգւոյն
13 a փառաւոր է և եկեալ
14 a իմոյ, փխ. իւրոյ
14 aԱԲ որոյ և
15 a թե որ / b չիք եթէ
15 a յիս՝ յայն հաւատա
16 b չիք և որ տեսանէ—առաքեացն զիս
16 a որպէս զի, փխ. և այսպէս
17 ԱԲ զփառսն
17 b ի յինքեան
17 a չիք ամենեցուն / ԱԲ յայտնի
18 a վարդապետութեամբ
19 aԱԲt յառաջընթաց
19 aԱԲt հրեշտակն [a հրեշտակս] առաքեալ
20 b յառաջ
20 a չիք թէ
20 b որդի

սա է որ գայ բառնալ զմեղս աշխարհի»։ Եւ ելեալ ի վերայ լերինն բարձու, ի մեծութիւն զօրութեան Աստուածութեանն, որպէս յառաջատես տեսանող մարգարէն ասէ ի Տեառնէ. «Ի վերայ լերինն սրբոյ ի լերինն բարձու՝ անդ ծառայեսցեն ինձ ամենայն ազգք երկրի»։ Եւ դարձեալ միւս տեսանողն գոչէ, թէ «Ե՛լ ի վերայ լերինդ բարձու, աւետարանիչդ Սիոնի. բարձրացո՛ զբարբառ քո, աւետարանիչդ Երուսաղեմի։ Բարձրացո՛յք, բարձրացուցէք զբարբառ ձեր, և մի՛ զանգիտէք. ասա՛ դու ցքաղաքդ Յուդայ. Ահաւասիկ Աստուած մեր, ահաւասիկ Տէր Տէր գայ զօրութեամբ իւրով, և բազուկն հզօր տէրութեամբ իւրով. ահաւասիկ վարձք հատուցման իւրոյ ընդ իւր, և գործք իւրաքանչիւր առաջի նորա։ Իբրև հովիւ հովուեսցէ զխաշինս իւր, և ի բազուկս իւր ժողովեսցէ զգառինս իւր, և ի գիրկս իւր ընկալցի զնոսա, և մխիթար լիցի յղեաց ծանրացելոց։ Ո՞ չափեաց ափով իւրով զջուրս ամենայն, կամ ո՞վ չափեաց զերկինս թզաւ իւրով, և զերկիրս ամենայն քլաւ իւրով։ Ո՞վ եդ զլերինս ի կշիռս, և բարձ զդաշտս կշռորդօք։ Ո՞վ գիտաց զմիտս Տեառն, կամ ո՞վ եղև նմա խորհրդակից»։

428 Եւ զի՞նչ իցէ զոր ասէն, թէ «Ե՛լ ի վերայ լերինդ բարձու, աւետարանիչդ Սիոնի». այլ իբրև զայն որ ասէն, թէ «Տէր ետ հրաման», զի տէրունի հրամանքն՝ ամենեցուն գեր ի վերոյ են, և ի բարձանց են հրամանք Բարձրելոյն։ Եւ զի՞նչ բարձր և ստուար քան զհրաման

1 Յովհ. Ա, 30. / 4 Եզեկ. Ի, 40. / 5—16 Ես. Խ, 9—14. / 18 Յովնան Բ, 1.

1 a որ գա և բառնա / b որ բառնայ
1 aԱ և ելեալ / bԲt չիք և
1 ԱԲ ի լերինն. չիք վերայ
2 Աt աստուածութեան
2 b որպէս և
3 a տեսանող / bԱԲt տեսող
3 a լերինն բարձու լերինն սրբոյ անդ / ԱԲ սրբոյ, լերինն բարձու / b չիք ի լերինն
5 aԱԲ տեսանողն / bt տեսողն
5 a չիք թէ
5 abԱԲ ել ի վերայ լերինդ [b լերինն] բարձու / t ի լերինդ. չիք վերայ
6 Բ աւետարանիչք
6 aԱԲ սիոնի / bt սիովնի
7 b չիք և
8 abԱԲ ասա [b ասայ] դու / t չիք դու
8 b ցքաղաքդ
8 a աւվասիկ աստուած մեր ահավասիկ
9 aԱԲ չիք իւրով (և)
9 b բազուկ
9 t չիք հզօր
9 ԱԲ զօրութեամբ, փխ. տէրութեամբ
10 a ահավազիկ
10 b հատուցման բառից յետոյ մի թերթ դատարկ (թղ. 150), որով b-ում պակասում է «իւրոյ ընդ իւր—ձայն բարբառոյ էր նա» (էջ 213, տ. 14)
11 aԱԲ հովիւ մի հովուեսցէ [a հովվեսցէ]
11 a և բազկաւ իւրով / t ի բազուկ
12 a չիք և ի գիրկս իւր ընկալցի զնոսա
13 aԱԲ յղեացն
13 a և ծանրացելոցն
13 a ափով *իւրով իւրով
14 a կամ ոյ (a ունի միշտ ոյ) կշռեաց զլերինս կշռորդով, փխ. կամ ով չափեաց—կշռորդօք (տ. 15)
14 ԱԲ ո, փխ. ով
14 ԱԲ և զերկիրս ամենայն քլաւ / bt զերկինս, փխ. զերկիրս
15 Ա ո գիտաց / a ոյ *գիաց զմիտս տեառն կամ ոյ / ԱԲ կամ ո
16 ԱԲ զիմաստութիւն, փխ. զմիտս
17 ԱԲ իցէ որ ասէն
17 a լերին
18 t սիովնի (միշտ)
18 ԱԲ ասէ թէ
19 a տրունի (պաs.) հրամք
19 aԱԲ և ի բարձանց իսկ են
20 a բարձր կամ ստուար



Աստուածութեանն կայցէ. ի նոյն ինքն ելեալ Աստուածութեանն քարոզք, ի նոյն հրամանաց լեառն բարձրութեան, առանց զանգիտելոյ և երկիւղի ամենեցուն առաջի անվեհեր քարոզել։

429 ԽԸ. Արդ՝ եկն և մեծն Յովհաննէս, որդի քահանայապետին Զաքարիայ. անդէն ել տաճարակիցն, և ոչ օտար ոք. անդէն ժառանգն և բնակիչն Սիոնի, նորուն վակասակիր քահանայութեանն, խոյրագիր պատուին պատմուճանացն սրբութեան, աւանդակիր պատուիրանացն. և ոչ եկամուտ ոք, այլ կամարածուն վայելչութեան, շառաւեղն Մովսիսի և զաւակն Ահարոնի և աւետարանիչն Սիոնի, օծութեանն անկու, առեալ զպատիւ նախնեացն քահանայութեան։ Եւ բովանդակեալ զմարգարէութիւն մարգարէիցն՝ ելեալ յանապատ ի վերայ աստուածական հրամանացն լեռնացելոց, բարձրացուցեալ զբարբառ իւր աւետարանիչն Երուսաղեմի, բարձրացեալ բարձրացուցանէր զբարբառ իւր, զի ձայն բարբառոյ էր նա յանապատի, և ասէ. «Ահա Աստուած մեր, ահա Տէր», և նա նոյն թագաւոր Իսրայելի։

430 Արդ՝ ամենայն շնորհք աւանդութեան մարգարէութեանն Իսրայելական ազգին, որ կրէր աւանդապահ օրէնութեանն աւետեացն և օծութեանն, ի ձեռն Ղևեայ տոհմին էր յանձնեալ, քահանայութիւնն՝ թագաւորութեամբն հանդերձ։

431 Քանզի ի ժամանակին, իբրև կոչեաց Տէր զՄովսէս ի մէջ հրոյն և ամպոյն ի գլուխ Սինէական լերինն՝ և տեսիլ փառաց

14 Ես. Խ, 10.

1 bԱt աստուածութեան (կայցէ)
1 Ա կացցէ
1 aԱԲ ի նոյն իսկ ինքն
1 ԱԲ ինքն է լեալ
1 aԱ աստուածութեան (քարոզք)
1 a քարոզ
2 a լեառնն
3 a չիք առաջի
4 ԱԲ արդ եկեալ մեծն / a եկն ել մեծն
5 aԱԲ անդէն իսկ տաճարակիցն [ԱԲ աթոռակից, փխ. տաճարակիցն]
5 aԱԲ այլ անդէն [a անդեն] ժառանգն
6 a նորին վակակիր
6 Ա քահանայութեան
7 a և աւանդակիր
8 a *եկամուտ, այլ
8 aԱԲ կամարածուն / bt կամարածու
8 a վաելչութեան (յաճ.) / ԱԲ *վայելչութեան / bt վայելչութեանն
8 Բ շառաւիղն
9 a ահարովնի, աւետարանիչն սիոնի
9 Ա օծութեան / ԱԲc անկու։ Նոր. Բիւզ. (Գոր. վարդ. էջ 118) առաջարկում է ուղղել օծութիւն ընկալեալ
10 a չիք առեալ զպատիւ
10 Ա չիք նախնեացն
10 a քահանաութեան / bt քահանայութեանն
11 ԱԲ աստուածական
13 ԱԲ եմի (պաs.). բարձրացուցեալ բարձրացուցանէր
13 a բարձրացոյց զբարբառ
14 a անապատի / ԱԲ չիք և
14 abԱԲ և [b չիք և] ահա տէր և սա նոյն տէր [ab չիք տէր] իղի (պաs.)
16 bԲt աւանդութեանն / aԱ աւանդութեան
16 ԱԲt մարգարէութիւն / b մարգարէութեան / a մարգարեութեանն
17 b չիք որ
17 aԱԲ աւանդապահք
17 ԱԲ օրհնութեանցն / b քաւութեան, փխ. օրէնութեանն
17 aԱԲ և աւետեացն
18 Ա օծութեան / a չիք էր
18 a քահանաութիւն / bԱԲ քահանայութիւնն [b քահնայութիւնն, Ա քահանայութիւն] իսկ / t քահանայութեանն՝
19 Ա թագաւորութեամբ
20 t զի, փխ. քանզի
20 t ի ժամանակի
21 Ա ամպոյն / ԱԲ փառացն

Տեառն իբրև գնուր վառեալ էր. իբրև առնոյր զպատուիրանս օրինացն Մովսէս ի ձեռացն Աստուծոյ, պարգևախնդիր տեսանելով զԱստուած ի պատասխանւոյն նմա, զի ասէ «Գթած եմ և ողորմած»՝ անդ առնոյր զաւանդութիւն իշխանութեան՝ քահանայութեան, թագաւորութեան և մարգարէութեան՝ ի ձեռաց Աստուծոյ։ Անդ ետ նմա զօրինակ օծութեանն Քրիստոսի, զի նախ առակքն լինիցին, և ապա եկեսցէ ճշմարտութիւնն, որ էն իսկ. անդ տայր նմա առնել զեղջիւրն օծութեան և զխնկանոց խնկոյն։

432 Որ եղջիւրն զօրինակ օծութեանն Քրիստոսի, և խնկանոցն զօրինակ սուրբ կուսին Մարիամու ունէր։ Զի որպէս նայն լին էր հոտով սրբութեամբ՝ նոյնպէս և կոյսն Հոգւով սրբով և զօրութեամբ Բարձրելոյն։ Իսկ եղջիւր ձիթոյն ունէր զօրինակ օծութեանն Քրիստոսի, զի որ միանգամ յօրինակ նորա օծանէին՝ անուն օծան։ Ուստի և օծանէրն իսկ Ահարոնի ի քահանայութիւն Տեառն, և առնոյր զքահանայութեան թագն՝ օծանել ըստ նմին օրինակի, զնել նոցա արտախուրակս,

1 ԱԲ յորժամ, փխ. իբրև (առնոյր)
1 b առնոյր մովսէս զպատուիրանս օրինացն ի ձեռացն
1 ԱԲ օրինացն ի ձեռացն աստուծոյ մովսէս [Բ մօսէս (յաճ.)]
2 a մովսեսի
2 Ա զպարգևախնդիր / a պարգևախնդիրն / b պարտ էր և քննախնդիր, փխ. պարգևախնդիր
2 a տեսանեք / ԱԲ տեսանելովն
3 a ասեր
4 b զիշխանութիւն աւանդութեան քահանայութեանն և մարգարէութեանն և թագաւորութեանն ի ձեռացն աստուծոյ. արդ ետ / aԱԲ և [ԱԲ չիք և] մարգարէութեան և թագաւորութեան ի ձեռացն [ԱԲ ի ձեռաց]
5 b զաւրինակն ածութեանն (սղաs.) / Ա օծութեան
6 a քրիստոս / ab առակ / abt լիցին
6 a և ապա եկեսցեն / bԱԲt և ապա իբրև եկեսցէ
7 Ա ճշմարտութիւն / a ի ճշմարտութիւնն
7 bԲ որ էն իսկ / a որ են իսկ / Աt որոյ են իսկ
7 ԱԲ իսկ և վասն որոց էն [Ա են] անդ / at իսկ և վասն որոյ են անդ
7 b արդ, փխ. անդ
7 b առնել նմա զեղջեւրն / Ա զեղջեւրն
8 Ա զխնգանոց / b զխնկանոցս
8 Ա խնգոյն / bt խնկոցն / a և զխնոց խնկոյն / t չիք և
9 b զեղջեւրն (յաճ.)
9 a ուներ զաւրինակ
9 Ա օծութեան
9 a խնկոցն / Ա խնգանոցն
10 b սրբոյ / a չիք սուրբ
10 b մարիամայ / ab չիք ունէր
10 a զի որպէս նայն լին եր հոտով սրբութեան, սոյնպէս և սա հոգւով
10 bԱԲt չիք զի / bԱԲ որպէս և
10 Ա նայ / bԱԲt լի էր
11 t խոստովանութեամբ, փխ. հոտով սրբութեան / bԱԲ չիք հոտով սրբութեան նոյնպէս և կոյսն
11 ԱԲ սրբով և հաւատով և զօրութեամբ [Ա զօրութեամբն] / b հոգւով սրբութեանն հոգւով սրբով զօրութեամբ
12 a եղջերն / b եղջեւրն
12 ԱԲ ձիթոյն զօրինակ օծմանն քրիստոսի ունէր, զի որ միանգամ / a ունէր զաւրինակն աւծութեանն քրիստոսի, զի որ / bt ունէր զաւծութիւնն [t զօծութիւն] քրիստոսի օրինացն [b աւրինակացն]
13 b զոր, փխ. զի որ
13 ԱԲ յօրինակին օծանէին անուն իսկ օծէին [Բ օծանէին]. ուստի ահարոն իսկ օծանէր ի քահանայութիւն տեառն / ab անուն աւծանէին. ուստի և [a չիք և] աւծանէրն իսկ [a չիք իսկ] ահարոն [b ահարոնի] / t օծէր ահարոնի
14 ab և առնուլ զքահանանութեանն [b զքահանայութեան]
15 ԱԲ թագն ըստ նմին օրինակի օծանել և զնել / b զթագն
15 a չիք օծանել
15 a զնել / b զընել / t զնել



և պաշտել ի սրբութիւն Տեառն, և կարգել զհանապազորդ հացն ի սեղանն, որ բերէր զօրինակ մարմնոյ Աստուածորդւոյն։

433 Անդ արար Մովսէս զարծաթի եղջիւրն օծութեան իւրոյ, ուստի քահանայքն և մարգարէքն և թագաւորքն օծանէին։ Անդուստ գայր կարգեալ օծութիւնն մի ըստ միոջէ ըստ հրամանի իշխանութեան պատուիրանին, որ կարգեալ գայր առաջնորդութեամբ։ Յաբրահամեան զաւակին պաշտէր խորհուրդն, զի աւանդապահքն տային զմիմեանս մինչև ցՅովհաննէս՝ քահանայ, մարգարէ և մկրտիչ. և ի նա հասեալ՝ իբրև ի ժառանգ մնացեալ։ Զի ի նա հասեալ էր յառաջին նախնեացն՝ թագաւորացն, մարգարէիցն և յօծելոց քահանայիցն՝ իբրև յաւանդապահ. և նա ետ զքահանայութիւնն, զօծութիւնն, զմարգարէութիւնն և զթագաւորութիւնն ցՏէր մեր Յիսուս Քրիստոս։

434 Եւ կատարեցաւ մարգարէութիւնն Յակովբայ՝ յասել առ որդիս ազգի իւրոյ, թէ «Մի պակասեսցէ պետութիւն իշխանութեանն, մինչև եկեսցէ այն՝ որոյ իւր է թագաւորութիւնն. քանզի նա է յոյս հեթանոսաց»։

435 Արդ՝ առաջին հարքն որ եղեն օրինակ նորա, յորս Աստուծոյ կերպարանքն նկարեալ կային. զի նոցա ամենայն արարածք հնազանդէին, քանզի զկերպարանս Արարչին ի նոսա տեսանէին։ Իսկ զիա՛րդ հնազանդէին անխօս անմռունչ և անշշունչ արարածքն՝ մահկանացու մարդկան, եթէ ոչ զնշանս Աստուծոյ ի նոսա տեսանէին և զկերպարանս Արարչին։ Եւ այսպէս մի ըստ միոջէ վարեալ եկեալ աւանդութիւնքն մինչև ցՅովհաննէս, և Յովհաննէս ետ զաւանդ պահեստին Տեառն իւրում։

16 Ծննդ. ԽԹ, 10.

1 a զհանապազորդն / b զհացն
2 t ի սեղան
2 a ի սեղանն տեառն որ
3 abԱԲt աւծութեան / t օծանութեան
4 ԱԲ յորմէ, փխ. ուստի
4 b քահանայք և մարգարէք
4 Ա անտուստ
5 b աւծութիւնն կարգեալ
6 a կարգ գայր / bԱԲ կարգեալ գայր / t կարգէր գայր առաջնորդութեամբ՝ յաբրահամեան զաւակին պաշտէր խորհուրդն։ Զի
7 b ի զաւակին / a խորհուրդ
7 t աւանդապահք
8 aԱԲ մինչ ի յովհաննէս [a ի յոհան]
8 ԱԲ և մարգարէ
8 b մարգարէ և քահանայ և մկրտիչ
9 aԱԲ իբրև ժառանգ
9 a ի նա եհաս առաջին թագաւորաց, զի ի նա հասեալ եր յառաջին նախնեացն թագաւորաց և մարգարեից և յաւծելոյ քահանաից իբրև / b ի նա էհաս յառաջին ի թագաւորացն, ի մարգարէիցն և յաւծելոց
10 b աւանդապահ
11 Ա զքահանայութիւն, զօծութիւն, զմարգարէութիւն և զթագաւորութիւն / b զքահանայութիւն և զօծութիւն / bt և զմարգարէութիւնն
12 ԱԲ ի տէր մեր
13 Աt մարգարէութիւն / aԲ յակոբայ
14 ab ազգին / b եթէ մի պակասե
14 ԱԲ իշխանութեան ի քէն մինչև / b իշխանութիւն ի յուդայէ մինչև
15 ԱԲ իւրն է
15 Ա թագաւորութիւն / b իշխանութիւն, փխ. թագաւորութիւնն
18 b պատուիրանքն, փխ. կերպարանքն
18 b նկատեալ / a հնազանդէին
20 abԱԲ և անմռունչ և անշունչ արարածք [ԱԲ արարածքն] / t չիք անշշունչ։ Ուղղում եմ՝ անշշունչ
21 b մարդկանն և թէ / at թէ
21 Ա նշանս / a զկերպարան
22 Ա աւանդութիւնք / b աւանդութիւն
23 abԱԲ զաւանդ պահեստին [a պահեստի] տեառն իւրում / t զաւանդն
23 t իւրոյ

436 ԼԹ. Եւ այնուհետև Տէր ինքնին ի միջի կայ, և Յովհաննէս վկայէ, թէ «Չեմ ես Քրիստոսն, այլ առաքեալ եմ առաջի նորա։ Այլ որ հարսնն է՝ նա է փեսայ, և որ բարեկամն է փեսային՝ կայ առ նմա և հնազանդի նմա. նա և ուրախ անէ յուրախութեան նորա, զի զձայն լսէ զփեսային։ Իմ ուրախութիւնս այս լցեալ և կատարեալ է, և արդ՝ նմա պարտ է աճել, և ինձ մեղմանալ։ Որ ի վերուստն գայ՝ ի վեր է քան զամենայն. որ յերկրէ է՝ յերկրէ աստի խօսի. որ յերկնիցն գայ՝ զոր ինչ լուաւն և ետես՝ վկայէ, և զվկայութիւն նորա ոք ոչ ընդունի. իսկ որ ընդունի զվկայութիւն նորա՝ ծրարեաց և կնքեաց, զի արդարև ճշմարիտ Աստուած է։ Զի որ յԱստուծոյ առաքեցաւ՝ նա զպատգամս Աստուծոյ խօսի. զի ոչ եթէ չափով տուաւ նմա հոգին. Հայր սիրէ զՈրդի, և զամենայն ինչ ետ ի ձեռս նորա. որ հաւատայ յՈրդի՝ ընդունի զկեանս յաւիտենից, և որ թերահաւատէ յՈրդւոյ՝ ոչ տեսանէ զկեանս յաւիտենից. այլ բարկութիւն Աստուծոյ ի վերայ նորա բնակեալ է»։

437 Ահա եկեալ հրեշտակն Յովհաննէս՝ պատրաստել ճանապարհ տեառն իւրում։ Զի որպէս ծննդեանն Գաբրիէլ եղև կարապետ՝ նոյնպէս յայտնութեանն սա եղև, և առաջի եկեալ ասէ. «Առաքեալ եմ առաջի նորա. այլ որ հարսնն է՝ նա է փեսայ»։

15 Յովհ. Գ, 28—36. / 19 Յովհ. Գ, 28—29.

1 b և այնուհետև/միւսն. արդ այսուհետև
1 bԱԲt աէրն / b չիք ինքնին
2 b վկայէր / t եթէ
3 abԱԲ հարսն / b փեսայն
3 abԱԲ բարեկամն / t բարեկամ
4 b հնազանդ է նմա. նաև ուրախ լինի յուրախութեան
4 t և նա, aԱԲ նա, փխ. նաև
4 t առնի, / միւսն. լինի։ Հմմտ. եր. 218, տ. 3
4 ԱԲ յուրախութիւն
4 ԱԲ և, փխ. զի
4 bԱԲ զձայնն լսէ զփեսային / a զձայն փեսային լսե / t փեսային
5 abԱԲ ուրախութիւն [Բ ուրախութիւնն] այս լցեալ [bԱԲ է լցեալ] և կատարեալ է [bԱԲ չիք է], և արդ
5 t չիք այս / t չիք է, և
6 ab չիք պարտ է
6 a ի վերուստ գա ի վերոյ և / b գայ, նա ի վերոյ է
7 a որ յերկրէս է / ԱԲt որ ի յերկրէ է / b չիք յերկրէ է
8 ԱԲ զոր ինչ լուաւն
8 ab զինչ (փխ. զոր ինչ) լուաւ [b լուաւն]
8 t չիք ինչ / b չիք և (ետես)
8 b և վկայէ
8 b ոչ ոք ընդունի, իսկ որ / aԱԲ չիք իսկ
8 t զվկայութիւնն. չիք նորա
9 b կնքեաց և ասէ զի
9 ԱԲ թէ, փխ. զի / a արդար
11 b չիք նմա / a հոգւի
12 b չիք ինչ
12 b և որ հաւատայ
12 a յորդի ունի կեանս / ԱԲ զկեանսն
12 b զկեանսն յաւիտենականս. և որ թերահաւատէ / t թերահաւատ է
13 a և որ ոչ հնազանդի որդւոյ ոչ տեսցե զկեանսն, այլ բարկութիւնն
13 b ընդունի, փխ. տեսանէ
14 ԱԲ զկեանսն
14 b զի, փխ. այլ / a բնակե
16 b պատրաստեաց
16 a զճանապարհս / ԱԲ ճանապարհ
17 a որպես ծննդեանն գաբրիել եղե կարապետ, նոյնպես յայտնութեանն սայ եղե և առաջի եկեալ / bԱԲt առաջին զալստեանն, փխ. ծննդեանն
18 bԱԲt իսկ, փխ. նոյնպէս
18 bԱԲt յայտնութեանս
18 b չիք սա
18 bԱԲt չիք եղև և
18 bԱԲ եմ ես առաջի
19 ab հարսն / ԱԲ փեսայն



438 Իսկ ո՞ իցէ հարսն, կամ ո՞ փեսայն, եթէ ոչ այն՝ զոր մարգարէն ասէ, թէ «Այսպէս ասէ Տէր. խօսեցայց զքեզ ինձ յաւիտեան, և խօսեցայց զքեզ ինձ արդարութեամբ և իրաւամբք և ողորմութեամբ և գթութեամբ. և ծանիցես, զի ես եմ Տէր Աստուած քո. և լցցես դու զհամանիսն քո, զփայտեղէնս և զքարեղէնս, և ասասցես, եթէ երթայց դարձայց առ այրն իմ առաջին»։

439 Քանզի թողին մարդիկ զպաշտօն Արարչին իւրեանց, և ամենայն փայտի և քարի հնազանդեցան. և թողին զայրն առաջին որ յոչնչէն արար զնոսա, և չնացան յամենայն ինչ տարրեղէն որ առ ական գիպեցան, և պոռնկեցան զհետ մնոտի պաշտամանցն արարածոց։ Վասն այսորիկ էջ Աստուածորդին քակել յերկրէ զընդունայնութիւն պոռնկութեան չնութեան քարեղէն հոմանեացն, դարձուցանել յերկրպագութիւն Հօր, և տալ անուանել զայրն իւր՝ այր առաջին։ Եւ առաջին՝ վասն նախնական ինքնութեանն ասէ, որպէս մեկնէ Պաւղոս առաքեալ առ հեթանոսս և ասէ. «Հաստատեցի խօսեցայ զքեզ հարսնութեան իբրև զկոյս մի սուրբ՝ յանդիման կացուցանել Քրիստոսի». և մարգարէն ասէ. «Կացցէ դշխոյ ընդ աջմէ քումմէ», զամենայն տիեզերս իբրև զմի հարսն դարձուցեալ առ մի փեսայ. այսպէս նշանակէ այրն՝ որ յերկնից

6 Ովս. Բ, 19. 7. / 16 Բ. Կորն. ԺԱ, 2. / 17 Սաղմ. ԽԴ, 10.

1 ab ոյ [b ով] իցե / ԱԲt ո [ԱԲ ով] է
1 bԱԲ կամ ով
1 ԱԲ թէ
2 b եթէ / ԱԲ չիք թէ
2 b խաւսեցայ / a չիք ինձ
2 b և խաւսեցայ
3 abԱԲ արդարութեամբ և իրաւամբք և ողորմութեամբ և գթութեամբ, և ծանիցես դու, թէ [b զի, փխ. թէ] ես եմ տէր / t չիք և իրաւամբք և ողորմութեամբ
4 aԱԲ զհոմանիսն / bt զհոմանիս
5 ԱԲ զփայտեղէնսն և զքարեղէնսն / b զքարեղէնս և զփայտեղէնս
5 aԱԲ ասասցես դու երթայց և [ԱԲ չիք և] / b դու եթէ
6 a ի յայրն / t յայրն
7 abԱԲ վասն զի
8 b քարի և փայտի
9 ԱԲ յոչընչէ
9 a չնացան որ ինչ տարրեղէն առ ական գիպեցան / b չնացան ընդ ամենայնի որ ինչ առ ական գիպեցան / ԱԲ չնացան յամենայն ինչ տարրեղէն, որ առ ական գիպեցան / t չնացան յինչ ինչ տարրեղէն, ամենայն որ ական գիպեցան
10 Ա պոռընգեցան
10 abԱԲ պաշտամանց [b պաշտաման] արարածոց / t արարածոցն
11 a էջ որդւին աստուծոյ
11 b չիք յերկրէ
11 b զընդունայնութեան պոռնկութեանն հեթանոսութիւնն քարեղէն
12 a հոմանեաց
12 bԱԲ և դարձուցանել
12 b ի յերկրպագութիւն
13 abԱԲ չիք տալ
13 ab այր առաջին. և առաջին [b չիք և առաջին] վասն նախնական ինքնութեանն [b ինքնութեան] / ԱԲt չիք առաջին (և) / Ա չիք և / t նախնականին
14 bԱt ինքնութեան / v քննութեան, փխ. ինքնութեանն
14 ԱԲ որպէս և / ab մեկնէն
14 a պաւղոս առաքեալ առ / bԱԲt չիք առաքեալ
15 b առ նոսա, փխ. առ հեթանոսս
15 b և ասէ / aԱԲt չիք և
15 ab չիք հաստատեցի
15 a խաւսեցայց
15 t ինձ հարսնութեան
16 a որպէս, փխ. իբրև
16 b զկոյս / aԱԲt կոյս
17 a կայցէ
17 a քումե
18 b դարձեալ / a չիք դարձուցեալ
18 a այսպես / bԱԲt այնպէս
18 t ի յերկնից

եկն Որդին Աստուծոյ. որպէս Յովհաննէս ասէ. «Այր հարսնն է՝ նա է փեսայ. և մեք, բարեկամք և ծառայք՝ ըստ հրամանացն ընթանամք, կամք առ նմա և հնազանդիմք նմա, և ուրախ առնիմք յուրախութեան նորա, և զձայնն լսեմք զփեսայինն»։

440 Այս այն է զոր մարգարէն ասէ. «Լո՛ւր, դուստր, և տե՛ս, խոնարհեցո՛ զունկն քո, մոռա՛ զժողովուրդ քո և զտուն հօր քոյ. զի ցանկացաւ թագաւոր գեղոյ քում. զի սա ինքն է Տէր քո. երկիր պագցես սմա»։ Այս այն է որ ասէն. «Եղբօրորդեա՛կ իմ, յարիցես զարթիցես, մերձաւո՛ր իմ, սիրելի՛ իմ. բացցես ինձ զդուրս տանն, և համբուրեսցես զիս ի համբուրից բերանոյ քոյ. զի առատ են ստինք քո քան զգինի, և հոտ իւղոց քոց քան զամենայն խունկս անուշութեան. Իւղ արկեալ է անուն քո, վասն այսորիկ օրիորդք սիրեցին զքեզ, զհետ անուշութեան իւղոց քոց ընթասցուք մեք. տարաւ զիս արքայ ի սենեակ իւր»։

441 Եւ ո՞վ իցէ հարսն՝ եթէ ոչ եկեղեցի հեթանոսաց, կամ ո՞վ իցէ փեսայն՝ եթէ ոչ Յիսուս Քրիստոս Որդին Աստուծոյ, որ էջ յերկնից և նուաճեաց զամենայն յերկրպագութիւն Հօր։ Եւ զի՞նչ իցեն երկու առատ ստինքն՝ եթէ ոչ կտակարանքն Աստուծոյ, որ արբուցանեն զամենայն ագէտս հոգևոր կաթամբն գիտութեան։ Եւ զի՞նչ իցէ զոր ասէն. «Հոտ իւղոց քոց քան զամենայն խունկս անուշութեան». և թէ՝ «Իւղ արկեալ է անուն քո».—զօծութիւնն Քրիստոսի և զանունն յայտ առնէ. և համբուրելն՝ սիրոյ նշանակ է, զի եկեղեցի՝ Քրիստոսի, և Քրիստոս՝ Որդի Աստուծոյ։

4 Յովհ. Գ, 29. / 8 Սաղմ. ԽԴ, 11—12. / 14 Երգ Երգ. Ե, 5. Ա, 1—3.

1 a որպես ասեն յովհաննէս, որ հարսն է նա փեսայ / bԱԲ որպէս և [Ա չիք և] ասէ [Բ ասէն] յովաննէս
2 b ծանուցք (փխ. ծառայք) և ըստ
2 ԱԲ ընթանամք. կալ առ նմա և հնազանդել և ուրախ լինիմք յուրախութեան [Ա յուրախութիւն] / b ընթանամք կալ առաջի նորա և հնազանդիմք նմա / t հնազանդ եմք
3 b լինիմք, փխ. առնիմք
3 a յուրախութիւն
4 a և ձայն փեսային լսեմք / bԱԲ զփեսային / t փեսային
6 a մոռեա / b մոռայ / b զտուն
7 a ցանկացի / b գեղոյ քո
8 b այս է որ ասէն. իմ ասէ յարիցես / aԱԲ ասէն [a ասեն]. եղբաւրորդեակ [ԱԲ եղբօրորդեակն] իմ, յարիցես / t չիք եղբօրորդեակ իմ
9 abԱԲ և բացցես / a զդրունս
10 ԱԲ համբուրեսցէ
10 b ի համբոյրս / a զիս համբոյր
10 aԱԲ բերանոյ իւրոյ
11 b իւղոյ քոյ
13 abԱԲ զհետ [b և զհետ] անուշութեան իւղոց քոց [a չիք քոց] ընթասցուք մեք [b և մեք] / t չիք անուշութեան
14 b չիք իւր
15 abԱԲ ով իցէ (հարսն) / t չիք իցէ
15 t թէ
15 abԱԲ ով իցէ փեսայն, եթէ [a թէ] ոչ / t չիք իցէ
16 t որդի
17 b աստուծոյ, փխ. հօր
17 abԱԲ զինչ իցեն առատ / t չիք իցեն
18 b ստինք
18 abt կտակարանք
19 ab կաթամբ
19 at գիտութեանն / b գիտութեամբն
19 t զինչ է / bt որ
20 b թէ հոտ / bt և եթէ իւղ
21 aԱ զաւծութիւն
21 ԱԲ յայտ արասցէ
22 aԱԲ զի եկեղեցի / bt զեկեղեցի, փխ. զի եկեղեցի։ Կամ թերեւս պիտի կարդալ համբուրելն սիրոյ՝ նշանակ[է] զեկեղեցի քրիստոսի։ Հմմտ. եր. 217, տ. 17



442 Արդ՝ «Նմա աճել և ինձ մեղմանալ», այսինքն զժամանակն ասէ մեղմանալոյ. զի մկրտութիւնն զոր տայր նա ժողովրդեանն՝ ապաշխարութեան մկրտութիւն էր։ «Որ, ասէ, ի վերուստն եկն՝ ի վերոյ է քան զամենայն», յայտ արարեալ զգալն ի ծոցոյ Հօր առ մեզ։ Իսկ ես, ասէ, յերկրէ խօսեցայ, յերկնից առեալ զգիտութիւն. իսկ որ յերկնիցն եկն՝ նա զՀօրն խօսի և զՀօրն գործ գործէ։ Որպէս և Տէր ինքն ասէր առ Հրեայսն, թէ «Ես ի Հայր, և Հայր յիս. զինչ տեսանեմ թէ Հայր գործէ՝ զնոյն և ես գործեմ. զի վասն այսորիկ իսկ եկի, զի արարից զկամս Հօր իմոյ, և կատարեցից զգործս նորա»։

443 Ասաց և վասն Հրէիցն, թէ զվկայութիւն նորա դուք ոչ ընդունիք։ Իսկ որ ընդունի զվկայութիւն նորա՝ ծրարեաց և կնքեաց, զի անկորուստ լիցի արդարութիւնն. և երդմամբ՝ զի արդարև ճշմարիտ Աստուած է. զի անշուշտ և անշարժ և անկորուստ լիցի արդարութիւն հաւատոցն. և երդումն՝ կնիք, որպէս առ Աբրահամն։ Զի որ ի ծոցոյ Հօր եկն՝ նա է տեղեակ խորհրդոց ծնողին իւրոյ։ Զի ոչ եթէ իբրև

1 Յովհ. Գ, 30. / 4 Յովհ. Գ, 31. / 9 Յովհ. Ե, 19. Ժ, 38. ԺԴ, 10.

1 ԱԲ չիք արդ / b զժամանակս
2 a մեղմանալով / b մեղանալով
2 Ա զի զմկրտութիւնն / b զի մկրտութիւն
2 aԱ տայր նա / bԲ զոր նա տայր / t չիք նա
3 abԱԲ ապաշխարութեան մկրտութիւն էր / t ապաշխարութիւն մկրտութեան էր
3 a ի վերուստ
3 ԱԲ որ ի վերուստ եկն ասէ ի վերոյ / b որ ասէրն թէ որ ի վերուստն
4 b արարեալ զի (=զ'ի) ծոցոյ հաւրն զգալն առ մեզ. և ասէ յերկրէս
4 aԱԲ առ մեզ. իսկ ես [a չիք ես] ասէ յերկրէս [ԱԲ յերկրէ] / t առ մեզ ասէ. ես յերկրէ
5 b առաքեալ, փխ. առեալ
5 Բ զգիտութիւնն
5 ԱԲ չիք իսկ (որ)
5 b և ասէ, փխ. իսկ (որ)
5 a իսկ ասէ որ յերկնից
6 ԱԲ յերկնից եկն ասէ՝ նա զհօրն խօսի, և / b նա զհաւրէ խաւսի / a նայ զհաւրն խաւսի և զհաւրն / t եկն զհօր խօսի
6 bԱԲt զհօր գործ [b գործն]
6 t չիք և (տէրն)
6 a որպէս և ինքն ասաց ցհրեայսն / ԱԲ որպէս և տէրն իսկ ասէր առ հրէայսն, ես / b որպէս և տէր ինքնին ասէր ցհրեայսն եթէ / t տէրն
7 abԱԲ և հայր յիս / t և հայր առ իս
8 t եթէ (հայր)
8 a գործէ և ես գործեմ զնոյն, զի
8 aԱԲ իսկ եկի / b չիք իսկ / t այսորիկ ես եկի
9 ԱԲ և, b և ասէ, փխ. զի
9 b կատարեցից, փխ. արարից
9 b գործեցից, փխ. կատարեցից
10 b եթէ
10 a նորա ոչ ընդունիք.
11 t չիք իսկ
12 aԱ արդարութիւն / b պահպանութիւնն, փխ. արդարութիւնն
12 ad արդարև իսկ / bԱԲt չիք իսկ
13 d զի ան (մի բառի տեղ բաց=զի անշուշտ)
13 ad չիք և (անշարժ)
13 b պահպանութիւն, փխ. արդարութիւն
14 b և կնիք որպէս և առ աբրահամ. զի որպէս
14 ԱԲ զի որ եկն ի ծոցոյն հօր նա է / abd ի ծոցոյ հաւր եկն [a եկ] նայ / t ի ծոցոյն
15 b խորհրդոյ / d ծնաւղին
15 g իւրոյ. իբր ոչ եթէ խնդրել ապաստան և կարաւտ հայրարուն փառացն, այլ զի լուիցեն արարածք և հաստատեսցին յորդի. և ոչ եթէ իբր կարաւտ որ ՙա։ Բոլորը abcdԱԲt չիք իբր ոչ եթէ խնդրել—հաստատեսցին յորդի։ ց-ի ասելի ուճեցածը տես պարբ. 425
15 d իբր

կարօտ որ առ նա զշնորհս Հոգւոյն, այլ ինքն միակամ, միաշունչ, միախորհ ընդ Հօր և ընդ Հոգւոյն. զի ինքն է բաշխիչ շնորհաց Հոգւոյն սրբոյ: Զի Հայր սիրէ զՈրդի իւր, և ամենայն հաստատեալքն Հօր՝ Որդւով. և որ Հօրն՝ նոյն և Որդւոյ. և որպէս Հայր՝ նոյնպէս և Որդի. և ամենայն շնորհք Հոգւոյն յՈրդւոյ բաշխին: Եւ «Որ հաւատայ յՈրդի՝ ունի զկեանսն յաւիտենականս. որ թերահաւատէ յՈրդւոյ՝ ոչ տեսանէ զկեանսն յաւիտենից»:

444 Վկայէ Յովհաննէս, ասէ. «Զորմէ ասէին, սա է միածին Որդին Աստուծոյ. ես տեսի և վկայեմ, թէ սա է որ բառնայ զմեղս աշխարհի»: Սա է ժառանգ այգւոյն, և Տէր գայ զօրութեամբ, և բազուկն հզօր տէրութեամբ իւրով. զի բազուկ հզօր Հօր սա է, և տէրութիւն իւր առ իւր ունի, թէպէտ և կամօք երևեցաւ խոնարհութեամբ:

445 «Ահաւասիկ, ասէ, վարձք հատուցման իւրոյ ընդ իւր». և ամենայնի նա է հատուցանող, «և գործք իւրաքանչիւր առաջի նորա». ըստ այնմ, թէ «Ի միտ առնու զամենայն գործս նոցա»: «Իբրև հովիւ

7 Յովհ. Գ, 36. / 9 Յովհ. Ա, 29. / 13, 14 Ես. Խ, 10. / 15 Սաղմ. ԼԲ, 15.

1 b զկարաւտ
1 t էառ / b շնորհսն
1 ad չիք միաշունչ
2 ad միախորհ միաբան ընդ / ԱԲ մի-ախորհ / b միակամ, միախորհուրդ, միաշունչ ընդ / g ինքն միախոհ, ... միաշունչ / t միախոհ
2 d հաւրն
2 adԱԲ հոգւոյն, ինքն բաշխիչ շնորհաց հոգւոյն սրբոյ / b և ընդ հոգւոյն սրբոյ. և ինքն բաշխիչ հոգւոյն սրբոյ շնորհաց. զի / t բաշխիչ խորհրդոց
2 g չիք զի / g չիք է
2 g չիք խորհրդոց
2 g հոգւոյն սրբոյ. և որ հաւատայ ի նա ընդունի զկեանս յաւիտենից ի քրիստոս յիսուս ի տէր մեր... Վերջ:
3 adԱԲ զորդւի [ԱԲ զորդի իւր], և ամենայն ինչ [dԱԲ չիք ինչ] հաստատեալք [ԱԲ հաստատեալքն] հաւր որդւովն է. և / b և ամենայն հաստատեալ հաւր որդւոյն են, և որ հաւր / v և ամենայն հաւատացեալքն հօր որդւովն / t չիք ամենայն
4 ad հաւրն և / ԱԲ հօր
4 abdԱԲ որպէս հայր / t հայրն
4 ԱԲ չիք և (որդի)
5 Ա շնորհ / bԱԲt չիք և
5 b ի յորդւոյ ընդունի զկեանսն / d զկեանս
6 abdԱԲ յաւիտենից
6 abd չիք որ թերահաւատէ—յաւիտե-նից
6 ԱԲ ոչ տեսանէ զյաւիտենական կեանսն
8 abdԱԲ *յոհվաննես [ԱԲ և յովաննէս, d յոհաննէս], սայ ե, ասե, [ԱԲ չիք ասէ], զորմե եսն ասեի. սայ է [b ասէ, փխ. սա է]
9 abd տեսի ասէ և
9 abdԱԲ որ եկն բառնալ
9 d յաշխարհէ
10 ad սայ է ասէ ժառանգ
10 abd գա [b գայ] ասե
10 bԱԲ զօրութեամբ իւրով և [b զի, փխ. և] բազուկ
11 d զտէրութեամբ
11 Ա չիք տէրութեամբ իւրով, զի բա-զուկ հզօր
11 b հզաւր ասէ և զտէրութիւնն առ իւր ունի, թէպէտ և
11 d հաւր է սայ է / ԱԲ սայ է հաւրն, և
11 ad և տէրութիւն
12 ad չիք ունի
12 ԱԲ և խոնարհութեամբ
13 a ահավասիկ (յաճ.) / bdԱԲ ահա-ւասիկ
13 bԱԲ չիք ասէ
13 b վարձ
13 Ա չիք հատուցման—նա է (տ. 14)
13 ad չիք իւրոյ
13 Բ հատուցմանն ընդ իւր
14 ad չիք է
14 ԱԲ զգործս
15 ԱԲ չիք թէ
15 abd թե որ ի միտ



մի հովուեսցէ զխաշինս իւր»: Որ և ի մէջ իսկ անցեալ կենարարն ասէ, թէ «Ես եմ հովիւն քաջ. հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ խաշին իւրոյ», «Եւ ի բազուկս իւր ժողովեսցէ զգառինս իւր, և ի գիրկս իւր ընկալցի զնոսա»:

446 Որ և կենարարն եկեալ յայտ առնէր, յառնուլն ի ժողովելն զմանկտին ի վերայ աստուածական բազկացն. և օրինակեալ ամենեցուն, «Եթէ ոչ դարձջիք և լինիջիք իբրև զմանուկս զայս՝ ոչ կարէք մտանել յարքայութիւնն Աստուծոյ»: Նորոգել հրամայէ, և մերկանալ զհին մարդկութիւնս ի ձեռն մկրտութեան աւազանին: Զի թէպէտ և կարի որ թմբրեալ ծանրացեալ իցէ՝ ծանրակիր մեղօքն խաւարութեան յղացեալ, որպէս ասէն. «Ահաւասիկ երկնեաց զանօրէնութիւն, յղացաւ զցաւս և ծնաւ զանիրաւութիւն». սակայն բացեալ զգրունս ապաշխարութեան՝ ի մէջ մեր եկեալ կայ կենարարն, աղաղակէ և ասէ. «Եկայք առ իս, ամենայն վաստակեալք և աշխատեալք և որք ունիք բեռինս ծանունս, և ես հանգուցանեմ զձեզ. և առէք զլուծ իմ ի ձեզ և ուսարուք յինէն, զի հեզ եմ, հանդարտ և խոնարհ սրտիւ, և գտջիք հանգիստ անձանց ձերոց. զի լուծ իմ քաղցր է, և բեռն իմ փոքրոգի»:

447 Իսկ եթէ հարցցէ ոք, թէ ով իցէ որ այսպէս մխիթար լինիցի

1 Ես. Խ, 11. / 3 Յովհ. Ժ, 11. / 4 Ես. Խ, 11 / 8 Մատթ. ԺԸ, 3. Մարկ. Ժ, 15. / 12 Սաղմ. Է, 15 / 17 Մատթ. ԺԱ, 29—30.

1 ad հովեսցե
1 b չիք որ
1 bԱԲ և ի մէջ / adt չիք և
1 b չիք ասէ
2 adԱԲ չիք թէ
2 t ես եմ հովիւ քաջ / b և հովիւ քաջ
2 abd զանձն իւր դնէ ի վերա ոչխա-րաց [d խաշին] իւրոյ [b իւրոց] / ԱԲ հովիւն քաջ. հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ / t դնէ զանձն իւր
3 a չիք իւր (ընկալցի)
5 ԱԲ որ և / abdt չիք և
5 d առնէ
5 ad յառնուլն ի ժողովելն / bԱԲt առնուլ ժողովել
6 ԱԲ աստուածեղէն [Ա նախապէս աստուածեղէն ակամ]
6 d բազկացն յաւբինակեալ
6 ԱԲ և օրինակ եա ամենեցուն
7 bԱԲ եթէ / adt թէ
7 d զմանկունս / b զմանկտիդ զայդ
8 bԱ յարքայութիւն / d արքայութիւն
8 b նորոգեալ
8 ad և մերկանալ զհնութիւն ի ձեռն / bԱԲ և մերկանալ զհին մարդկու-թիւնս ի ձեռն / t հրամայէ և մեր-կանալ հրամայէ զհին մարդկութիւնն ի ձեռն
9 aԱԲ թէպէտ և / bdt չիք և
10 a թմբրեալ / d թմբրրեալ
10 b և ծանրացեալ
10 b մեղաւն
11 a որպես և ասեն
11 d ասէն / ԱԲt ասէ / b չիք ասէն
11 abԱԲ յղացաւ / dt յղացեալ
11 bd ցաւս
12 bd և ծնաւ զանաւրէնութիւն, սակայն
12 adԲ ապաշխարութեանն
13 ԱԲ ի մէջ մեր եկեալ կայ կենարարն աղաղակէ և / b ի մէջ եկաց կենա-րարն մեր և սկսեալ աղաղակէ, ասէ / ad չիք մեր, եկեալ / t ի մէջ կայ կենարարն մեր, եկեալ աղաղակէ և
14 ab ամենայն աշխատեալք և վաս-տակեալք և որք
14 d չիք և (որք)
14 abd բեռինս / ԱԲt զբեռինս
15 ԱԲ չիք և (առէք)
16 ab հանդարտ
17 ad *փոքրոգի է
18 ԱԲ իսկ եթէ ոք հարցանէ, ով իցէ որ մխիթար / bt հարցանէ. չիք եթէ / ad չիք եթէ հարցցէ
18 b ով այն իցէ որ մխիթար այսպիսի
18 a ով է որ այնպէս
18 abd լինիցի / ԱԲt լինի

յղեացն ծանրացելոց՝ լուիցէ Եսայեայ մարգարէութեանն՝ ով այն իցէ, ասէ. «Ո՞ չափեաց ափով իւրով զջուրս ամենայն, կամ ո՞վ չափեաց զերկինս թզաւ իւրով և զերկիր ամենայն բլաւ իւրով. ո՞վ եդ զլերինս ի կշիռս, և բարձ զդաշտս կշռորդօք. ո՞վ գիտաց զմիտս Տեառն, կամ ո՞վ եղև նմա խորհրդակից»: Որ ի հօրէ ուսաւ զվճիռ դատաստանին՝ նա եկեալ մարդ լեալ քարոզէ աշխարհի, խառնեալ սիրով իւրով զամենեսեան յԱստուածութիւնն: Եւ այսուհետև եկեալ լոյսն, ի մէջ անցեալ՝ «լուսաւոր առնել զամենայն մարդ որ գալոց է յաշխարհ»՝ քարոզէր և ասէր. «Ապաշխարեցէք, զի մերձեալ է արքայութիւնն Աստուծոյ»: կատարեալ են ժամանակք. հաւատացէք յաւետարանն:

448 Ծ. Արդ՝ իբրև անցանէր առ ծովեզերբն՝ տեսանէ զՊետրոս և զԱնդրէաս և զՅակովբոս և զՅովհաննէս, և կոչեաց զնոսա ի ձկնորսութենէ անտի. որ անդէն վաղվաղակի թողուն զհայրն իւրեանց նաւաւն հանդերձ և երթան զհետ նորա: Եւ զբազումս յայլոց ի պէսպէս զրօսանաց կոչեալ՝ աշակերտս երկոտասանս և առաքեալս անուանեաց. զորս ուսուցանէ ազատանալ յամենայն զբօսանաց. որ զհետ նորա շրջէին, արժանի եղեալ աստուածագործ աւանդութեան խորհրդոյն:

449 Որ այնուհետև մարդասէրն Քրիստոս ի մէջ անցուցեալ զամենակար բժշկարանն, բժշկել զամենայն ախտս և զչարչարանս. և զյառաջաձայն սրբոց մարգարէիցն զգուշակումն ելից, ի մէջ ունելով

5 Ես. Խ, 12—13. / 8 Յովհ. Ա, 9. / 9 Մատթ. Գ, 2.

1 d ծանրացելոցն
1 d եսայեայ
1 Ա մարգարէութեան կամ ով այն իցէ որ ասէ / t ով այն իցէ. ասէ. ո՞վ չափեաց / abdԱԲ ո՞ չափեաց
2 b ամենայն և զերկինս
2 adԱԲ կամ ո՞
3 a զլերինս, փխ. զերկինս
3 ad չիք իւրով (և) / a ո՞ եդ
4 bt եբարձ / ab կշռորդովք
4 ad ո՞ գիտաց
4 bdԱԲ զիմաստութիւն [b զիմաստութիւնս], փխ. զմիտս
4 d ո՞ եղև
5 d յուսաւ / a զվճիռ
6 d լեեալ
6 ԱԲ լեալ և քարոզեալ աշխարհի և խառնեալ / b մարդ եղեալ և քարոզ աշխարհի / a խառնել
6 b սիրովն
6 d զամենեսեսին
7 b ի յաստուածութիւնն
7 bd և այնուհետև
7 b լոյսն եկեալ
8 ad գալոց է / bԱԲt գալոց էր
9 ԱԲ թէ ապաշխարեցէք
9 bdԱ արքայութիւն
10 b ամենայնք, փխ. ժամանակք
11 a երեեցաւ, փխ. անցանէր
11 ԱԲ առ ծովեզերբն միում, տեսանէր / abd տեսանէր / t առ ծովեզերբ
12 ad չիք և (զյակովբոս)
12 abdԱԲ կոչէր
13 bԱԲ որք [b որ] անդէն իսկ
13 adԱԲ թողուն / bt թողին
13 abdԱԲ նաւաւն / t նաւովն
14 b երթային / ԱԲ զբօսանաց
15 b կոչեցեալ
15 ad չիք կոչեալ—յամենայն զբօսանաց
15 Ա զաշակերտս
15 b * երկոտասան առաքեալս անուանէ, զոր
17 abdԱԲ եղեն
17 t աւանդութեանն
18 ԱԲ որոյ
19 abdԱԲ զամենայն ախտս / t զախտս չիք զամենայն
20 a յառաջաձայնս / Ա զյառաջաձայնս / dԲ զառաջաձայնս
20 ad մարգարէից
20 b մարգարէիցն զգուշակումն ելից և ի մէջ ունելով զբանն որ գոչէ / adԱԲt չիք զգուշակումն ելից
20 adԱԲt ունել



զբանն որ գոչէ. «Նա զհիւանդութիւնս մեր բարձէ». և զնոցուն բանս արդարացուցեալ, որպէս ասէն, թէ «Արդարացուցանէ զբանս ծառայից իւրոց մարգարէից»:

450 Եւ սկսնու այնուհետև զառակսն անցուցանել, թէ «Ընդ ամենայն տեղիս ի ձեռն Հոգւոյն ճշմարտութեան երկիր պագցեն Հօր, զի Հայր զայնպիսի երկրպագուս խնդրէ». և թէ «Զողորմութիւն կամիմ, քան զպատարագս»: Եւ եթէ Ես եմ հօրորդին, զի Հայր ինձ վկայէ հոգւովն հանդերձ ճշմարտութեամբ. և թէ Մովսէս ձեզ յառաջագոյն վասն իմ գրեաց. և Յակոբ վասն իմ ասէր ցՅուդա, թէ «Մի պակասեսցէ իշխան Յուդայ և մի պետ յերանաց նորա, մինչև եկեսցէ այն՝ որոյ իւրն է թագաւորութիւն. քանզի նա է յոյս հեթանոսաց»:

451 Եւ թէ՝ մարգարէքն ամենայն վասն իմ գրեցին, առեալ յիմէ առաքչէն զգիտութիւն. և յայտ արարեալ նոցա, թէ իմ է այգին, և դուք էք մշակքն. և ես եկի, զի ես եմ ժառանգ այգւոյն. եկի խնդրել զպտուղ այգւոյն զի առից. որպէս առաքեաց զիս Հայր իմ՝ և ես եկի կատարել զկամս Հօր իմոյ: Եւ թէ՝ եկի կատարել զխոստացեալ աւետիսն Աբրահամու, զի աւետեօքն կեցցէ զաւակն Աբրահամեան, և զաւակն Աբրահամու նոցա ծանօթ լիցի: Իսկ նորա միանգամայն զճշմարտագոյնն

1 Մատթ. Ը, 17. Ես. ԾԳ, 4. / 3 Ես. Ծ, 8. / 6 Յովհ. Դ, 23. / 7 Ովս. Զ, 6. Մատթ. Թ, 13. ԺԲ, 7. / 11 Ծննդ. ԽԹ, 10.

1 adt զբանս
1 ad գոչէն, նաև զհիւանդութիւնս
1 b բանեայ
1 a զնոցին / b զբանսն
2 b որպէս և
2 bԱԲ թէ որ
4 adԱԲ չիք և
4 a սկսանէ / ԱԲt սկսնու
4 b և զառակս անցուցեալ սկսանի այնուհետև ուսուցանել, թէ / ԱԲ և զառակսն / adԱԲ անցուցեալ
5 ԱԲ երկիր պագանել
6 a այնպիսի
6 b եթէ
7 ad զպատարագ
7 ad և թէ ես եմ հաւրորդւքն / միւսն. հայր որդին
7 bԱԲ զի հայր իսկ ինձ
8 Ա ճշմարտութեան / ad չիք ճշմարտութեամբ
8 b եթէ, փխ. և թէ
8 ԱԲ յառաջագոյն իսկ
8 b գրեաց յառաջագոյն վասն իմ. և
9 ԱԲ ասէր զ յուդայէ
9 a չիք թէ
10 a ի յուդա
10 t չիք մի
10 a պետ յետ յերանաց
11 d յորոյ
11 t թագաւորութիւնն
11 b լոյս, փխ. յոյս
13 Բ զգիտութիւնն
13 a չիք և յայտ արարեալ—ուստի զայ կամ (եր. 225, տ. 9)
Այստեղ a-ի մեջ մի թերթ պատառուած է, որից ննտերը են երևում միայն: Այս պակասը լրացնում ենք c-ից: c-ն ընդօրինակուած է a-ից՝ երբ դեռ a-ում այս թերթը չէր պատառուած:
13 cԱԲ այգին / bdt այգիս
14 bd մշակք
14 bd այգւոյս
14 d զի եկի / b և եկի (խնդրել)
15 b զպտուղ յայգւոյս
16 ԱԲ զկամս նորա. և / b իմոյ. և եկի կատարել
16 d աւետիս / c զաւետիսն
17 cdԱԲ և զի
17 c աւետեաւք
17 b զի աւետիքն կեցցէ
17 cdԱԲt կեցցեն
18 b լիցի / cdԱԲ լինէր
18 cdԱԲ իսկ սորա
18 b զճշմարտագոյնս / c զճշմարտագոյնն. տողամիջում աւելացրած՝ ս=զճշմարտագոյնսն, ինչպէս որ ունին ԱԲ

առաջի եղեալ, եթէ «Յառաջ քան զլինելն Աբրահամու եմ ես»։ Եւ անդր ի վեր այնուհետև հայեցուցեալ, որպէս և ասէն իսկ, հարցանելով առ ի նոցանէ զմարգարէականն, թէ «Ո՞րպէս ասէք զՔրիստոս որդի Դաւթի, զորմէ Դաւիթ իսկ նշանակեաց Հոգւովն սրբով, թէ Ասաց Տէր ցՏէր իմ, Նիստ ընդ աջմէ իմմէ. և արդ՝ զիա՞րդ իցէ որդի Դաւթի»։

452 Նոյնպէս և ամենայն յայտնութեամբք և առակօք յանդիմանէր և խայտառակէր զկեղծաւորութիւն և զամբարշտութիւն և զանօրէնութիւն նոցա։ Իսկ նոցա, խլացելոցն և կուրացելոց ի ճշմարտութենէն, նախանձեալ՝ ելին, ի չարութիւն դառնութեան իւրեանց, կորուսանել զանձինս իւրեանց։ Իսկ նա եկեալ՝ լինէր բժիշկ մարդասիրութեամբ իւրով, զկոյրս լուսաւորել, զկաղս գնացուցանել, զբորոտս սրբել, փրկել զամենայն ըմբռնեալսն ի սատանայէ. և զանդամալոյծս յարուցանել, և զխուլս բանալ, և համերց տալ խօսել, և զմեռեալս յարուցանել, զսատանայ կոխան տայր հաւատացելոց իւրոց, և խոստանայր երթալ պատրաստել օթևանս յարքայութեանն երկնից. և զինքն առաջի օրինակ ամենայնի, համբերել ճգնութեանց առաքինութեամբ։

453 Որ դարձոյց զջուրն ի գինի, զի յայտնի լիցի Աստուածութիւն նորա, թէ նոյն է որ յոչինչէն արար զջուրն ի բնութիւն ջրոյ՝ նոյն և զջուրն ի գինի դարձոյց, որպէս և կամեցաւ։ Եւ այն որ վասն

1 Յովհ. Ը, 58. / 5. Մատթ. ԻԲ, 41—45. Մարկ. ԺԲ, 35—37. Ղուկ. Ի, 41—44. Սաղմ. ՃԹ, 1

1 ԱԲ թէ / t և անդէն ի վեր
1 b և արդ ի վեր / cd և անդր ի վեր
2 c հայեցուցեալ այնուհետև
2 ԱԲ և այնուհետև անդր ի վեր հայեցուցեալ, որպէս և ասէ իսկ / b որպէս և ասէն իսկ / cdt որպէս և էն իսկ
2 b չիք առ
3 ԱԲ ասէք դուք զՔրիստոս / cd ասէք [c տողամիջում ավելացված է դուք, ինչպես ունին ԱԲ] զՔրիստոս / b ասէք է Քրիստոս որդին / t ասեմք զՔրիստոս
3 bcdԱԲ Դաւթի / t Դաւթայ
4 b Դաւիթն իսկ / b եթէ
4 b տէր տեառն իմոյ, Նիստ
5 c իմ յուսանցքում
5 cd չիք արդ
6 cdԱԲ չիք և (ամենայն)
6 cd յայտնութեամբքն և առակաւքն
6 bԱԲ յանդիմանէ և խայտառակէ
7 t զանօրէնութիւնս
8 b կուրացելոց և խլացելոց / cd խլացելոցն / ԱԲt խլացելոց
9 bt նախանձէին ի չարութիւն / ԱԲ նախանձեալ ի չարութիւն / cd նախանձեալ ելին ի չարութիւն
9 ԱԲ դառնութեան կորուսանել
9 b չիք կորուսանել զանձինս իւրեանց
10 d եկեալ, փխ. եկեալ
10 b բժիշկ լինէր
10 bԱԲt մարդասիրութեամբն
11 b գնացուցանէր
11 b սրբէր, փրկէր
12 cd նեղեալսն [d նեղեալս], t կորուսեալս, b զրկեալս, փխ. ըմբռնեալսն
13 cdԱԲ չիք և (զխուլս)
13 b բանայր... խաւսել տայր... յարուցանէր
14 bcdԱԲ և [d չիք և] զսատանայ կոխան տայր հաւատացելոց / t կոխան առնէր հաւատացելոց
14 b խոստացաւ
15 ԱԲ օթևանս պատրաստել
15 b արքայութեան / dԱԲ յարքայութեան
16 cԱԲ ճգնութեանցն / bdt ճգնութեանց
16 cdԱԲ առաքինութեամբ / t առաքինութեամբն / b առաքինութեանց
17 b լինիցի
18 b եթէ / cԱԲ յոչինչէ
18 bd զջուր
19 t չիք և (զջուրն)
19 bcdԱԲ և նոյն [ԱԲ այն] ինքն որ վասն մեղաց [d մեղացն]



մեղացն ցաւս խառնեաց՝ նոյն ինքն եկն զառողջութիւն բաշխել։ Եւ բազումք հաւատացին յանուն նորա, իբրև տեսին զնա և զնշանսն զոր առնէր. այլ նա քանզի սրտագէտ էր՝ գիտէր զամենայն խորհուրդս մարդկան, քանզի ծածկագէտ է։

454 ԾԱ. Ապա յետ այսորիկ ուսեալ վճիռ. «Եթէ ոք ոչ ծնցի ի ջրոյ և ի Հոգւոյ՝ ոչ կարէ մտանել յարքայութիւնն Աստուծոյ», և ոչ նորոգեսցի միւսանգամ. զի «Այս, ասէ, որ ի մարմնոյ աստի է ծնեալ՝ մարմին է, իսկ այն որ ի Հոգւոյ անտի է՝ հոգի է. զի Հոգին ուր որ կամի՝ բղխէ. զձայն նորա լսես, այլ ոչ գիտես, ուստի գայ կամ յով երթայ». «Զի ոչ ոք է որ ել յերկինս, բայց որ էջն յերկնից Որդին մարդոյ»։

455 Եւ ասացեալ վասն յառաջագրեր չարչարանացն իւրոց, թէ «Որպէս Մովսէս կախեաց զօձն յանապատին՝ այնպէս կախել պարտ է Որդւոյ մարդոյ. զի որ միանգամ հաւատայցէ ի նա՝ ընկալցի զկեանսն յաւիտենից։ Զի այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ, զի զՈրդին իւր միածին եդ ի վերայ նորա, զի ամենայն որ հաւատասցէ ի նա՝ մի կորիցէ, այլ ընկալցի զկեանսն յաւիտենականս։ Զի ոչ առաքեաց Աստուած զՈրդի իւր յաշխարհ, զի պատժեսցէ զաշխարհ, այլ զի փրկեսցէ նա զաշխարհ։ Որ հաւատայ ի նա՝ ոչ մտանէ ի պատիժս դատապարտութեան. իսկ որ ոչն հաւատայ ի նա՝ աստստին իսկ դատապարտեալ է. քանզի ոչ հաւատաց յանուն միածնի Որդւոյն Աստուծոյ»։ «Եկն առ իւրսն, և իւրքն

6 Յովհ. Գ, 5. / 11 Յովհ. Գ, 6, 8, 13. / 21 Յովհ. Գ, 14—18.

1 bcԱԲ զառողջութիւնս
2 bcdԱԲ տեսին զնա և զնշանսն / t չիք զնա և
3 d որ գիտէր
4 cdԱԲ էր
5 ԱԲ չիք ապա
5 ԱԲ այնորիկ
5 ԱԲ թէ ոք ոչ ծնցի / bcdt ոչ ոք
6 d յարքայութիւն
7 b զի ասէ որ / t զի այս որ / c զի այս է ասէ որ ի մարմնի աստ / d զի այս ասէ որ մարմնոյ աստի է ծնեալ
7 bcԱԲt ծնեալ է
8 b ի մարմնոյ է, փխ. մարմին է
8 c անտի ծնեալ է հոգի է
9 b ուր և
9 cdԱԲ և բղխէ
9 c զձայնն
9 ԱԲ յո երթայ / abd յոյ երթա
10 ԱԲt չիք է որ
10 adԱԲ բայց եթե որ էջն / b բայց եթէ որդի մարդոյ որ էջն յերկնից. և / ad որդի մարդւոյ որ են [d էն] յերկինս. և
10 ԱԲ որդի
12 b յառաջ, փխ. յառաջագրեր
13 ad յանապատի
13 bd այսպէս
13 ԱԲ կախիլ / ad պարտ է կախել
14 adԱԲ հաւատասցէ / b հաւատասցին
14 b ընկալցին զկեանս
15 abd այսպէս
15 ԱԲ զաշխարհս
15 ad զաշխարհ, մինչև զորդւին
16 b եդ / adԱԲt ետ
16 t հաւատայ
17 b զկեանս
17 adԱԲ յաւիտենից
17 b զորդին
18 abԱԲ պատժեսցի աշխարհ
18 b փառաւորեսցէ, փխ. փրկեսցէ
18 a փրկեսցի աշխարհ նովաւ՝ ո
19 ԱԲ ոչ մտցէ / b մտանէ նա
19 ad իսկ որ ոչ / t չիք իսկ / bԱԲ ես, փխ. իսկ
20 a անդրստին / d անդրստին / ԱԲ աստէն / b արդէն, փխ. աստստին
20 ad հաւատաց յանուն / bԱԲt հաւատացին նորա յանուն
21 bd միածնին
21 b Աստուծոյ. առ իւրսն եկն, և

զնա ոչ ընկալան»։ Այն որ ի սկզբանէ ժամանակացն եղեն երախայրիք և խնամակալութիւնքն և պատուիրանքն, ուստի և մարմնովն իսկ երևեցաւ՝ յանձանց իսկ մերժեցին զնա։

456 «Եւ այս են դատաստանքն, զի լոյս եկն յաշխարհ, և մարդիկ սիրեցին զխաւար առաւել քան զլոյս, զի էին գործք իւրեանց չարութեամբ։ Զի ամենայն որ զչար գործէ՝ զչար գայցէ. և ատեայ նա զլոյսն, և ոչ գայ ի լոյսն, զի մի յանդիմանեսցին գործք նորա։ Իսկ որ առնէ և գործէ զճշմարտութիւն՝ գայ նա ի լոյսն, զի յայտնի լինիցին գործք նորա, թէ Աստուծով գործեցան»։ Եւ Աստուածորդւոյն ուսուցեալ ամենեցուն զճանապարհս արդարութեան. իսկ խաւարասէր գործոց մարդկան անօրինաց Հրէից սկսեալ կեղծաւորել, և խնդրեալ սպանանել զնա մշակաց այգւոյն, և ոչ համարեալք արժանի զանձինս իւրեանց կենացն յաւիտենականաց, իսկ այնպիսեացն գեհեան խոստացաւ, ասելով վայ ի վերայ նոցա։

457 ԾԲ. Իսկ բարերարի Տեառնն ժողովեալ զաշակերտան երկոտասան, զորս և առաքեալս անուանեաց, և դարձեալ եօթանասուն և երկուս. խրատեալ և վարժեալ զնոսա Աստուածութեանն խրատուն, և վկայ կացուցեալ և տացեալ զնոսա, և սիրելիս իւր և բարեկամս

1 Յովհ. Ա, 11. / 9 Յովհ. Գ, 19—21.

1 abd ժամանակացն էր [d է] երախայրքն [b երախայրք] / ԱB եղեն երախայրքն / t երախայրքն եղեն
2 adԱB խնամակալութիւնքն / t խնամակալութիւնք / b խնամակալուք
2 b պատուիրանք
2 t մարմնով
3 adԱB չիք իսկ
3 b յանձանց իւրեանց մերժեցին
4 ԱB և այս իսկ են
4 Bt դատաստանք
5 ԱB չարութեան
6 t ամենայն որ որ
6 bԱBt և չար գայցէ / ad զչար գայցէ, և ատէ [d ատեա]
7 adԱB զա նա [aԱB չիք նա] առ լոյսն
7 b չիք իսկ որ առնէ—գործք նորա (8. 9)
8 bt զճշմարտութիւնն
8 ԱB գայ առ լոյսն
8 adԱB լիցին
9 bԱB թէ / adt զի
9 d գործեցաւ
9 abdԱB աստուածորդւոյն / t աստուածորդին
10 b իսկ խաւար ասելով որ գործոցս / a գործ
11 bdԱB ի հրէից
11 ԱB սկսան կեղծաւորել, որ և խնդրեցին սպանանել / b կեղծաւորել, որ խնդրէին զնա սպանանել մշակաց
ad որոց և խնդրել [d խնդրեալ]
12 ԱB մշակք այգւոյն, ոչ համարեալ
12 a արժանիս համարեալ / bd համարեալ
12 d չիք արժանի
12 ԱB իւրեանց յաւիտենից կենացն, իսկ այնպիսեացն գեհեն / ad յաւիտենականաց, իսկ այնպիսեացն գեհեն խոստացեալ [d խոստացեալ] ասելով հանդերձ վայ
13 t յաւիտենից
13 t չիք իսկ
14 ԱBt վայ վայ
15 ab բարերարին
15 abdԱB տեառն
15 d ժողովել / b մերոյ ժողովեալ
15 ad զերկոտասան [d զերկոտասանսն] ԱB երկոտասան / bt երկոտասանսն
16 t չիք և
16 Ա առաքեալսն
16 a անուանել / dԱB անուանեալ
16 a եօթանասուն
17 Աt աստուածութեան
17 ԱB խրատու / b խրատու
18 d զսիրելիս / ԱB սիրելի
18 t չիք իւր
18 ԱB բարեկամ



անուանեալ, թէ «Ես ձեզ ասեմ, սիրելեաց իմոց. մի երկնչիք յայնցանէ, որ զմարմինն սպանանեն, և զոգին ոչ կարեն սպանանել»։ Եւ թէ «Ես զձեզ ինձ բարեկամս գիտեմ». և թէ «Զոր միանգամ ասաց ինձ Հայր իմ և եցոյց՝ ես ձեզ ցուցի»։ Եւ յայտնեալ նոցա զելսն առ ի Հօրէ և զդարձն ի նոյն, ասելովն, թէ «Ելի ի Հօրէ և եկի յաշխարհ, և դարձեալ թողում զաշխարհ և երթամ առ Հայր»։

458 Ցուցեալ նոցա և զաւետիս Հոգւոյն սրբոյ առաքելոյն ի Հօրէ, թէ «Երթամ և առաքեմ զմխիթարիչն, որ եկեալ մխիթարեսցէ զօրբացեալսդ վասն իմ»։ Տես զզուգականութիւնն, տես զմիաւորական զօրութիւնն, տես զէականութիւնն, տես զմիական լիութեանն կամակցութիւն. զի «Եկեալ՝ ասէ, զիմ առեալ լցցէ ձեզ, և նովին ճշմարտութեամբ առաջնորդեսցէ ձեզ, և յանդիմանեսցէ զաշխարհս, զի ոչ հաւատացին յիս, դատեսցի և զկարծեալ իշխան աշխարհիս այսորիկ։ Ճշմարտեսցէ միանգամայն ձեզ վասն իմ, զի ի Հօրէ առաքի. որոյ զալուստն՝ զերթալոյն իմոյ առ Հայր վկայէ. նա եկեալ առաջնորդեսցէ ձեզ ամենայն ճշմարտութեամբ»։

459 ԾԳ. Ապա առնու այնուհետև զյառաջագիր խորհուրդ չարչարանացն Յիսուս՝ կատարել յերուսաղէմ. վասն որոյ բազում անգամ զուշակեաց, թէ մեռանելոց է և յերիր աւուր յառնելոց։

2 Ղուկ. ԺԲ, 4. Մատթ. Ժ, 28. / 3 Յովհ. ԺԵ, 15. / 6 Յովհ. ԺԶ, 28. / 9 Հմմտ. Յովհ. ԺԶ, 7. ԺԵ, 26. / 16 Յովհ. ԺԶ, 8—13.

1 b եթէ / ԱB չիք ես
1 abd թէ մի / ԱBt յայնմանէ
2 ad որ սպանանեն զմարմին / t զմարմին
2 adt զոգի / ad սպանել
2 bt և եթէ
3 ԱBt ինձ զձեզ / ad չիք ինձ
3 b և եթէ որ / ԱB և զոր
3 ad հայր իմ և եցոյց, ես ձեզ ցուցից [d ցուցի]. յայտնեալ նոցա զելսն / ԱB հայր և ես ձեզ ցուցի. յայտնեալ զելսն առ ի հօրէ / b հայր և ուսոյց և ես ձեզ ասացի, յայտնեալ նոցա / t չիք և եցոյց
5 b եթէ / adԱB չիք թէ
5 adԱB չիք և (դարձեալ)
5 b դարձեալ եթէ
7 b և ուսեալ նոցա զաւետիս
7 aԱB առաքելոյ
8 aԱB եթէ
8 b առաքեմ առ ձեզ
8 b մխիթարէ զձեզ զօրացեալս / a զօրացեալսն / d զօրացեալս
9 Ա զզուգականութիւն
9 bdԱB զաւրութիւնն [Ա զօրութիւն], տես զէականութիւնն [Ա զէականութիւն], տես զմիական [b զմիակամ] / at չիք տես զէականութիւնն
10 Ա լիութիւն կամակցութեան / a լիութեան / B կամակցութիւնն / b զկամակցութիւնն
11 abdԱB լցցէ ձեզ / t չիք ձեզ
12 bԱB զաշխարհ / b հաւատան
13 ad դատեսցէ / bԱBt դատեսցի
13 b կարծեալ
13 abdԱB ձեզ միանգամայն [b միանգամ]
14 b չիք վասն իմ
14 d որոյն
17 Սկսեալ է g, թղ. 361ա. «Ի մեծի աւուր ուրբաթին խաչելութեանն տեառն մերոյ յիսուսի քրիստոսի. ի Վարդապետութենէ սրբոյն գրիգորի հաոց լուսաւորչի.—Ապա առնու․․»
17 aBg զառաջագիր
17 ԱB զխորհուրդ չարչարանացն կատարել յիսուս [Ա յս (պաs.), ուղղուած Եմ (պաs.)], վասն որոյ / b յիսուս, զոր կատարեաց և վասն որոյ / ad զյիսուս կատարեալ, վասն որոյ
18 g զնա, փխ. յիսուս
18 g չիք յերուսաղէմ
18 ԱB և բազում
19 abdԱBg զուշակէ / bg եթէ
19 b չիք է / b յառնելոց է

460 Եւ վասն ո՞յր արդեօք գայցէ ի մահն. մի՞թէ պարտական ինչ իցէ մահու. այլ մարգարէն ասէ, թէ «Անօրէնութիւն ինչ ոչ գործեաց, և ոչ գտաւ նենգութիւն ի բերան նորա». զոր և ինքն իսկ ասէր, թէ «Ո՞վ ի ձէնջ յանդիմանիցէ զիս վասն մեղաց»: Իսկ ըստ օրինաց ինչ պարտական մահու. այլ ասէ. «Կատարել եկի զօրէնս». որում և առաքեալ վկայէ, թէ «Կատարած օրինացն Քրիստոս է»: Իսկ ի բնութեանց արդեօք ի հարկէ մեռանիցի. այլ ասէ, թէ «Անձամբ իմով դնեմ զանձն իմ, և ոչ ոք հանէ յինէն: Անձամբ, ասէ, զանձն իմ դնեմ, զի միւսանգամ առից զնա»:

461 Իսկ ընդէ՞ր կամիցի զանձն դնել անպարտականն մահու: «Ես եմ, ասէ, հովիւ քաջ, որ ի վերայ խաշանց իմոց մեռանիմ»: Յորոց խաշանց արդեօք. ի հարթուցելոցն, ի փախուցելոցն, ի գազանակուր եղելոցն, զորոց յառաջագոյն մարգարէն ասաց, թէ «Ամենեքին իբրև ոչխարք մոլորեալք, և այր ամենայն ի ճանապարհի իւրում մոլորեցաւ, և Տէր մատնեաց զնա ի մեղս մեր, և յանօրէնութեանցն ժողովրդեան իմոյ ի մահ վարեցաւ»:

462 Վասն որոյ քահանայապետ ազգին տիրասպանուաց ակամայ մարգարէացաւ, թէ «Լաւ է մեզ, զի այր մի մեռանիցի ի վերայ ժողովրդեանս, և մի ամենայն ազգս կորիցէ»: Բայց նա ոչ ասէ ի վերայ

3 Ես. ԾԳ, 9. / 4 Յովհ. Ը, 46. / 5 Մատթ, Ե, 17. / 6 Հռովմ. Ժ, 4. / 9 Յովհ. Ժ, 17—18. / 11 Յովհ. Ժ, 11. / 16 Ես. ԾԳ, 6—7. / 19 Յովհ. ԺԱ, 50.

1 adԱB վասն ո՞յր / bt վասն որո՞յ / g վասն է՞ր
1 bd արդեւք (յաճ.)
1 ad ինչ իցէ / t չիք ինչ
1 ԱB պարտական է ինչ մահու, այլ որպէս ասէ մարգարէն, թէ / b պարտական ինչ էր մահու
2 b անաւրէնութիւնս
2 g չիք ինչ
3 abd զոր ինքն իսկ ասէր / gt չիք իսկ
3 b եթէ
4 ab ո՞յ / dg ո՛
4 b ի ձէնջ վասն մեղաց յանդիմանէ զիս. իսկ
5 a կատարեալ
5 ad եկի կատարել / ԱB չիք եկի
6 gt առաքեալն
6 abd և առաքել [bd առաքեալ] իսկ վկայէ
6 b կատարումն
6 b աւրինաց
6 g իսկ ի բռնութենէ արդեւք կամ ի հարկէ
7 abdԱB չիք թէ
8 b չիք անձամբ ասէ զանձն իմ դնեմ / t չիք իմ (դնեմ)
10 b կամիցիս
10 a զանձն իւր դնել
10 Ա անպարտականք / abdB անպարտական
12 b և ի փախուցելոց և ի գազանակուր եղելոցն վասն որոյ մարգարէն ասէ թէ ամենեքեան
13 adԱB զորոց / t զոր
13 ԱB մարգարէն յառաջագոյն ասաց ամենեքեան / adԱB ամենեքեան
14 ԱB չիք և
14 ԱB չիք ամենայն
14 b ի ճանապարհէ
15 ad չիք և (տէր)
15 a յանաւրէնութեան / d յանաւրէնութե կամ յանաւրէնութէ (պաս.) / bԱB յանօրէնութեանց
16 abd չիք իմոյ
16 g ի մահ վերաւորեցաւ
16 b վարեցաւ. յուսանցքում նոյն գրչով վիրաւորեցաւ
17 g չիք վասն որոյ—պարգևէ աշակերտացն (էջ 229, տ. 12)
17 bԱB և քահանայապետ
17 ad տիրասպանուաց / b տիրասպանից / ԱBt տիրասպանաց
18 b եթէ / d մեռցի
19 abdԱB ոչ ասէ [ԱB ասէր] ի վերայ / t չիք ասէ



ազգին միայն, այլ զի և զամենայն որդիսն Աստուծոյ, զցրուեալսն ի բաժանել ազգացն՝ ժողովեսցէ ի մի: Վկայէ և Պաւղոս, թէ «Յայտնեաց Աստուած զսէրն իւր ի մեզ. զի մինչ դեռ մեղաւորքն էաք՝ Քրիստոս վասն մեր մեռաւ». և թէ «Ի ժամանակի ի վերայ ամբարշտաց մեռաւ»:

463 Եւ արդ՝ եկեալ աշակերտօքն ի լեառն Ձիթաստանեաց, զի կատարեսցէ զմարգարէին որ ասէ, թէ «Եկեսցէ հասցէ տէր Աստուած իմ և ամենայն սուրբք ընդ նմա. և կացցեն ոտք նորա յաւուր յայնմիկ ի վերայ լերինն Ձիթենեաց հանդէպ Երուսաղեմի, յարևելից կուսէ»:

464 Եւ ի տօնական աւուրն օրինականաց գայ աշակերտօքն կատարել զօրէնսն, և յայտնել զխորհուրդս հոգևորական տօնին. և յառաջ քան զչարչարանսն՝ զփրկութիւնագործ զմարմին իւր և զարիւն պարգևէ աշակերտացն: Տեսանե՞ս, զի կամաւ և ոչ ի բռնութենէ չարչարի Որդին Աստուծոյ, որ յառաջագոյն քան զչարչարելն ճաշակեալ լինի:

465 Յետ այսորիկ աղօթս առնէ խորհրդիւ ի լերինն առ Հայր. ոչ վասն իւր ինչ զանգիտելոյ, այլ զի ցուցցէ, թէ միակամ ընդ Հօր զառաջի եղեալսն գործիցէ: Վասն որոյ բազում անգամ ասացեալ

4 Հռովմ. Ե, 8, 6. / 8 Զաք. ԺԴ, 4—5.

